10604

# 5-ԱՄՅԱԿԻ ՉՈՐՐՈՐԴ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՏԱՐԻՆ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ




ԿՈՒՍՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ
1932

ЗКСМ5
4-75
24 SEP 2006
1 DEC 2009

ԿՈՍԱՐԵՎ

# 5-ԱՄՅԱԿԻ 4-ՐԴ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՏԱՐԻՆ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Զեկուցում ՀԱՄԼԿՅԵՄ 7-րդ կոնֆերենցիայում)

1008
34445
1822

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ★ 1933

2 MAY 2013



Համ. ԼԿՅԵՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար
ԿՈՍԱՐԵՎ

ԸՆԿԵՐՆԵՐ,

Վլադիմիր Իլյիչը մեր միության 3-րդ համագումարում, խոսելով կոմունիստական դաստիարակության մասին, ասաց, որ այդ անմիտ բան է առանց յերիտասարդ սերնդին բանվորների և գյուղացիների հետ միասին աշխատանքին մասնակից դարձնելու: Յեթե խոսենք այն մասին, թե ինչն էր հատկապես բնորոշում լենինյան կոմյերիտմիությանը հնգամյակի այս 3 և կես տարում, ապա մնում է ասել, որ այդ ժամանակամիջոցում ավելի, քան յերբևե, Խորհրդային Միության հասուն բանվորների և գյուղացիների հետ մեկտեղ, մեր կուսակցության ղեկավարությամբ աշխատել ենք ակտիվ կերպով սոցիալիստական շինարարության բոլոր կարևորագույն բնագավառներում:

Մեր աշխատանքի հիմնական սկզբունքը յեղել է և կա միատեղ աշխատանքը հասուն բանվորների և գյուղացիների հետ, կոնկրետ, ամենօրյա գործերի կապակցումը միջազգային պրոլետարական հեղափոխության ընդհանուր խնդիրների հետ: Մենք մեր մեջ մշակել ու կռել ենք բոլշևիկի հատկությունները—գործնականություն, գործարարություն՝ միացված մեր վողջ աշխատանքի հեղափոխական թափի և տեսական իմաստավորման հետ: Ընկ. Լենինը, այն հարցը վորոշելիս, թե ինչպես աշխատել, իր, «Պարենհարկի մասին» գրքույկի կոնսպեկտի վրա գրում էր.—«Ուժերի հաշվառում: Զգաստություն և կատաղի կրքոտություն»: (ԼԵՆԻՆ, հատոր 26-րդ, էջ 316):

# ԵՐԿՈՒ ՀՆԳԱՄՅԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

Տվյալ մոմենտի առանձնահատկությունները կայանում են նրանում, որ մենք գտնվում ենք երկու հնգամյակների սահմանագլխում: Մեր երկիրը վերափոխված է: Մենք ծավալել ենք ծանր արդյունաբերությունը, հսկայական թափ ենք հաղորդել թեթև արդյունաբերությանը, ավելի և ավելի ենք ծավալում և ամրացնում սոցիալիստական հողագործությունը, բարձրացրել ենք մեր երկրի բանվորների և գյուղացիների նյութական և կուլտուրական մակարդակը և գտնվում ենք ամբողջ փրոնտով սոցիալիստական հարձակման ժամանակաշրջանում: Մեր Խորհրդային Միությունն անվերադարձ կերպով հաստատվել, ամրացել է սոցիալիստական ճանապարհի վրա: Հենց այդ հանգամանքն է ահա, որ որոշում է և պետք է որոշի մեր ամբողջ աշխատանքը:

Կոմյերիտմիության խնդիրը, նրա աշխատանքի հիմնական առանձնահատկությունը կայանում է և հետագայում էլ կայանալու է նրանում, որպեսզի կադրեր պատրաստել սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառների համար, լինել կուսակցության ամենաակտիվ օգնականը՝ ամբողջ փրոնտով ծավալվող հարձակման գործում: Այդ տեսակետից այնպիսի հարցերը, ինչպես, օրինակ, ինչ կերպ մաքսիմալ չափով սպասարկել սոցիալիստական արտադրությանը, ինչ կերպ լավագույն ձևով և առավել բազմակողմանիորեն սպասարկել մեր սոցիալիստական սպառողին, հանդես բերել մաքսիմում հոգատարություն աշխատավորության կարիքների նկատմամբ,—դրանք վճռական հարցեր են մեզ համար:

Եվ հենց նրա համար էլ, որպեսզի է՛լ ավելի արագացնենք մեր շարժումն ամբողջ փրոնտով դեպի առաջ, մենք ասում ենք, որ մեր աշխատանքի որակը հանդիսանում է.—կուլտուրապես ապրել, աշխատել բարձր արտադրողականությամբ: Մեզ մոտ միշտ այդպես չի լինում: Մենք պետք է սովորենք աշխատել առանց ընդհատումների, ա-



ռանց պարտիզանականության,—այդ բոլոր ամենավատ իմաստով—ահա ինչին է, որին մենք հիմնականում պետք է հասնենք մեր հարվածայնության, մեր սոցիալիստական մրցության մեջ: Կարողանալ աշխատել, հանդես բերել լենինյան ոճ յուրաքանչյուր կոմյերիտականի աշխատանքում, յուրաքանչյուր խմբակի աշխատանքում, ստեղծել ընկերական բգ-գասա վերաբերմունք միության մեջ, իդեականորեն, քաղաքականորեն դաստիարակել երիտասարդության, կոմյերիտականների, պիոներների և բոլոր երեխաների մասսաներին—ահա այն գլխավոր հարցերը, որ պահանջվում է քննության առնել մեզ մոտ կոնֆերանսում և որ ես կաշխատեմ պարզացնել իմ զեկուցման մեջ:

Նոյեմբերի 7-ին լրանում է Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձը, խորհրդային իշխանության գոյության 15-րդ տարեդարձը: Այդ տարեդարձը զուգադիպում է հնգամյակի նախաժամկետ կատարման հետ: Այդ 15 տարիների ընթացքում մեր թշնամիներն ամենուրեք և ամեն տեղ, որ-որի վրա մարգարեություններ էին անում մեր խորտակման մասին, անում էին ամեն ինչ, որպեսզի մեզ ջախջախեին, որպեսզի վիժեցնեին մեր սոցիալիստական շինարարությունը: Այդ 15 տարիները հանդիսանում են դասակարգային սրված պայքարի ամենադաժան տարիներ, որպիսիք երբևէ իմացել է մարդկության պատմությունը: Այդ պայքարում մենք հաղթանակում ենք: Փոխանակ մեր ջախջախման, մենք մեր տարեդարձին մոտենում ենք որպես քաղաքականորեն ամենաամուր, ամենակայուն երկիր՝ աշխարհի վրա գոյություն ունեցող բոլոր երկրների համեմատությամբ:

Մարդկության պատմությունը չգիտե դեռ մի այնպիսի պետություն, որն այնպես հաջողությամբ զարգանար, կառուցվեր, առաջ շարժվեր, ինչպես մեր բանվորական պետությունը—Խորհրդային Միությունը: Աշխարհը չգիտե այնպիսի կառավարություն, որն այնպես ակտիվորեն, յեռանդուն և [illegible] ընդառաջում և օժանդակություն դը-

ներ միլիոնավոր աշխատավորության կողմից, ինչպես այդ տեղի ունի մեզ մոտ՝ Խորհրդային Միության մեջ: Յերբեք, վոչ մի յերկիր, աշխարհի վողջ աշխատավորության կողմից այնպիսի համակրություն չի վայելել, ինչպիսին վայելում ենք մենք, Խորհրդային Միությունը: Մենք հանդիսանում ենք պրոլետարական, ինտերնացիոնալ պետություն: Վորևե մի ազգի յուրաքանչյուր աշխատավոր, յեթե նա կամենում ե մեզ ոգնել սոցիալիզմ կառուցելու, յեթե նա կամենում ե պայքարել մեր կուսակցության և խորհրդային իշխանության դրոշակով, կարող ե մեր յերկրում իրեն լիակատար, իրավահավասար տեր զգալ ամբողջ տնտեսության, գիտության, քաղաքականության, տեխնիկայի և կուլտուրայի նկատմամբ:

Աշխարհումս չի յեղել և ներկայումս ել չկա այնպիսի կուսակցություն, ինչպես բոլշևիկների կուսակցությունը, վորն այնքան խելացի կերպով, այնպիսի արվեստով, այնպիսի դասակարգային նպատակամղումով ղեկավարեր միլիոնավոր աշխատավորներին, բանվոր դասակարգին այս այնքան լուրջ, բարդ դասակարգային պայքարում: Միայն մենք, բոլշևիկների կուսակցությունը, Լենինի կուսակցությունը, ընդունակ ենք ջախջախել մեր թշնամիներին, վերջնականապես վոչնչացնել կապիտալիստական սիստեմը, մարդկությունն ազատել պատերազմներից և քայքայումից, ստեղծել նոր հասարակություն, վորտեղ կյանքը մարդավայել լինի:

Այդ մասին են վկայում այս հնգամյակի կատարման գործում ձեռք բերված հաջողությունները: Այն, ինչ բուրժուազիային անիմաստ եր թվում ու ցնորական, այն, ինչ մենշևիկներին և զանազան ոպորտունիստներին անիրագործելի յեր թվում ու անհնար, մենք կատարում ենք ավելի կարճ ժամկետներում, քան նշել եյինք: Հնգամյակը հինգ տարվա փոխարեն մենք կատարում ենք ժամկետից առաջ՝ չորս տարում, իսկ արդյունաբերության մի շարք առանձին կարևորագույն ճյուղերում մենք կատարել ենք 2½—3 տարում:



Այդ առաջին և վերջին անգամը չե, յերբ հաղթանակող պրոլետարիատը, վորին ղեկավարում ե բոլշևիկների կուսակցությունը, զարմանքի մեջ ե թողնում վողջ աշխարհին՝ իր աշխատանքի այն թափով և հետևանքներով, վոր նա տանում ե անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու ուղղությամբ:

16-րդ կուսկոնֆերենցիան, նշելով հնգամյակը, ուրվագծեց այն պատմական խնդիրները, վորը պետք ե լուծի ԽՍՀՄ պրոլետարիատը. նրանց մեջ այնպիսի խնդիրներ, ինչպես «ով-ում» հարցի պրոբլեմը, մեր յերկիրը ագրարային-ինդուստրիալ յերկրից ինդուստրիալ-ագրարային յերկրի վերածելու պրոբլեմը, Խորհրդային Միության տնտեսական անկախության պրոբլեմը, դասակարգային ուժերի հարաբերության հետագա փոփոխումը ժողովրդական տնտեսության սոցիալիստական հատվածի աճման հիման վրա, պրոլետարիատի դիկտատուրայի ամրացումը, կապիտալիզմի մնացորդների վոչնչացումը, ազգային ծայրերկրների՝ ցարական կարգերի կողմից, ցարական կառավարության կողմից նախկինում ճնշված ազգությունների հետամնացության վերացումը:

Մեր զարգացման ամեն մի թվանիշի միջից մենք պետք ե կարողանանք տեսնել ու գիտել այն պրոցեսները, սոցիալ-քաղաքական այն վիթխարի տեղաշարժերը, վորոնք թաքնըված են նրա հետև և վորոնք մենք ունենք հնգամյակի կատարման արդյունքով:

Գլխավորն առաջին հնգամյակում—դա մեր յերկրի ինդուստրացումն ե, ընդվորում այդ ինդուստրացման հիմունքը հանդիսանում եր ծանր արդյունաբերության ծավալումը, արտադրության միջոցների արտադրության ծավալումը և այդ հիման վրա մանր-սեփականատիրական, մանր-մենատնտեսական գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Հենց դրանումն ե, յերկրի ինդուստրացման գործումն ե մեր կուսակցության գլխավոր գծի հիմունքը, դրանումն ե յերաշխիքն այն բանի, վոր մեր վորովհետև

յերկիրը չի վերածվի կապիտալիստական յերկրների կցորդի», ինչպես այդ ասում եր ընկ. Ստալինը:

Յերկրի ինդուստրացումը հանդիսանում ե բազա վողջ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար, բազա խորհտնտեսական և կոլտնտեսական շինարարության համար:

Անշեղորեն անցկացնելով այդ գլխավոր գիծը, մեր կուսակցությունը, իսկ նրա ղեկավարությամբ Խորհրդային Միության աշխատավորները՝ խոշորագույն հաջողություններ են ձեռք բերել ինչպես ծանր արդյունաբերության ընդլայնման բնագավառում, նույնպես և վողջ գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման բնագավառում: Այդ բանը մեզ հնարավորություն տվեց՝ կուլակության սահմանափակելու և հետ մղելու քաղաքականությունից անցնելու կուլակության, կապիտալիստական այդ վերջին լուրջ դասակարգի, իբրև դասակարգ վերացնելու քաղաքականությանը՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Քննության առնենք, անալիզի յենթարկենք այն հիմնական թվանշանները, վորոնք ցույց կտան մեզ, թե ինչպես ենք մենք կատարել 16-րդ կուս. կոնֆերանսի կողմից առաջադրված խնդիրները:

1928 թվին, այսինքն հնգամյակի սկզբում, խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները միասին կազմում եյին գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի 1,8 տոկոսը, իսկ 1931 թվին այդ խորհրդային տնտեսություններն ու կոլտնտեսություններն արդեն կազմեցին գյուղատնտեսության ամբողջ պրոդուկցիայի 74 տոկոսը: Գյուղացիական բոլոր տնտեսությունների 62 տոկոսը կոլեկտիվացման ե յենթարկված: Դա ամենավիթխարի աճում ե: Սոցիալիստական սեկտորը գյուղատնտեսության մեջ ամուր կերպով գրավել ե գերիշխող տեղ: 1929 թվին, այսինքն հնգամյակի սկզբին գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ կուլակային տնտեսությունները տալիս եյին ապրանքային հացի 20 տոկոսը, իսկ 1931 թվին արդեն՝ միայն 4 տոկոսը:



ճիշտ այդպիսի պատկեր ե նաև առևտրի մեջ: Հնգամյակի սկզբին մասնավոր սեկտորն ընդգրկում եր ընդհանուր ապրանքաշրջանառության 27 տոկոսը, իսկ 1931 թվին արդեն՝ միայն 2,2 տոկոսը: Յեվ յեթե մանր-արդյունաբերության մեջ հնգամյակի սկզբին վողջ պրոդուկցիայի 63 տոկոսն ընկնում եր մասնավոր սեկտորի վրա, ապա 1931 թվին արդեն, շնորհիվ այդ արդյունաբերության կոոպերացման լայն թափին, մասնավոր սեկտորի բաժինն ընկավ մինչև 16,5 տոկոսը, իսկ 1932 թվին նա կազմելու յե 10,5 տոկոս:

Յեթե վերցնենք մեր յերկրի ժողովրդական յեկամուտն ամբողջությամբ, ապա 1928 թվին, հնգամյակի սկզբում, սոցիալիստական սեկտորը նրա մեջ կազմում եր 53 տոկոս, 1931 թվին՝ 82 տոկոս, իսկ 1932 թվին նա կազմում ե 90 տոկոս: Մեր յերկրի վողջ յեկամուտի միայն 10 տոկոսն ե արտադրվում մասնավոր սեկտորի կողմից:

Սոցիալիստական սեկտորը գերիշխող վիճակ ե գրավում տնտեսության առանց բացառության բոլոր ճյուղերում:

Այսպիսով ուրեմն, լենինյան «ով—ում» հարցն հաջողությամբ վճռված ե մեր յերկրի ներսում բանվոր դասակարգի կողմից և բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ, վերջնականապես և անվերադարձ կերպով, վճռված ե հօգուտ սոցիալիզմի, ընդդեմ կապիտալիզմի:

## ՓՈԽՎԵԼ Ե ՅԵՐԿՐԻ ԴԵՄՔԸ

Հնգամյակի սկզբում մեր յերկիրը հանդիսանում եր ագրարային-ինդուստրիալ յերկիր, ներկա մոմենտին մենք արդեն վերածվել ենք այնպիսի յերկրի, վորն արմատապես փոխել ե իր դեմքը,—ինդուստրիալ-ագրարային յերկրի:

Հնգամյակի սկզբում արդյունաբերությունը և շինարարությունը կազմում եյին ժողովրդական վողջ յեկամուտի 38 տոկոսը, իսկ գյուղատնտեսությունը՝ 36 տոկոսը: Այս տարի արդյունաբերությունը կազմում ե ժողովրդական վողջ յեկամուտի 50 տոկոսը, իսկ գյուղատնտեսությունը՝

23 տոկոսը: Մնացածն ընկնում է տրանսպորտի, առևտրի, կապի և ուրիշ ճյուղերի վրա: Արդյունաբերության դերի հսկայական բարձրացումը ժողովրդական յեկամուտի մեջ ամենևին չի բացատրվում գյուղատնտեսության աճման բացակայությամբ: Մենք ունենք այնպիսի դրություն, յերբ գյուղատնտեսության բացարձակ աճման պայմաններում. վերջինիս մասն իջեցված է ժողովրդական տնտեսության մեջ, վորովհետև ինդուստրացման բարձր տեմպերն ապահովեցին արդյունաբերության այդ վիթխարի բարձրացումը ժողովրդական յեկամուտի մեջ:

Ամբողջ արդյունաբերության ընդհանուր պրոդուկցիան*) հնգամյակի սկզբում արտահայտվում եր 11,1 միլիարդ ռուբլով (1926–27 թվերի գներով): 1931 թվին այդ թիվն ավելի քան կրկնապատկվեց և հասավ 25,1 միլիարդի, իսկ ընթացիկ տարում արդեն նա ըստ պլանի պետք է կազմի 35,6 միլիարդ ռուբլի, այսինքն, հնգամյակի սկզբի ժամանակաշրջանի համեմատությամբ արդյունաբերության ընդհանուր պրոդուկցիան ավելացել է ավելի քան 3 անգամ:

1928 թվին ածուխի հանույթը մենք հասցրեցինք 34,6 միլիոն տոննի, 1931 թվին հանույթը բարձրացավ, հասնելով 56 միլիոն տոննի, իսկ 1932 թվին մենք պետք է հանենք 90 միլիոն տոնն ածուխ:

Գոյություն ունի (յեթե դատելու լինենք ածխային հիմնական ավազանների աշխատանքի մասին) վտանգ այն բանի, վոր մենք մասամբ ածխի հանույթի ծրագիրը չենք կարող կատարել: Այդ բանի մեղքն զգալի չափով ընկնում է հենց մեզ վրա, Դոնբասի բանվոր յերիտասարդության և կոմյերիտականների վրա, վորոնք մոտավորապես կազմում են ածխային պրոլետարիատի ընդհանուր թվի 45 տոկոսը: Մենք պետք է ձեռք առնենք բոլոր միջոցները նրա համար, վոր-

*) ԽՍՀՄ Պետպլանի կատարման ստուգման տվյալներով: Անտառարդյունաբերությունը չի մտնում:



պեսզի ածխի հանույթի 1932 թվի ստուգիչ ցուցանիշները կատարենք, ինչ գնով էլ վոր այդ լինի:

Ի՞նչ է նշանակում հանել 90 միլիոն տոնն ածուխ: Մենք արդեն վարժվել ենք ոգտվել ահա այդպիսի խոշոր թվանշաններով, խոշոր տոկոսներով, բայց դժբախտաբար, մի՛շտ չէ, վոր հասկանում ենք նրանց բովանդակությունը: 90 միլիոն տոնն ածուխ—դա համապատասխանում է 100 միլիարդ կվ. ժամ ելեկտրական եներգիայի աշխատանքին: Իսկ ի՞նչ բան է 100 միլիարդ կիլովատ-ժամը: Յեթե այդպիսի մի աշխատանք կատարեյին մարդիկ, ապա կպահանջվեր մոտավորապես 250 միլիոն մարդ, այսինքն, մոտ 3 անգամ ավելի, քան մեր յերկրի աշխատունակ բնակչության քանակն է: Ահա թե ինչ է նշանակում հանել 90 միլիոն տոնն ածուխ: Ահա ինչու համար մենք պետք է բոլշևիկյան վողջ կրքոտությամբ ընթացիկ հնգամյակի ավարտական տարում պայքարենք այդ ստուգիչ ցուցանիշը կատարելու համար: Կհանենք 90 միլիոն տոնն ածուխ— և այդ կնշանակի, վոր ամեն մի աշխատունակ մարդու մենք լրացուցիչ կերպով ոգնության կտանք 3 լրացուցիչ մեխանիկական աշխատողներ՝ մեքենաների, ելեկտրոեներգիայի և նրանց նման այլ աշխատանքների ձևով:

Մենք ժամանակից շուտ կատարեցինք նավթի հանույթի մեր հնգամյակը: Նավթի հանույթը, համեմատած հնգամյակի սկզբնական շրջանի հետ, ավելացել է ավելի քան 2 անգամ: 1928 թվին ԽՍՀՄ-ում հանվեց 12,3 միլիոն տոնն նավթ, 1931 թվին նավթի հանույթը հասավ 23 միլիոն տոննի, իսկ 1932 թվին, համաձայն պլանի այդ հանույթը մենք պետք է հասցնենք 28 միլիոն տոննի:

Նման հաջողություններ մենք ունենք նաև չուգունի մշակման բնագավառում: 1928 թվին, հնգամյակի սկզբին մենք հալեցինք 3.400.000 տոնն չուգուն: 1931 թվին մենք հալեցինք 4,9 միլիոն տոնն: Ընթացիկ 1932 թվին մենք պետք է հալենք 9–10 միլիոն տոնն:

Պողպատի գծով արտադրանքը 1928 թվին կազմում եր

4,3 միլիոն տոնն, 1931 թ.՝ 5,3 միլիոն տոնն, իսկ ընթացիկ տնտեսական տարում մենք պետք է արտադրենք 9 և կես միլիոն տոնն, թեպետ ներկա տարվա առաջին ամիսները ցույց են տալիս պլանի վորոշակի թերակատարում: Պողպատի արտադրանքի գծով մենք հնգամյակի սկզբին, 1928 թվին գտնվում էինք 5-րդ տեղում՝ աշխարհում,— ՀԱՄՆ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից և Անգլիայից հետո: Ներկայումս մենք բռնել ենք 4-րդ տեղը: Իսկ յեթե վերցնելու լինենք վերջին ամիսների պողպատի արտադրանքի ամսական միջին ցուցանիշները մեզ մոտ և համեմատենք նրանք կապիտալիստական յերկրների հետ, ապա պարզվում է, վոր մենք արդեն գտնվում ենք 2-րդ տեղում: Մեզանից առաջ գնում է Ամերիկան, իսկ նրա հետևից արդեն— մենք ենք:

Յեթե մեր հանույթը կազմող այդ ամբողջ պողպատից մենք պատրաստեյինք միայն յերկաթուղային ռելսեր, ապա նրանցով բավական կլիներ սարքավորելու 120 հազար կիլոմետր յերկարություն ունեցող յերկաթուղային ճանապարհ, այսինքն՝ մեկ և կես անգամ ավելի շատ ճանապարհ, քան Խորհրդային Միության ամբողջ յերկաթուղային ցանցը: Յեթե այդ յերկաթուղիները գցելու լինենք յերկրագնդի շուրջը, ապա այդ ռելսերը կբավականանային, վորպեսզի մենք նրանցով յերկրագունդը պատեյինք 3 անգամ: Իսկ յեթե այդ պողպատից պատրաստեյինք միայն տրակտորներ, ապա մենք կարող էինք կառուցել յերեք միլիոն «Ինտերնացիոնալ» տիպի տրակտորներ, այսինքն հենց այնպիսի մարկայի տրակտորներ, վորպիսիք արտադրում է մեր Ստալինգրադի տրակտորի գործարանը: Իսկ չե՞ վոր 3 միլիոն տրակտորները կարող են փոխարինել 45 միլիոն ձիու, կամ 250 միլիոն մարդու աշխատանքին: Ահա ձեզ հաշվումներ այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում 9 և կես միլիոն տոնն պողպատը:

Պողպատից մենք, իհարկե, միայն ռելսեր և տրակտորներ չե՛, վոր պատրաստում ենք: Մենք 1932 թվին այդ 9 և



կես միլիոն տոնն պողպատից պետք է պատրաստենք 82.000 տրակտորներ, 73.000 ավտոմեքենաներ, ավելի քան 1.500 շոգեքարշեր, 30.000 վագոններ, 6 բլյումինգներ, 16 կրեկինգներ, 1.000 փորող մեքենաներ, 35 էկսկավատորներ, 22.000 կոմբայններ և շատ ու շատ ուրիշ բաներ:

Ինչպես տեսնում եք, առանց պողպատի, առանց ածխի մենք չենք կարող իրագործել մեր նպատակը: Սոցիալիզմ կառուցել հնարավոր չէ առանց ժողովրդական տնտեսության այդ վճռական ճյուղերի: Ահա ինչու լենինյան կոմյերիտմիությունը յեղել է կուսակցության ամենաակտիվ ոգնականը, և ամենահամառ կերպով պայքարել է կուսակցության գլխավոր գծի համար:

Մեզ մոտ գոյություն ունի շուգունի և պողպատի 1932 թվի ծրագրի մասնակի թերակատարման վտանգ: Ամեն մի յերիտասարդ բանվոր պետք է իմանա, թե ինչի յե հանգում այդ: Մենք պարտավոր ենք ավելի ու ավելի լարել մեր ուժերը, վորպեսզի հաղթահարենք պլանը: Իսկ մենք, ընկերնե՛ր, չե՞ վոր 5 միլիոն հոգի յենք: Արդյունաբերության այս վճռական ճյուղերում մեր բանվոր յերիտասարդության կեսմասն է գտնվում: Այդ նշանակում է, վոր ծրագրի կատարումը մեծ չափով գտնվում է մեր ձեռքում, և մենք պետք է ապահովենք այդ կատարումը: Կոնֆերենցիայից հետո գնալով մեր կազմակերպությունները, մենք պետք է բոլոր միջոցները ձեռք առնենք, վորպեսզի բոլշևիկորեն վոչ միայն կատարենք, այլև գերակատարենք ծրագիրը:

Հնգամյակի սկզբում մենք արտադրում էինք միայն 400 շոգեքարշեր, իսկ 1931 թվին մենք արտադրեցինք 813 շոգեքարշեր: 1932 թվին մենք պետք է ըստ պլանի արտադրենք 1.230 շոգեքարշեր:

Հնգամյակի սկզբում մենք արտադրում էինք միայն 1.500 տրակտորներ, 1931 թվին արտադրեցինք 40.000 տրակտորներ, իսկ ընթացիկ տարում մենք պետք է արտադրենք 82.000 տրակտորներ: Այսպիսով ուրեմն, անցած այդ

3 և կես տարիների ընթացքում մենք բոլորովին սկզբից ստեղծեցինք տրակտորային արդյունաբերություն: Չլսված ու չտեսնված տեմպերով կառուցեցինք, գործարկեցինք և արդեն աշխատում են այնպիսի գիգանտներ, ինչպես Ստալինգրադի և Խարկովի տրակտորի գործարանները: Տրակտորների արտադրություն է կազմակերպված մասսայական մասշտաբով նաև Լենինգրադի «Կրասնի Պուտիլովեց» գործարանում:

Հնգամյակի սկզբում մենք արտադրում էինք 700 ավտո, 1931 թ.— 20.500, ընթացիկ տարում մենք պետք է արտադրենք 73.000 ավտոմեքենա: Տվյալ դեպքում ևս, ընկերներ, մենք այդ յերեք և կես տարվա ընթացքում դարձյալ սկզբից հիմք դրեցինք ավտոմոբիլային արդյունաբերության: Մենք կառուցեցինք Նիժնի-Նովգորոդի ավտոգիգանտը, համարյա նորից, կարելի յե ասել, կառուցեցինք Մոսկվայի Ստալինի անվան գործարանը: Վերակառուցման յենթարկեցինք նույնպես Յարոսլավլի ավտոմոբիլային գործարանը:

Յեթե խոսենք մեքենաշինարարության մասին ընդհանուր առումով, ապա 1928 թվին նրա արտադրանքը կազմում էր 1.700.000.000 ռուբլի. 1931 թվին նա աճեց համարյա 3 անգամով, հասնելով 4.700.000.000 ռուբլու, իսկ ընթացիկ տարում արդեն նա, այդ պրոդուկցիան, համեմատած հնգամյակի սկզբի արտադրանքի հետ, կավելանա 4 անգամ, հասնելով 6.800.000.000 ռուբլու: Մենք կառուցել ենք խոշորագույն մեքենաշինարարական մի շարք գործարաններ: Գործարկել ենք Ռոստովի գյուղատնտեսական մեքենաշինարարության գործարանը, արդեն աշխատում է Սարատովի կոմբայնների գործարանը, մասնակիորեն գործարկել ենք Ուրալի մեքենաշինարարական գործարանը (Ուրալմաշստրոյ) և էլի ուրիշ մի շարք գործարաններ: Առաջներում գործող մի շարք մեքենաշինարարական գործարաններ մենք արմատապես վերափոխման ենք յենթարկել:



Հաջողությամբ առաջ ենք շարժվում մենք նաև ելեկտրոտեխնիկայի գծով: 1928 թվին մեր վողջ ելեկտրոտեխնիկական արդյունաբերությունը պատրաստի արտադրանք էր տալիս 182 միլիոն ռուբլի գումարի: 1931 թվին— 927 միլիոն ռուբլու, իսկ 1932 թվին նա արդեն պետք է տա 1 և կես միլիարդ ռուբլու պրոդուկցիա: Այսպիսով ուրեմն, առաջին հնգամյակի արդյունքն ելեկտրոտեխնիկական արդյունաբերության մեջ յեղավ այն, որ նրա արտադրանքն աճեց ավելի քան 8 անգամ: Մինչև պատերազմը ելեկտրոտեխնիկական արդյունաբերության ամբողջ արտադրանքը կազմում էր 81 միլիոն ռուբլի: Միայն Մոսկվայի Ելեկտրոզավոդը 1931 թվին տվեց 144 միլիոն ռուբլու արտադրանք, 1932 թվին նա կտա 240 միլիոն ռուբլու, այսինքն 3 անգամ ավելի, քան հին, ցարական, նախահեղափոխական Ռուսաստանի ամբողջ ելեկտրոտեխնիկական արդյունաբերությունը:

Ելեկտրոեներգիայի մշակումը 1928 թ. հավասար էր 5 միլիարդ կիլ. ժամի, 1931 թվին նա կազմեց 11,8 միլիարդ կիլովատ-ժամ, 1932 թ. նա կհասնի 17 միլիարդ կիլովատ-ժամի: Ելեկտրոկայանների կարողությունը 1928 թվին հավասար էր 1.900.000 կիլովատի, 1932 թվին նա աճելու յե, հասնելով մինչև 5.600.000 կիլովատի:

Մենք գլխովին նորից ենք սկսել քիմիական արդյունաբերությունը: Մեզ մոտ արդեն գործարկված են և աշխատում են Բերեզնիկովի, Նևսկի և Վասկրեսենսկի քիմիական կոմբինատները, Ուգրեշի քիմիական գործարանը և մի շարք ուրիշները: Առաջներում գործող քիմիական մանր գործարանները վերակառուցված են և վերածված խոշոր գործարանների: Հիմնական քիմիական արդյունաբերության պրոդուկցիան միայն առաջին յերեք տարիների ընթացքում աճեց ավելի քան յերեք անգամ:

Զգալիորեն լայնացել է յերկաթուղային տրանսպորտի աշխատանքը: Ընդհանուր ապրանքաշրջանառությունը 1928 թվին կազմում էր 156 միլիոն տոնն, 1931 թ.— 250 միլիոն

տոնն, 1932 թվին—320 միլիոն տոնն: 1932 թվին մենք պետք է մեր յերկաթուղային տրանսպորտով տեղափոխենք 830 միլիոն ճանապարհորդներ: Դա նշանակում է, վոր Խորհրդային Միության ամեն մի բնակչին, ներառնելով նաև ծծկեր յերեխաները, ընկնում է ավելի քան 5 անգամվա ուղևորություն, այն ժամանակ, յերբ 1928 թվին ամեն մեկի վրա միջին հաշվով ընկնում էր յերկու ուղևորում, իսկ 1913 թվին —մի ուղևորում:

Իսկ դուք գիտե՞ք, ընկերնե՛ր, վոր այդ թվանշանները խոշորագույն ցուցանիշներ են հանդիսանում: Հիշեցեք, շա՞տ է անցել այն ժամանակվանից, յերբ մենք հանդիպում եյինք, և շատ հաճախ եյինք հանդիպում վոչ միայն ալեհեր գյուղացի ծերունիների, այլև յերիտասարդ գյուղացիների, վորոնք չգիտեյին, թե ինչ բան է «յերկաթյա դաղանը», վորոնք յերկաթուղի չեյին տեսել:

1913 թվին՝ մեկ ուղևորին միջին հաշվով մեկ ուղևորում, 1932 թվին՝ հինգ ուղևորում: Յեվ այդ չնայած այն խոշոր թերություններին, վորոնք կան մեր տրանսպորտի աշխատանքում, չնայած կոմյերիտմիության թույլ աշխատանքին յերկաթուղային տրանսպորտում, վորպիսին մենք պետք է չեզոքենք և վորը մենք պարտավոր ենք վերացնել ամենամոտիկ ժամանակում:

Առաջին հնգամյակի արդյունքով վիթխարի չափով աճեց արդյունաբերության հիմնական կապիտալը: 1928 թվի վերջում արդյունաբերությունն ուներ 5,8 միլիարդ ռուբլու հիմնական կապիտալ, այսինքն՝ արտադրական շենքեր, պահեստներ, բնակարաններ, ինչպես նաև արտադրական սարքավորումներ և այլն: **1931** թվի վերջում նա արդեն ուներ **12** միլիարդ ռուբլու հիմնական կապիտալ, իսկ **1932** թվին ունենալու յե ավելի քան **20** միլիարդ ռուբլու հիմնական կապիտալ, իսկ ելեկտրոկայանների հետ միասին— **23** միլիարդ ռուբլուց ավելի:

Անցնում եմ գյուղատնտեսությանը: Դիմենք ցանքատարածություններին: 1928 թ. ցանքատարածությունները կազմում եյին 112,9



միլիոն հեկտար, 1931 թ.—136,6 միլիոն հեկտար, 1932 թվին նրանք պետք է կազմեն 140 միլիոն հեկտար:

Այսպիսով ուրեմն, առաջին հնգամյակի ընթացքում ցանքատարածություններն աճել են մոտավորապես 25 տոկոսով: Արմատապես փոխվել է այդ ցանքատարածությունների ստրուկտուրան: Եթե **1928** թ. խորհտնտեսությունները ու կոլտնտեսությունները ունեյին միայն 3 միլիոն հեկտարի ցանքադաշտ, ապա **1932** թվին նրանք արդեն ունեն **122** միլիոն հեկտար:

Հացահատիկների հավաքումը 1928 թվին կազմում էր 733 միլիոն ցենտներ, 4 և կես միլիարդ փութ, 1932 թ. նա արդեն հասնում է 900 միլիոն ցենտների, կամ 5 և կես միլիարդ փթի: Եթե 1928 թ. խորհտնտեսությունները տալիս եյին 11,3 միլիոն ցենտներ, ապա 1931 թ. նրանք արդեն տվեցին 67 միլիոն ցենտներ, իսկ 1932 թ. նրանք պետք է տան 83,6 միլիոն ցենտներ:

1008
34445

Բամբակ 1928 թ. հավաքել ենք 8 միլիոն 200 հազար ցենտներ, 1931 թ. 14 միլիոն ցենտներ, իսկ 1932 թվին բամբակի հավաքումը պետք է կազմի 18 միլիոն 400 հազար ցենտներ: Միջին Ասիայի ընկերները հավաստիացնում են, վոր նրանք հաջողությամբ կլուծեն այդ խնդիրը, ապահովելով գոյություն ունեցող ծրագրերի կատարումը: Բամբակագործության զարգացումը ԽՍՀՄ-ում, ընկերներ, հանգեցրեց այն բանին, վոր արդեն 1930 թ. առաջ անցանք Բրիտանական Հնդկաստանից և բամբակի արտադրության բնագավառում գրավեցինք **2-րդ** տեղն ամբողջ աշխարհում:

Եթե վերցնենք տրակտորային պարկը գյուղում, ապա մենք կտեսնենք, վոր նա առաջին հնգամյակում մեծացել է տասն անգամ: Եթե 1928 թ. մենք ունեյինք միայն մեկ մեքենատրակտորային կայան,— կարծեմ Շևչենկոյի անվան կայանն Ուկրայինայում,—ապա ներկայումս, 1932 թվի գարնանը, մենք ունեյինք 2·100 ՄՏ կայան, իսկ մինչև 1933 թ. հունվարի մեկը մենք պետք է ունենանք **3·100** ՄՏ կայաններ: Թվերն արդեն խոսում են իրենց ոգտին: Մեր տրակտո-



Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Մյասնիկյանի անվան

րային պարկն աճում է բացառիկ արագ տեմպերով: 1932 թ. մեր սեփական արտադրության հաշվին նա հասցվելու էր 2.871 հազար ձիու ուժի, ի դիմաց 1928 թ. 278 հազար ձիու ուժի:

Գյուղատնտեսությունն արմատապես փոխել է իր դեմքը: Մենք ներկայումս հանդիսանում ենք աշխարհի ամենախոշոր հողագործության յերկիրը, հողագործություն, որ կառուցված է մեքենայական տեխնիկայի հիմունքներով: Մենք արդեն իսկ ագրարային-ինդուստրիալ յերկիր չենք: Մենք ստեղծել ենք մեր սեփական խոշոր ինդուստրիան, նրա հիման վրա սոցիալիստական սկզբունքով վերակառուցել ենք գյուղատնտեսությունը: Տեխնիկական-տնտեսական տեսակետից մենք անցնում ենք առաջավոր արդյունաբերական յերկրների շարքը:

Մենք մի շարք ցուցանիշներով արդեն իսկ հասել և անցել ենք կապիտալիստական յերկրներին: Ածուխի գծով՝ 1928 թվին մենք 6-րդ տեղումն եյինք ՀԱՄՆ-ից, Անգլիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Լեհաստանից հետո: 1931 թվին մենք արդեն 4-րդ տեղումն եյինք, անցնելով Լեհաստանից և Ֆրանսիայից:

Նավթի գծով՝ 1928 թվին ԽՍՀՄ-ն գրավում էր յերրորդ տեղը: Առջևումն եյին ՀԱՄՆ-ը և Վենեցուելան: 1931 թվին մենք անցանք 2-րդ տեղը:

Մենք գնալով ավելի ու ավելի ենք հետին տեղը մղում կապիտալիստական յերկրներին նաև թուջի ձուլման գծով: Մեզնից ավելի եյին արտադրում ՀԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան, Բելգիան: 1931 թվին մենք արդեն անցանք Բելգիայից և Անգլիայից: Յեթե 1932 թ. պլանը կատարվի,— իսկ նա պետք է կատարվի, դրա համար կան բոլոր հիմունքները,—ապա թուջի արտադրության գծով մենք կբռնենք արդեն յերկրորդ տեղը աշխարհում: Ճիշտ է, ներկայումս կապիտալիստական յերկրներում թուջի արտադրությունը 1929 թ. մակարդակի համեմատությամբ կրճատվել է



ավելի քան յերկու անգամով, բայց յեթե մինչև իսկ վերցնենք 1928 թ. համեմատությամբ, ապա էլի մենք կլինենք չորրորդ տեղում:

1930—32 թվերի ընթացքում մեր գյուղատնտեսական մեքենաշինարարությունը յուրացրեց այն, ինչ ՀԱՄՆ և Գերմանիան յուրացրին 30 տարվա ժամանակամիջոցում: 1932 թվին մենք ասորտիմենտում (տեսակների ընդհանուր գումարում) կունենանք 73 միանգամայն նորագույն մեքենաներ և հարմարանքներ, համապատասխան սոցիալիստական հողագործության կողմից առաջադրվող պահանջներին:

Ի՞նչ հետևություններ, ընկերներ, պետք է անել այս բոլորից:

Մենք ամբողջապես սկզբից ենք ստեղծել արտադրության ամբողջական ճյուղեր, ինչպես օրինակ՝ տրակտորայինը, ավտոմոբիլայինը, քիմիականը: Մենք ինքներս ենք արդեն սովորել պատրաստել բլյումինգներ, կրեկինգներ, փոքր մեքենաներ, էքսկավատորներ, կոմբայններ, յերկաթամամլիչ դազգյահներ, մեծ կարողության ինքնաբեռնաթափ վագոններ, տեքստիլ, պոլիգրաֆային, կոշիկների մեքենաներ, հզոր ինքնաթիռներ, խոշոր կարողության տուրբիններ, գեներատորներ, տրանսֆորմատորներ, փոխակերպիչներ— սարքավորում բարձրավոլտ հաղորդումների համար: Մենք սովորել ենք ինքներս կառուցել դոմնաներ, մարտենյան վառարաններ, նրանց համար կահավորումներ: Մենք կառուցել ենք ամենախոշորագույն գիգանտներն աշխարհում.—Ստալինգրադի, Խարկովի տրակտորային, Ռոստովի գյուղ-տնտ մեքենաշինարարական գործարանները, Մագնիտոգորսկի, Կուզնեցկի կոմբինատները, Նիժեգորոդի ավտոմոբիլային գործարանը, «Շարիկոպոդշիպնիկ» գործարանը, Կրամատորսկի ծանր մեքենաշինարարական, Ստալինի անվան, «Ֆրեզեր», «Կալիբր» գործարանները, Վոսկրեսենսկի, Բերեզնիկի, Նևսկի քիմիական կոմբինատները, Դնեպրոստրոյը և վիթխարի

կոմբինատ նրա շուրջը և էլի ուրիշ բազմաթիվ գործարաններ, կոմբինատներ, էլեկտրոկայաններ:

Մենք արտադրում ենք բարձրորակ պողպատ, ալյումին: Մենք զգալիորեն լայնացրել ենք հումույթային բազան թեթև արդյունաբերության համար:

Լինելով ամենահետամնաց յերկիրն հնգամյակի սկզբում, մենք այդ ժամանակում գրավեցինք յերկրորդ տեղն աշխարհում նավթի հանույթի և բամբակի գծով, չորրորդ տեղն ածխի հանույթով—վեցերորդի փոխարեն: Այս տարվա վերջին չուգունի հանույթի գծով մենք կգրավենք աշխարհում 2-րդ տեղը, փոխանակ 6-րդ տեղի, վորում եյինք մենք սկզբում:

Գյուղատնտեսական մեքենաշինարարության գծով մենք յուրացրել ենք այն, ինչ վոր Ամերիկան և Գերմանիան յուրացրին 30 տարվա ընթացքում: Գյուղատնտեսության բնագավառում մենք ամենախոշորագույն յերկիրն ենք հանդիսանում ամբողջ աշխարհում: Յերկրագնդի վրա վոչ մի անկյունում շինարարության այնպիսի թափ չկա, ինչպես մեզ մոտ: Մենք շինարարության ծավալների տեսակետից հնգամյակի սկզբում ամենահետամնաց յերկիրը լինելով, այժմ ամենառեկորդային յերկիրն ենք համարվում: Արդյունաբերության մի շարք ճյուղերում մեր բանվորները համաշխարհային ռեկորդներ են տանում, տալով լավագույն տեխնիկական ցուցանիշներ գերմանացիների, Ֆրանսիացիների, ամերիկացիների, անգլիացիների, ճապոնացիների համեմատությամբ:

Մենք չենք ուզել, չենք ուզում և չենք էլ լինի կապիտալիստական յերկրների կցորդը: Մենք տարեց տարի ազատվում ենք իմպորտային կախումից: Հենց դրա համար էլ մենք պայքարել ենք և հետագայում էլ պետք է պայքարենք ե՛լ ավելի համառ կերպով:

Վոչ մի կասկած չկա այն մասին, վոր 2-րդ հնգամյակում մենք վերջնականապես կազատվենք այդ կախումից: Տեխնիկական-տնտեսական տեսակետից մենք հասնում ենք



առաջավոր կապիտալիստական յերկրներին, մենք հաջողությամբ ազատվում ենք կապիտալիստական յերկրների տնտեսական կախումից:

Հենց այդպիսի պրոցեսի, ընկերներ, մենք ականատես ենք ազգային հանրապետություններում և մարզերում: Մենք բնաջնջել ենք անցած տարիներում ճնշված ազգությունների տնտեսական, քաղաքական և կուլտուրական հետամնացությունը:

Միջին Ասիայում, Բաշկիրիայում, Կազակստանում, Անդրկովկասում, Չուվաշիայում և Թաթարիայում հիմք են դրված և կառուցվում են, իսկ վորոշ տեղերում արդեն գործարկված են զանազան տիպի արդյունաբերական գիգանտներ — մետալուրգիական, մեքենաշինարարական, պղնձահալ, ցինկի, կապարի, քիմիական, տեքստիլ կոմբինատներ և էլեկտրոկայաններ:

Թափառաշրջիկների անծայրածիր հարթավայրերը կըտրել է Թուրքսիբը: Կերչում բարձրացել է վիթխարի քիմիական կոմբինատ, Կազակստանում՝ Եմբաստրոյը: Իսկ Ղարաղա՞նդը, իսկ Բալխաշստրո՞յը: Շինված է Անդրկովկասյան վիթխարի նավթամուղը, Զագեսը, Ռիոնգեսը, Կարաբողազի քիմիական կոմբինատը և շատ ուրիշներ:

Միջին Ասիայում բամբակի արդյունաբերությանը վերաբերող նոր շինարարության համար մսխվել է 98,5 միլ. ռ.: Միջին Ասիայում, դրանից բացի, ձեռնարկված է կառուցել տեքստիլ կոմբինատ և ազոտի գործարան՝ Չիրչիկի էժան էներգիայի հիման վրա, ընդվորում այս արդյունաբերության մեջ ազգային մարզերում և հանրապետություններում մենք ունենք արդեն տեղի հիմնական բնակչությունից բաղկացած պրոլետարիատի ուժեղ խավեր:

Կազակստանում պրոլետարիատի 40 %-ը տեղական ազգաբնակչությունից է: Թաթարիայում, Ղրիմում, Պովոլժիեյի Գերմանական հանրապետությունում պրոլետարիատի 30%-ից ավելին կազմում են տեղի հիմնական բնակիչները:

կոմբինատ նրա շուրջը և էլի ուրիշ բազմաթիվ գործարաններ, կոմբինատներ, էլեկտրոկայաններ:

Մենք արտադրում ենք բարձրորակ պողպատ, ալյումին: Մենք զգալիորեն լայնացրել ենք հումույթային բազան թեթև արդյունաբերության համար:

Լինելով ամենահետամնաց յերկիրն հնգամյակի սկզբում, մենք այդ ժամանակում գրավեցինք յերկրորդ տեղն աշխարհում նավթի հանույթի և բամբակի գծով, չորրորդ տեղն ածխի հանույթով—վեցերորդի փոխարեն: Այս տարվա վերջին չուգունի հանույթի գծով մենք կգրավենք աշխարհում 2-րդ տեղը, փոխանակ 6-րդ տեղի, վորում եյինք մենք սկզբում:

Գյուղատնտեսական մեքենաշինարարության գծով մենք յուրացրել ենք այն, ինչ վոր Ամերիկան և Գերմանիան յուրացրին 30 տարվա ընթացքում: Գյուղատնտեսության բնագավառում մենք ամենախոշորագույն յերկիրն ենք հանդիսանում ամբողջ աշխարհում: Յերկրագնդի վրա վոչ մի անկյունում շինարարության այնպիսի թափ չկա, ինչպես մեզ մոտ: Մենք շինարարության ծավալների տեսակետից հնգամյակի սկզբում ամենահետամնաց յերկիրը լինելով, այժմ ամենառեկորդային յերկիրն ենք համարվում: Արդյունաբերության մի շարք ճյուղերում մեր բանվորները համաշխարհային ռեկորդներ են տանում, տալով լավագույն տեխնիկական ցուցանիշներ գերմանացիների, ֆրանսիացիների, ամերիկացիների, անգլիացիների, ճապոնացիների համեմատությամբ:

Մենք չենք ուզել, չենք ուզում և չենք էլ լինի կապիտալիստական յերկրների կցորդը: Մենք տարեց տարի ազատվում ենք իմպորտային կախումից: Հենց դրա համար էլ մենք պայքարել ենք և հետագայում էլ պետք է պայքարենք ե՛լ ավելի համառ կերպով:

Վոչ մի կասկած չկա այն մասին, վոր 2-րդ հնգամյակում մենք վերջնականապես կազատվենք այդ կախումից: Տեխնիկական-տնտեսական տեսակետից մենք հասնում ենք



առաջավոր կապիտալիստական յերկրներին, մենք հաջողությամբ ազատվում ենք կապիտալիստական յերկրների տնտեսական կախումից:

Հենց այդպիսի պրոցեսի, ընկերներ, մենք ականատես ենք ազգային հանրապետություններում և մարզերում: Մենք բնաջնջել ենք անցած տարիներում ճնշված ազգությունների տնտեսական, քաղաքական և կուլտուրական հետամնացությունը:

Միջին Ասիայում, Բաշկիրիայում, Կազակստանում, Անդրկովկասում, Չուվաշիայում և Թաթարիայում հիմք են դրված և կառուցվում են, իսկ վորոշ տեղերում արդեն գործարկված են զանազան տիպի արդյունաբերական գիգանտներ — մետալուրգիական, մեքենաշինարարական, պղնձահալ, ցինկի, կապարի, քիմիական, տեքստիլ կոմբինատներ և էլեկտրոկայաններ:

Թափառաշրջիկների անծայրածիր հարթավայրերը կլանել է Թուրքսիբը: Կերչում բարձրացել է վիթխարի քիմիական կոմբինատ, Կազակստանում՝ Եմբաստրոյը: Իսկ Ղարաղա՞նդը, իսկ Բալխաշստրո՞յը: Շինված է Անդրկովկասյան վիթխարի նավթամուղը, Զագեսը, Ռիոնգեսը, Կարաբողազի քիմիական կոմբինատը և շատ ուրիշներ:

Միջին Ասիայում բամբակի արդյունաբերությանը վերաբերող նոր շինարարության համար ծախսվել է 98,5 միլ. ռ.: Միջին Ասիայում, դրանից բացի, ձեռնարկված է կառուցել տեքստիլ կոմբինատ և ազոտի գործարան՝ Չիրչիկի էժան էներգիայի հիման վրա, ընդլայնում այս արդյունաբերության մեջ ազգային մարզերում և հանրապետություններում մենք ունենք արդեն տեղի հիմնական բնակչությունից բաղկացած պրոլետարիատի ուժեղ խավեր:

Կազակստանում պրոլետարիատի 40 %-ը տեղական ազգաբնակչությունից է: Թաթարիայում, Ղրիմում, Պովոլժիեյի Գերմանական հանրապետությունում պրոլետարիատի 30%-ից ավելին կազմում են տեղի հիմնական բնակիչները:

Ահա ինչու, ընկերներ, մենք հետևում ենք և հետագայում էլ շարունակելու յենք հետևել աշխատանքի բոլշևիկյան տեմպերին: Ահա ինչու, մենք յերբեմն չենք քաշվում ման գալ պատառոտված կոշիկներով և շալվարով, ուտել միայն հաց՝ առանց յուղի:

Կիրառելով մեր կուսակցության գլխավոր գիծը, մենք արդեն արդյունաբերության մի շարք ճյուղերում ժամանակից շուտ ավարտել ենք հնգամյակը: Առաջին շարքերումն են ազգային հանրապետությունները,— Կարելիան ժամանակից շուտ ավարտեց իր հնգամյակը՝ մսի և փայտամշակման արդյունաբերության գծով, Չեչնիան և Ադրբեջանը՝ նավթի գծով, Թաթարիան՝ մսի արդյունաբերության գծով, վառելիքի և հիմնական քիմիայի գծով, Դաղստանը՝ ապակու արդյունաբերությամբ, Բաշկիրիան՝ մետաղով, անտառամշակումով, Մարիյսկի մարզը՝ փայտամշակման արդյունաբերությամբ, Չուվաշիան՝ շինանյութերի արտադրությամբ:

Կոլեկտիվացման գծով մենք ունենք մի շարք ազգային հանրապետություններ և մարզեր, ուր կոլեկտիվացումը բարձր տոկոսի յե հասել: Մենք ունենք համատարած կոլեկտիվացման շրջաններ: Ուզբեկստանում կոլեկտիվացված է 66 %, Թաթարիայում՝ 63 %, Թուրքմենստանում՝ 56 տոկոս, Բելոռուսիայում՝ 48 %, Անդրկովկասում՝ 39,6 %:

Հյուսիսային Ոսեթիան և Ղրիմը համատարած կոլեկտիվացման են յենթարկված:

Մենք ունենք կուլտաշխատանքի հսկայական ծավալում ազգային հանրապետություններում և մարզերում: Յեթե ՌՍՖՍՀ-ում 1932 թ. կուլտշինարարության հատկացումներն աճել են 27 %-ով, ապա ազգային հանրապետություններում և մարզերում այդ աճումը կազմում է 33 %: Ազգային հանրապետություններում և մարզերում 1931 թվին ուսման ցանցում ընդգրկվել են այնքան անգրագետներ, վորքան վերջին 10 տարում միասին վերցրած: Իսկ յեթե վերցնենք այնպիսի մարզեր, ինչպես



Ադիգեյան, Հյուսիսային Ոսեթիան, Կաբարդինո-Բալկարյան և Կալմիկը, ապա նրանք արդեն համատարած գրագիտության շրջաններ են դարձել:

Ազգային լեզվով ազգային հանրապետությունների դպրոցներում սովորում են՝ ուկրաինացիներ 93,9 %, վրացիներ՝ 98 %, ուզբեկներ՝ 96,5 տոկոս, թուրքեր՝ 96,5 %, թաթարներ՝ 96,7 %:

Կիրառելով մեր յերկրի ինդուստրացման քաղաքականությունը, մենք հսկայական փոփոխումներ առաջ բերինք պրոլետարիատի միջավայրում: Բանվորների և ծառայողների ընդհանուր քանակը 1928 թ. կազմում էր 11,5 միլիոն մարդ: 1931 թվին նա արդեն կազմում էր 18,1 միլիոն, իսկ 1932 թվին, ըստ պլանի, նա արդեն կազմելու յե 21 միլիոն մարդ: Այսպիսով ուրեմն, հնգամյակի ընթացքում աշխատանքի մեջ են ընդգրկված 10 միլիոն նոր աշխատողներ:

Արդյունաբերական բանվորների քանակը հնգամյակի սկզբում կազմում էր 2.479.000 մարդ, իսկ 1931 թվին 4.163.000: 1932 թվին նա պետք է կազմի 4.541.000 մարդ: Այսպիսով ուրեմն, հնգամյակի ընթացքում արդյունաբերական բանվորների քանակն ավելացել է մոտավորապես 70 տոկոսով:

Գյուղում մենք ունենք տասնյակ միլիոնավոր կոլտնտեսականներ, վորոնք խորհրդային իշխանության համար ամուր հենարան են: Զարգացել է և հասունացել մեր պետության կարողությունը: Առավել չափով ամրացել է պրոլետարիատի դիկտատուրան: Մենք վերացնում ենք վերջին կապիտալիստական դասակարգը,—կուլակությունը: Փոխվում է մեր արդյունաբերության և պրոլետարիատի դասավորման աշխարհագրությունը: Հեռու չէ այն ժամանակը, յերբ մեզ մոտ արդեն չեն լինի շրջաններ առանց արդյունաբերության: Հենց այդ բոլորն ստեղծել են պայմաններ, վորոնք մեզ թույլ

են տալիս 2-րդ հնգամյակում մեր առաջ խնդիր դնել լիովին վերացնելու կապիտալիստական էլեմենտները ու դասակարգերն ընդհանրապես:

## ԱՃՈՒՄ Ե ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարեզում մեր ձեռք բերած հաջողությունները նպաստեցին բանվորների ու աշխատավորական մասսաների նյութական բարեկեցության հետագա աճմանը, նրանց կուլտուրական և իդեական-քաղաքական մակարդակի բարձրացմանը:

Ծանր արդյունաբերության աճմանը զուգընթաց աճում է նաև թեթև արդյունաբերությունը, ապահովելով բոլոր աշխատավորների կենսական մակարդակի բարձրացումը: Այսպես, 1932 թվին կոշկեղենի արդյունաբերությունն արտադրելու յե 84 միլ. զույգ վոտնաման: Այդ նշանակում է, վոր 1 զույգ վոտնաման ընկնում է մոտավորապես 2 մարդու:

Այդ, իհարկե, լրիվ չի ապահովում ազգաբնակչության կոշիկի պահանջը: Բայց հիշեցեք, ընկերներ, չե՞ վոր ընդամենը միքանի տարի առաջ մեր գյուղացիները գրեթե բոլորը տրեխ եյին հագնում: Այդ փաստ է: Այն չի կարելի աչքաթող անել: Վոչ ամեն չքավոր, վոչ ամեն միջակ հնարավորություն ուներ վոտնաման գնելու: Առաջին հնգամյակի սկզբում 1 զույգ վոտնաման ընկնում եր 7 հոգու, իսկ այժմ՝ 2 հոգու: Այդ խոսում է վիթխարի հաջողությունների մասին: Մենք հետևողականորեն գնում ենք դեպի այնպիսի մի դրություն, յերբ մեր տրեխավոր գյուղը կհագնի յերկարաճիտ կոշիկներ, կոշիկներ, կիսակոշիկներ, տուֆլիներ:

1932 թվին մեր ռեզինի արդյունաբերությունը պետք է տա 63 միլիոն զույգ կրկնակոշիկ, այսինքն՝ մոտավորապես 1 զույգ $2^1/_2$ մարդու: Իսկ հնգամյակի սկզբում մենք արտադրում եյինք 4 հոգուն 1 զույգ կրկնակոշիկ:



Աճում է բանվոր դասակարգի նյութական բարեկեցությունը և նրա հետ մեկտեղ բարելավվում բանվոր յերիտասարդության նյութական-կենցաղային վիճակը:

Արդյունաբերական բանվորի աշխատավարձը 1932 թվին, միջին հաշվով, կազմում եր տարեկան 870 ռ., 1931 թվին—1.168 ռ., իսկ 32 թվին նա հասել է 1.295 ռ., այսինքն հնգամյակի սկզբի հետ համեմատած նա մեծանում է համարյա մեկ և կես անգամ: Բանվորի յեկամուտն իր ընտանիքի մի անդամի համար, 1928 թվին միջին հաշվով կազմում եր 28 ռ. 50 կ. ամսական, իսկ 1931 թ. 4-րդ կվարտալում նա կազմում եր 45 ռ. 30 կ., այսինքն աճել է 58,5 տոկոսով:

Մեզ մոտ, ընկերներ, ինչպես ձեզ հայտնի յե, բնակարանային սով է: Այդ ճիշտ է: Բայց ի նկատի ունեցեք, վոր հնգամյակի այս 3 և ½ տարիների ընթացքում մենք ավելի քան 5 միլիոն մարդ ենք տեղավորել նորակառույց բարեշեն բնակարաններում:

Իհարկե, նորակառույց շենքերի մեջ տեղավորվածների մեջ խոշոր տոկոսն ընկնում է յերիտասարդության վրա, քանի վոր նա կազմում է պրոլետարիատի ընդհանուր կազմի 40 տոկոսը: Իսկ յեթե խոսենք պրոլետարիատի նորանոր լրացումների մասին, ապա այդ նոր լրացումների մեջ բանվոր յերիտասարդությունը կազմում է 65 տոկոս:

Բանվորների նյութական-կենցաղային և կուլտուրական դրության աճումն անմիջական կապակցության մեջ է դրսևորվում խորհրդային իշխանության այնպիսի կարգի միջոցառումների հետ, ինչպես մանկական մսուրների զարգացումը, տարբեր տեսակների մինչդպրոցական հիմնարկների զարգացումը, հանգստի տների, կուրորտների ցանցի լայնացումը և այլն: Վերցնենք մանկական մսուրները: Տեղերի քանակը 1928 թվին կազմում եր 50.000, իսկ 1932 թվին մանկամսուրներում ընդգրկված են 732.000 մանուկներ: Սեզոնային մսուրներում 1928 թվին կային 179.000 մանուկներ, իսկ ներկայումս 4 և ½ միլիոն մանուկներ: Չե՞ վոր այդ վիթխարի

չափով ուժանդակում է բանվորական ընտանիքի բյուջեյի աճմանը: Ծծմայրեր վարձելու, ինչպես նաև դայակներ պահելու կարիք չի լինում, և վերջապես մայրերը նրանց հետ վարվում են ավելի կուլտուրական ձևով, դաստիարակում են ավելի լավագույն կերպով: Մանկի տեսակետից էլ մսուրում յերեխաներն ստանում են այն, ինչ չի ստանում յերեխան տանը:

Վերցրեք նախադպրոցական հիմնարկները: 1928 թվին նախադպրոցական հիմնարկներում ընդգրկված էյին 453·000 յերեխաներ, 1931 թվին այդ թիվը հասավ 5·152·000-ի, իսկ 1932 թվին նախադպրոցական հիմնարկներում ընդգրկվելու յեն մինչև 10·000·000 յերեխաներ: Դա նույնպես վիթխարի չափով ուժանդակում է բանվորական ընտանիքի բյուջեյի մեծացման գործին:

Անցնենք կրթության հարցերին: Յես կամենում եմ ձեր ուշադրությունը հրավիրել միքանի ցուցանիշների վրա, վորը մենք ձեռք բերինք ակտիվ պայքար մղելով հնգամյակի համար:

1928 թվին նախնական դպրոցի բոլոր կոնցենտրներում սովորում էր 12·000·000 մարդ. ներկայումս սովորում է 23·7 միլիոն մարդ: Հիմնականում սրդեն ավարտված է մանկական վողջ բնակչությանը քառամյա դպրոցի մեջ ընդգրկելու գործը: Աշակերտների քանակը նախնական քառամյա դպրոցում 0,4 միլիոն մարդուց հասել է մինչև 19·000·000 մարդի: Այժմ մենք մեր առաջ դնում ենք ավելի լայն ծավալ ունեցող խնդիր·—ընդհանուր պարտադիր ուսուցման կիրառում 7-ամյակի ծավալով: 1928 թվին մեզ մոտ 7-ամյակներում սովորում էյին 1·400·000 աշակերտներ, իսկ այժմ 4,7 միլ. աշակերտներ: Սակայն յոթնամյակը դեռևս լրիվ չի ընդգրկել շարունակաբար աճող սերունդը:

1926/27 թ. թ. դպրոցն ընդգրկում էր Խորհրդային Միության մանկական ընդհանուր բնակչության (8—11 տարեկան) 56,8 տոկոսը, իսկ ընթացիկ ուսումնական տարում նա



արդեն ընդգրկում է Խորհրդային Միության մանկական ընդհանուր բնակչության նույն հասակի 95 տոկոսը: Այսպիսով ուրեմն, 8-11 տարեկան յերեխաների համար ընդհանուր ուսուցման գործը հիմնականում ավարտված է:

Հետևյալ հասակը — 12-14 տարեկան հասակն է. 1927/28 թվերին այդ հասակը դպրոցի մեջ ընդգրկվում էր 36 տոկոսով, իսկ ներկայումս, 1932/33 թվերին, 12-14 տարեկան հասակը դպրոցի մեջ պետք է ընդգրկվի 81,5 տոկոսով: Այսպիսով, այստեղ ևս մենք մոտեցել ենք աճող սերնդի ամբողջ քանակը դպրոցում ընդգրկելու նպատակին:

Սոցիալիզմի յերկիրը անգրագիտության լրիվ վերացման ճանապարհին է: Յեթե 1928/29 թվերին անգրագիտության վերացման դպրոցների ցանցով ընդգրկված էր 1·600·000 մարդ, ապա 1931 թվին այդ ցանցում ընդգրկված էր 26·000·000 մարդ. իսկ 1932 թվին պետք է սովորեն 20—22 միլիոն մարդ: Անգրագիտության վերացման այսպիսի խոշոր թափը, վորը մեզ թույլ է տալիս անգրագիտությունը հիմնականում վերացնել քաղաքներում և մի շարք մարզերում, հանդիսանում է վորպես հետևանք՝ այդ գործում ցույց տրված այն ակտիվ մասնակցության, վորը հանդես բերեցին իրենք, աշխատավորական մասսաները և զգալի չափով կոմյերիտական կազմակերպությունները ու առանձին կոմյերիտականները: 1932 թվին անգրագետների քանակը հազիվ անցնի 10—15 տոկոսից:

Սրան զուգընթաց խիստ աճել է նաև միջին և բարձրագույն կրթություն ունեցողների թիվը: 1928 թվի վերջին բարձրագույն տեխնիկական կրթության տեր ինժեներների և գյուղատնտեսների թիվը հասնում էր 100·000-ի, իսկ 1932 թ. վերջում հասնելու յե մոտ 200·000-ի: 1928 թվի վերջում միջին կրթության տեր տեխնիկների և գյուղատնտեսների թիվը կազմում էր մոտ 60·000, 1932 թվի վերջում հասնելու յե 250·000-ի:

Իմ զեկուցման՝ հնգամյակի համար մեր մղած պայքարի

հիմնական հաջողությունները, հիմնական ցուցանիշները բնորոշող այս մասին ի լրացում յես կուզենայի բերել մի շարք առանձին բնորոշ թվեր, վորոնք վերաբերում են բնակչության կուլտուրական պահանջների բավարարման խնդրին:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում թերթերի տիրաժի աճումը: Թերթերն ամուր կերպով ներմտել են բանվորական ընտանիքի կենցաղի մեջ: Իզուր չէ, վոր թերթերի տիրաժը, վորը 1928 թվին կազմում էր 8·800·000 որինակ, 1931 թվին հասավ 36·000·000 որինակի, իսկ 1932 թվին ըստ պլանի նա կազմելու յէ 40·000·000 որինակ: Յուրաքանչյուր չորս մարդուն—այստեղ ներառելով նաև յերեխաներին,—ընկնում է մի թերթ: Կապիտալիստական յերկրներից և վոչ մեկը չգիտե թերթերի այսպիսի մասսայական տիրաժ, այսպիսի մասսայական տարածում:

Թող արտասահմանում շարունակեն մրթմրթալ մեր վրա, տրաքվեն չարությունից, վայրենիներ են, ասեն, դրանք, անկուլտուրական մարդիկ են այդ բոլշևիկները, նրանց մոտ գիրք չկա, թերթ չկա, ասենք թուղթ էլ չկա: Եվ ահա տեսեք, թե ինչ է ստացվում: Ներառելով և՛ ծերունիներին և՛ յերեխաներին, Խորհրդային Միության մեջ ապրող յուրաքանչյուր 4-րդ մարդուն ընկնում է մի թերթ:

Ինչո՞ւմն է հարցը: Հարցը նրանումն է, վորպեսզի նրա մեջ ճիշտ գրվի, իր ժամանակին, խելամիտ կերպով, հանրամատչելի ձևով մասսաների առջև դրվեն իրենց հետաքրքրող, հուզող ակտուալ հարցերը: Մենք պետք է պարտադիր կերպով սովորենք մեր թերթերը մասսաների մեջ արմատավորել, հատկապես գյուղում, կոլտնտեսություններում:

Մամուլը—մեր կուսակցության ամենասուր զենքն է: Մամուլի միջոցով է, վոր մեր կուսակցությունը պահպանում է իր մշտական կապը մեր յերկրի ամենահեռավոր ծայրերի ու անկյունների բանվորների և գյուղացիների հետ, մոբիլիզացիայի յե յենթարկում նրանց՝ սոցիալիստական շինարարության համար:



Վոչ միայն թերթերի տիրաժն է աճում: 1931 թ. մեզ մոտ լույս է տեսել 50·000 անուն գիրք, այն ժամանակ, յերբ Անգլիան, Գերմանիան և Ամերիկան իրար հետ վերցրած լույս են տեսցրել 49 հազար անուն գիրք: Լույս տեսնող գրքերի անունների քանակով, իսկ առավել ևս այդ գրքերի տիրաժով, մենք առաջին տեղն ենք բռնում ամբողջ աշխարհում:

Մենք, ձգտելով հաղթահարել դժվարությունները, ասում ենք.—քլունգից ու թահից դեպի մեքենա, հասարակ կառուցվածքի մեքենայից—ավելի կատարելագործված մեքենայի, ի միջի այլոց, պատեհ առ պատեհ աշխատանքից—ավելի ճշտիվ, պլանավորված աշխատանքի, մեծացնել գործարանների քանակը, տիրապետել տեխնիկային, արմատավորել նրան մասսաների մեջ, բարձրացնել դաշտերի բեր-

Պրոլետարիատը չի մոռանում իր պատմական դերի մասին—կապիտալիզմի գերեզմանափորի դերի մասին, վորի վառ ապացույցը հանդիսանում ե աճող ու ամրացող Խորհրդային Միությունը, և գնալով ուժեղացող հեղափոխական շարժումը կապիտալիստական յերկրներում: Ինչպես Վեզուվի-հրաբխի լավան այրեց Պոմպեյը և հավասարեց ռազմիկին, վորը կանգնել եր նրա դարպասների մոտ, այնպես ել բոլշևիկները և նրանց ղեկավարած պրոլետարիատն ու աշխարհի ճնշված ժողովուրդները յերկրագնդի յերեսից կջնջեն և պատմության գրքից դեն կնետեն քայքայված, իր որն ապրած կապիտալիզմը: Հասել ե այն ժամանակը, յերբ պատմության այդ դիրքն աշխարհի մեկ վեցերորդ մասում արդեն գրավել ե սոցիալիզմը, և մոտ ե այն ժամը, յերբ նա այդ դիրքը կգրավի ամբողջ աշխարհում:

Ահա ձեզ համառոտ արդյունքները յերկու սիստեմների պայքարի,—կառուցվող սոցիալիզմի և նեխվող կապիտալիզմի սիստեմների պայքարի:

Այս յերկու սիստեմների միջև տարվող պայքարի ցուցանիշները պատասխան չե՞ն արդյոք այն հարցումին, թե ինչի՞ համար մենք պայքարեցինք:

## ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԵՑԻՆՔ: ՄԵՐ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԲՆՈՒՅԹԸ

Մեր յերկրի վիթխարի նվաճումները ձեռք են բերվել կապիտալիստական շրջապատման և ռազմական ինտերվենցիայի պայմաններում, ինչպես նաև յերկրի ներսում դասակարգային դաժան պայքարի պայմաններում:

Կապիտալիստական յերկրների բուրժուազիան, կուլակության հետ միացյալ ֆրոնտով, հին, բուրժուական-վնասարար ինտելիգենցիայի առանձին շերտերի հետ դաշնակցելով, բազմիցս անգամ փորձ ե արել պայթեցնել մեր նվաճումները, ինչպես յերկրի ներսից, այնպես և դրսից: Նա



բոլոր դեպքերում ել դեմ ե առել միլիոնավոր մասսաների անխնա հակահարվածին:

Ներկայումս բուրժուազիան և նրա ներքին ագենտուրան մեր յերկրի ներսում աղաղակում են մեր դժվարությունների մասին, ցանկանալով ամեն կերպ օգտագործել նրանք: Հասկանալի յե, վոր մեզ մոտ դժվարություններ կան: Բայց մեր դժվարությունները և կապիտալիզմի «դժվարությունները» (կարելի՞ յե արդյոք նրանցը դժվարություններ անվանել),—այդ նույնպես յերկու սիստեմների դժվարություններ են: Կապիտալիզմի «դժվարությունները», դա կապիտալիստական փտող, մեռնող հասարակության «դժվարություններն» են: Մեր դժվարությունները,—դրանք աճման, հասունացման, սոցիալիստական տնտեսության վերելքի դժվարություններն են: Կապիտալիստական հասարակությունը դժվարություններից յելք ե փնտրում դեպի հետ շարժվելու մեջ, վորովհետև առաջ շարժվել, նշանակում ե ավելի մեծացնել յեղած բոլոր դժվարությունները, ավելի կորցնել իրեն հակասությունների մեջ: Վորպեսզի հաղթահարել դժվարությունները, բուրժուազիան հետևյալ լոզունգներն ե արձակում.—«մենաշնորհից դեպի հետ, դեպի կոնկուրենցիան», «դեպի հետ, մեքենաներից դեպի քլունգ», «դեպի հետ՝ գիտությունից և տեխնիկայից»: Մեր դժվարությունները մենք կհաղթահարենք և կարող ենք հաղթահարել միայն դեպի առաջ շարժվելու ճանապարհին: Ուստի և մեր լոզունգներն են հանդիսանում.—«զարգացնել ինդուստրիան», «բարձրացնել և տիրապետել տեխնիկան», «արմատավորել գիտությունը»:

Մենք, ձգտելով հաղթահարել դժվարությունները, ասում ենք.—քլունգից ու բահից դեպի մեքենա, հասարակ կառուցվածքի մեքենայից—ավելի կատարելագործված մեքենայի, ի միջի այլոց, պատեհ առ պատեհ աշխատանքից—ավելի ճշտիվ, պլանավորված աշխատանքի, մեծացնել գործարանների քանակը, տիրապետել տեխնիկային, արմատավորել նրան մասսաների մեջ, բարձրացնել դաշտերի բեր-

քատվությունը—ահա վորպիսի ճանապարհի վրա մենք կարող ենք հաղթահարել մեր դժվարությունները: Մեր յերկրի բանվոր դասակարգը լարում է իր բոլոր ուժերը նրա համար, վորպեսզի հանդես գա իր պատմական խնդրի բարձունքում, հայտնաբերելով չտեսնված ենտուզիազմ և ստեղծագործ աշխատանք, վորն արտահայտվում է հարվածայնության և սոցիալիստական մրցության աճման մեջ: Մենք, գիտակցորեն, մի ամբողջ շարք մոմենտներում գնում ենք դեպի ինքնասահմանափակման ուղին, վորպեսզի վերջում հաղթանակող դուրս գանք: Մեզ մոտ, ընկերներ, կա հետևյալ պրոցեսը. հարվածայինների քանակն աճում է, աճում է նաև մրցողների քանակը, ամրանում ենք մենք, բայց դրա հետ մեկտեղ, աշխատավորության առանձին շերտերում այդ ենտուզիազմի հետ միասին յեղել են, կան դեռևս առանձին հետամնաց տրամադրություններ, իրենց անձնական շահերի հակադրումը դասակարգի շահերին, իրենց անձնական բարեկեցության հակադրումը Խորհրդային Միության ընդհանուր բարեկեցությանը: Այս տրամադրություններն արտահայտվում են «ձախ» հավասարեցման, իրար մեջ բաժանում կատարելու մեջ, վորը գալիս է մեզ առանձին մանր-բուրժուական շերտերից, իսկ հաճախ նաև առանձին հետամնաց գյուղացիական շերտերից: Այդ տրամադրությունները, վորոնց աղբյուրը վոչ պրոլետարական կողմն է, գալիս են առանձին, քիչ-կայուն աշխատավորների կատեգորիաներից, վորոնք չեն հասկանում մեր դժվարությունների բնույթը, չեն հասկանում այն, վոր մեր դժվարություններն իրենց մեջ ունեն այն անհրաժեշտը, վորպեսզի նրանց հաղթահարենք, և վոր անպայմանորեն նրանք կը հաղթահարվեն, քանի վոր այդ դժվարությունները տեղում կանգ առնելու, անկման դժվարություններ չեն, այլ առաջ շարժվելու, մեր աճման դժվարություններն են, լեռ բարձրանալու դժվարություններ:

Վերցնենք, օրինակի համար, մթերավորման դժվարությունները: Վո՞րտեղից են նրանք մեզ գալիս: Դուք



գիտեք, վոր մեզ մոտ ահագին քանակի ապրանքներ են պակասում: Մթերավորման դժվարությունները մեզ մոտ գալիս են ամենից առաջ անսովոր կերպով անող պահանջներից, վորովհետև մենք այլ, ավելի բարձր մակարդակի յենք բարձրացնում վոչ թե առանձին անհատների, այլ բնակչության միլիոնավոր շերտերի պահանջները: Հիշեցեք ապա ցարական ժամանակը. չե՞ վոր ամեն մի գյուղացի չեր, վոր գյուղում գործածում եր շաքար: Դա—ընդհանուրին հայտնի փաստ է, ընկերներ: Իսկ ներկայումս շաքարը գյուղացու համար ամենաանհրաժեշտ կենսական նյութ է: «Թեյն ուզում եմ շաքարով խմել»,—ասում է գյուղացին: Յեվ ճիշտ է ասում: Ամեն գյուղացի չե՛, վոր կոշիկներ եր հագնում: Օրինակի համար, Ստալինգրադի յերկաթասարդ-ինժեներներից մեկը, նրա ազգանունը կարծես Սազանով է, վորն յեկել է Վյատկայից «միքանի տարի դրանից առաջ»՝ սովորելու, հիշում եր, վոր դեռ «միքանի տարի սրանից առաջ» նա ման եր գալիս տրեխներով: Իսկ այժմ նա ինժեներ է: Յե՞րբ եր նա ման գալիս տրեխներով: 1922 թվին: Այստեղ ներկա յեղող գյուղական պատգամավորները հավանաբար դեռևս հիշում են այն ժամանակը, յերբ նրանք ման եյին գալիս տրեխներով: (Տեղից.—1921 թվին): 1921 թվին (Տեղից.—1925-ին): Իսկ ո՞վ է ներկայումս ձեր մեջ տրեխներ հագնում: Ասենք, ձեզնից ամեն մեկը հասարակ կոշիկներ չի յել հագնում: Դեռ ձեզ պետք է տվել հատուկ ֆասոնի, հատուկ կարվածքի կոշիկներ: Յեվ այդ ճիշտ է: Այդ մենք ենք զարգացնում այդպիսի պահանջներ: Վերցրեք՝ առաջներում այնքան հետամնաց ուզբեկին: Չե՞ վոր նրանց մեջ ամեն մեկը սապոն չեր գործածում. իսկ ներկայումս նա սապոն գործածում է, պահանջում է սապոն, չեն տալիս—հայհոյում է: Այդ բանը դուք կարող եք ինքներդ տեսնել, դիտել և՛ Թաթարիայում, և՛ Ադրբեջանում: Մենք այժմ կյանքի յենք կոչել նորանոր պահանջներ: Բայց մեզ մոտ դեռևս չկան նրանց բավարարելու բոլոր հնարավորությունները: Մեզնից ամեն մեկը չե՛, վոր ուզում է

այն կոստյումը, վորը նրան տալիս են: Մասսաների մեջ աճել, հասունացել է վորոշ ճաշակ՝ յերկրի կուլտուրական աճման, հենց իրենց, լայն մասսաների քաղաքական և կուլտուրական զարգացման աճման ազդեցության տակ:

Մասսաների մեջ այժմ առաջացել է հասկացողություն վորակի մասին: Զարգացել է հասկացողություն գեղեցկի մասին: Զարգացել է ճաշակը (Մոսկվայի պատգամավորությունից — Հավասարվել Կոսարևին): Չի համաձայնվի ամեն մի պատահած կոստյում հագնել, պահանջում է այն, ինչ վոր իրեն դուր է գալիս: Յեվ այդ բանը տեղի յե ունենում վոչ թե մեկ մարդու մեջ, այդ բանը տեղի յե ունենում միլիոնավոր մարդկանց մեջ: Ինչպես տեսնում եք, մեզ մոտ դժվարությունները միանգամայն հատուկ կարգի դժվարություններ են:

Անկասկած, պատգամավորների մեջ կան բանվորներ, բանվորական ընտանիքներից դուրս յեկածներ: Հիշեցեք բանվորական ընտանիքը և ասացեք, արդյո՞ք յուրաքանչյուր բանվորական ընտանիքում բոլոր անդամներն ունեյին առանձին պատառաքաղ, դգալ, դանակ և առհասարակ առանձին ամանեղեն: Վո՛չ ամեն ընտանիքում, ընկերներ: Վերցրեք մեր այսօրվա բանվորական ընտանիքը: Ընդհանուր ափսեյի փոխարեն, սեփական պնակ: Յես, ընկերներ, գիտեմ բազմաթիվ յերիտասարդ բանվորների, լավ պրոլետարների, այդ թվում վարպետների ընտանիքներից դուրս յեկածների, վորոնք ցարի ժամանակ առհասարակ հասկացողություն չեն ունեցել, թե ինչ բան է առանձին դանակը, առանձին պատառաքաղը, առանձին դգալը:

Իսկ դուք, յերիտասարդներդ, հաճախ այդ մոռանում եք: Մինչև իսկ մտորումների մեջ արտահայտվում է այն հանգամանքը, վոր մենք միլիոնների բարձրացնում ենք նոր մակարդակի պահանջի, նոր մակարդակի կուլտուրայի: Հիշեցեք ինչպես եյին ընտանիքներն ապրում թախթերի վրա, մութ անկյուններում և կամ ինչպես մի փոքրիկ սենյակում ապրում եյին յերկու ընտանիք: Իսկ այժմ այն բան-



վորների քանակը մեզ մոտ, վորոնք փոխադրվել են նոր տըների մեջ, վորոնք ստացել են առանձին լավագույն կարգի բնակարաններ, հաշվվում է, համենայն դեպս, միլիոններով: Այստեղից — և՛ պակասում, և՛ դժվարություններ: Բոլորը չէ՛, վոր առաջ գնում եյին կինո և թատրոն: Ասա գնացեք մեր կինոները, հատկապես գործարանային թաղամասերում: Դժբախտաբար՝ այնտեղ կինոներ քիչ կան, և ընդհանրապես մեզ մոտ դեռևս քիչ կինոներ կան: Բայց դուք այնտեղ կտեսնեք ձեր տարերի հասակակից կանանց, պատանի բանվորուհիների, վորոնք առաջներում գիտեյին միայն գործարանն ու իրենց տունը, իսկ նրանք ներկայումս, 60 տարեկան հասակում շտապում են կինո, վորպեսզի չուշանան (ծիծաղ): Իսկ առաջ ամեն մի յերիտասարդ չէ՛, վոր կինո կամ թատրոն եր գնում: Իսկ յեթե տղան, ասենք, գնում եր կինո, ապա յես հիշում եմ այն ժամանակը, յերբ ուզում եյինք այդ բանն անել «խալտուրային» ձևով (ձայն տեղից — Ներս ծլկվելով):

Այո, այո, հենց ներս ծլկվելով: Իսկ յերիտասարդության, ասենք՝ հասակավորների յել առանձին շերտերը դրությունը հաշվի չեն առնում այնպես, վոր մեզ մոտ, յերբ այս բանը հերիք չի անում, նշանակում է մենք առաջ չենք գնում և այլն: Պետք է, ընկերներ, ըմբռնել այդ բանը, վորպեսզի լավ հասկանալ մեր դժվարությունների եյությունը:

Բերում եմ օրինակ: — Քաղքենին շատ հաճախ մեր վրա աղաղակ է բարձրացնում — ահա, տեսեք, թե մինչև ուր հասցրիք յերկիրը, յերեխաներիս համար տետրակներ չեն բավականանում, յերեխան չի իմանում ինչի վրա գրի: Իսկ հենց այդ քաղքենին չգիտի այն մասին, վոր Խորհրդային պետությունը այժմս տետրեր բազմիցս անգամ շատ է արտադրում, քան ցարական Ռուսաստանը: Յեվ այն ժամանակ ցարական Ռուսաստանում բավարարում եյին տետրերը, վորովհետև այնտեղ սովորում եյին հազարավոր ընտրյալները միայն, իսկ մեզ մոտ սովորում են տասնյակ միլիոնավորները: Բոլշևիկների կուսակցությունը, խորհրդային կա-

ռավարությունն արթնացրին մասսաների մեջ այդ պահանջը և այժմ կառուցում են այդ պահանջները բավարարելու ապարատ:

Մեր դժվարությունները, յերկրորդ հերթին, առաջանում են նրանից, վոր **մենք չենք կարողանում ճիշտ կերպով բաշխել յեղած նյութական արժեքները**:— Շնորհիվ կուլտուրականորեն վաճառելու անկարողության, շնորհիվ բյուրոկրատիզմի և այն բանի, վոր հանձին բյուրոկրատների, չինովնիկների, ֆորմալիստների, դասակարգային թշնամին մեզ խանգարում է առևտուր կազմակերպել, մեզ խանգարում է ճիշտ կերպով կազմակերպել աշխատավորության մատակարարումը: Կարելի յե տասնյակ օրինակներ բերել: Ի՞նչքան է մեզ մոտ կոնսերվ փչանում: Վիթխարի քանակությամբ և լավ վորակի կոնսերվ, ընկերներ: Ինչո՞ւ: Բանկան վատ են զոդում, օդ է անցկենում, իսկ օդի հետ շփում ունենալուց և յերկար ժամանակ մնալուց կոնսերվը հոտում է: Միսը թարմ են բերում գործարանը, այնտեղ տաքությունը 40–45 աստիճան է. դնում են, չեն ծածկում, գալիս է ճանճը, սերմ է դնում, միսը հոտում է: Այս դժվարությունները ծնունդ են առնում այն բանից, վոր մենք չենք կարողանում կուլտուրական առևտուր անել:

**Բայց չպետք է նվալ, այլ պետք է պայքարել այդ դժվարությունների դեմ, հաղթահարել այդ դժվարությունները:** Այդ դժվարությունները շատ հաճախ ծնունդ են առնում մեր անկուլտուրականության հետևանքով: Ահա ձեզ, օրինակի համար, ի՞նչ եք դուք կարծում, բրակը մեր զարգացմանը դժվարություններ հարուցո՞ւմ է, թե վոչ: Այո, հարուցում է, նա ստեղծում է դժվարություններ: Իսկ ո՞վ է բրակ անում: Բրակն անում ենք մենք ինքներս: Մետաղը, հումքն ո՞վ է փչացրել և փչացնում է ներկայումս արդյունաբերության մի ամբողջ շարք ճյուղերում: Մենք ինքներս: Ո՞վ է վատ վորակ տալիս: Մենք ինքներս ենք վատ վորակ տալիս: Յերբեմն թանկ և յերկար ժամանակ ենք կառուցում. ո՞վ է այդ



անում: Դարձյալ մենք ենք, ընկերներ, թանկ ենք շինում, յերկար ժամանակից ենք գործարկում: Այ, Նիժնի–Նովգորոդի գործարանը գործարկել ենք, բայց մինչև այժմ սարքի չենք գցել: Թող Նիժնի–Նովգորոդի կազմակերպության կոմյերիտականները մեզ պատասխան տան, թե ո՞վ է դրանում մեղավոր: Մենք ինքներս ենք դրանում մեղավոր, ընկերնե՛ր: Յեվ աշխատանքն ենք զուր մսխում, ցածր արտադրողականություն ենք տալիս, բարձրացնում ենք ինքնարժեքը: Չէ՞ վոր այս ամենը «մեր ձեռքի գործն է»: Յեվ այդ ամենը շնորհիվ անբավարար կուլտուրայի, անբավարար ընդհանուր և տեխնիկական գրագիտության, հաճախ անփութության, անուշադրության: Մասամբ այդ բացատրվում է մեր ուսուցման ծախքերով:

Բայց այդ մեզ չի արդարացնում: Ինչո՞ւ, ընկերներ, կրկնել այն, ինչ կար Ստալինգրադի գործարանում, ինչո՞ւ կրկնել այն, ինչ կար Նիժնի–Նովգորոդի գործարանում, ինչո՞ւ կրկնել այն, ինչ կար Խարկովի գործարանում, ապագա Չելյաբինսկի գործարանում: Ինչո՞ւ կրկնել: Իսկ մենք կրկնում ենք, մենք վատ ենք սովորում, թեև շատ բան ենք սովորել: Այ, օրերս մենք «գրոհեցինք» Մոսկվայի կարի արհեստանոցների վրա և լավ կտոր յերևան հանեցինք, բայց շատ կա մեծ բրակ ունեցող կտոր: Կապույտ կտոր է կարված, և հանկարծ դեղինն է մեջը խառնվել: Դազգյահները փչացնում, կոտրատում ենք մենք ինքներս: Միայն մենք ինքներս ենք մեղավոր այն բանում, վոր մինչև օրս Նիժեգորոդի գործարանում չեն յուրացրել ավտոմեքենաների արտադրության տեխնիկան: Իսկ Ստալինգրադի գործարանում դազգյահներն ու մեքենաներն առաջ ո՞վ էր կոտրատում: Մենք ինքներս: Մետաղ, հումույթ ո՞վ էր փչացնում և փչացնում է մինչև այժմ արդյունաբերության մի ամբողջ շարք ճյուղերում: Մենք ինքներս: Ո՞վ է վատորակ ապրանք տալիս: Մենք ինքներս ենք տալիս վատորակ ապրանքը: Իսկ յերբեմն ո՞վ է, վոր յերկար ժամանակում է շինում և այն

*ել թանգ: Դարձյալ, հենց մենք ենք, ընկերներ, մենք ձեզ հետ, վոր թանգ ենք կառուցում, յերկար ժամանակի ընթացքում կառուցում:*

*Ի՞նչ է պահանջվում:* Սովորել կուլտուրապես աշխատել, դեն գցել թափթփվածությունը, ձեռքերը չծալել դժվարությունների առաջ: *Վոչ վոք մեզ համար վոչինչ չի անի: Այնուհանդերձ, մենք ելի յենք մոռանում այն լոզունգին,* *թե պետք է* կուլտուրապես ապրել, աշխատել բարձր արտադրողականությամբ,*—ահա թե ինչ է մեզնից պահանջվում, ընկերներ:*

*Ընկերնե՛ր, դժվարությունները մեզ մոտ նաև նրանից են, վոր մենք գիտակցորեն,—և այդ բանը մենք չենք թաքցնում,—պետք է ինքներս մեզ սահմանափակենք: Երբեմն հարկադրված ենք հացն ուտել առանց յուղի, իսկ յուղն ստիպված ենք վաճառելու: Ինչո՞ւ համար: Այդ բանն անում ենք նրա համար, վորովհետև մեզ պետք են մեքենաներ, մեզ տեխնիկա յե պետք, իսկ այդ բաները մեզ վոչ վոք չի տա մեր գեղեցիկ աչքերի համար.— կապիտալիստները մեզ վարկ չեն տալիս, իսկ Մագնիտոստրոյը, այնուամենայնիվ, կարծես թե մի բան արժե, նա կառուցվում է հնգամյա պլանի հաշվից դուրս: Ուստի և մենք գիտակցորեն, վորոշ բաներում ինքներս մեզ սահմանափակում ենք, շատ հաճախ ման ենք գալիս պատառոտված շալվարներով, քրքրված կոշիկներով, իսկ լավերը ծախում ենք և գնում մեքենաներ: Հետագա պատերազմում,—իսկ այդ պատերազմը լինելու յե դասակարգային,—հաղթանակող դուրս կգա նա, ով վոր կունենա լավագույն բանակ, դիսցիպլինայի յենթարկված, ամուր, միաձույլ բանակ, և գումարած դրան, ով ունի առաջավոր գործարաններ, առաջավոր տեխնիկա և աշխատանքի առաջավոր կազմակերպում այդ գործարաններում: Իսկ դրա համար դարձյալ և դարձյալ պահանջվում են մեքենաներ, դազգյահներ, տեխնիկներ, ինժեներներ, պահանջվում է դաստիարակել բանվորին, վորպեսզի նա ճիշտ կերպով կազմակերպի իր աշխատանքը գործարանում: Դասակարգային թշնամին, կուլակը, նրա ագենտուրան մեր միջավայրում—աջ ելեմենտները, այդ դժվարությունները շատ հաճախ փքում, ուռցնում են, օգտագործում են իրենց նպատակների համար, իրենց շահերի համար, ներկայացնում են նրանց աղավաղված տեսքով, խրախուսում են գոփողական տրամադրությունները: Իսկ մենք, պրոլետարիատը, բոլշևիկյան կուսակցության գլխավորությամբ և նրա ղեկավարությամբ, գիտենք, թե մենք ինչ ենք ուզում, գիտենք, թե մենք ինչե՛ր ենք ապրում: Մենք շարժվում ենք առաջ: Մեզ պետք է ամրանալ: Իսկ նրա համար, վորպեսզի լինել ամենից ուժեղ և յենթակա չլինել ջախջախման,—իսկ ջախջախված լինել մենք չենք ուզում և չենք ջախջախվի,—մենք պետք է օգտագործենք բոլոր հնարավորությունները նրա համար, վորպեսզի ամենամոտ ժամանակում դառնանք ամենաամուր յերկիրն ամբողջ աշխարհում:*

Սոցիալիստական շինարարության վիթխարի հաջողություններն ամենից առաջ—դա մեր կուսակցության հաղթանակող գլխավոր գծի հաջողություններն են: *Հնգամյակի համար տարվող պայքարը զուգակցվել է դասակարգային պայքարի սրվածությամբ՝ ինչպես յերկրի ներսում, նույնպես և նրանից դուրս: Թշնամին մեզ դիմադրություն է ցույց տվել: Հարձակում սկսելու նախաձեռնման գործը գտնվում էր մեր ձեռքում:* Մենք հաղթանակում ենք հենց այն բանի շնորհիվ, վոր մեր կուսակցության գլխավոր գիծը ճիշտ գիծ է հանդիսանում: *Նա յե ապահովել մեր զարգացման այդ հաջողությունները: Միայն յերկու ֆրոնտի վրա տարվող պայքարում, գլխավոր վտանգի դեմ, աջ թեքման դեմ, «ձախերի», հակահեղափոխական տրոցկիստների դեմ,—հետևողականորեն կիրառելով մեր կուսակցության գիծը, մեր յերկրի բանվոր դասակարգը ձեռք է բերել այդ խոշորագույն հաջողությունները: Աջ թե–*

քումը յեղել է գլխավոր վտանգ, նա շարունակում է այդպիսին մնալ հետագայում էլ: Հնգամյակը կատարում ենք չորս տարում, մեր միջավայրում դասակարգային թշնամու դեմ տարվող վճռական պայքարում: Մեր կոնֆերանսը չի կարող լռությամբ անցնել՝ հնգամյա պլանի կատարման գործում ընկ. Ստալինի մեծագույն դերի փաստի կողքից: Շնորհիվ մեր կուսակցության կենտկոմի, ընկ. Ստալինի գլխավորությամբ կիրառած ամուր, հետևողական, լենինյան գծի, մենք գտնվում ենք այն դրության ուղիների վրա, վորպեսզի դառնանք հզորագույն յերկիրն ամբողջ աշխարհում:

## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԵԶ ՄՈՏ ՅԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

### ԱՃՈՂ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

*Հնգամյակի կատարումը հիմնովին փոխեց ԽՍՀՄ յերիտասարդության աշխատանքի բնույթը, նրան արտադրական և տեսական ուսուցման խնդիրներին ավելի մեծ չափով յենթարկելու ուղղությամբ: Մենք արդեն հիմնականում լուծել ենք՝* անչափահասների համար արտադրական աշխատանքը տեսական ուսուցման հետ միավորելու խնդիրը:

*Հնգամյակի սկզբում ֆաբգործուսային դպրոցում սովորում էր միայն 190.000 մարդ. հնգամյակի վերջում մենք ունենալու յենք ֆաբգործուսային մեր դպրոցներում 1 և ½* միլիոն անչափահասներ: *Մեր արտադրական կենտրոնների, մեր քաղաքների անչափահաս բանվորները համարյա թե գլխովին ընդգրկված են ֆաբգործուսային աշակերտության դպրոցներով: Մենք այդ տեսակետից յուրահատուկ մարդապակաս ենք նկատում: Մենք արդեն քաղաքներում մարդ չենք գտնում ֆաբգործուսի մեջ գրավելու: Մենք հարկադրված ենք կոլտնտեսականներից բերել տասնյակ հազարավոր անչափահաս կոլտնտեսականներ մեր քաղաքները՝ ֆաբգործուսային դպրոցներում սովորելու: Մենք արմատական տեղաշարժեր ունենք բանվոր յերիտասարդության միջև՝ արտադրական աշխատանքը տեսական ուսուցման հետ ամենամեծ չափով միավորելու բնագավառում էլ: 2-րդ հնգամյակում մենք այդ խնդիրը վերջնականապես կլուծենք: Մեզ մոտ բարձրագույն ուսումնական դպրոցներում սովորում են ավելի քան 500.000 ուսանողներ, վորոնց գերազանց մասը կազմում է յերիտասարդությունը: Տեխնիկումներում սովորում են 800.000 մարդիկ, վորոնց մեծամասնությունը նույնպես ամբողջովին կազմում է յերիտասարդությունը, վորի թվում և բանվոր յերիտասարդությունը: Մենք վիթխարի տեղաշարժեր ունենք՝ աճող սերունդն արտադրության մեջ ներգրավելու բնագավառում: Ժողովրդական տնտեսության աշխատողների կազմի մեջ, վորի ընդհանուր քանակը հասնում է ավելի քան 19 միլիոն մարդու (բացի ՄՏԿ-ից և բատրակությունից), մինչև 23 տարեկանը մենք ունենք 6.366.000 մարդ, վորը ժողովրդական տնտեսության ընդհանուր սիստեմի մեջ զբաղված աշխատողների ընդհանուր քանակի մեջ կազմում է մոտ 33 տոկոս: Արդյունաբերության մեջ մինչև 23 տարեկան հասակ ունեցող յերիտասարդ բանվորների քանակը կազմում է 40,3* տոկոսը: Արդյունաբերության առանձին ճյուղերի մեջ, արդյունաբերության կարևորագույն ճյուղերում՝ բանվոր յերիտասարդությունը հանդիսանում է մի ուժ, վորը և վճռում է գործի յելքը, արդֆինպլանի կատարման յելքը:

*Արդյունաբերության առանձին ճյուղերում յերիտասարդների քանակը հետևյալն է՝*

| | |
|---|---|
| Քարածուխ . . . . | 45,9 տոկոս |
| Նավթ . . . . . | 30,0 » |
| Հանքագործական . . . | 35,0 » |
| Մետալուրգիական . . | 45,5 » |
| Մեքենաշինական . . . | 45,5 » |
| Ելեկտրատեխնիկական . . | 50,4 » |
| Քիմիական . . . . | 39,0 » |
| Փայտամշակման . . . | 40,6 » |
| Տեքստիլ . . . . | 32,6 » |

Մեզ մոտ բանվոր յերիտասարդության գործազրկություն չկա։

Մեր յերկրում յերիտասարդության քանակը մեզ չի բավականացնում այն ժամանակ, յերբ Ամերիկայում, ավելի քան 4 միլիոն յերիտասարդ բանվորներ գործազուրկ են, վորոնք չեն ստանում պետությունից և վոչ մի օգնություն։

Գերմանիայում գործազուրկ յերիտասարդության քանակը 1928 թվի համեմատությամբ մեծացել է 4 անգամ և կազմում է 1 և ½ միլ. մարդ։ Միայն Բեռլինում յուրաքանչյուր 3 յերիտասարդ բանվորներից մեկը գործազուրկ է հանդիսանում։ Դպրոցներում սովորողները, դպրոցներն ավարտողներն իրենց գիտելիքները գործադրելու վոչ մի միջոց չեն գտնում, հնարավորություն չեն գտնում հանդես բերելու իրենց գիտելիքները, իրենց ընդունակությունները արտադրության մեջ, արդյունաբերության մեջ, գյուղատնտեսության մեջ։ Դե՛, ասենք, դա այնքան էլ պատահական չէ, յեթե մենք ինկատի առնենք այն հանգամանքը, վոր Գերմանիայում մոտ 90.000 տեխնիկներ յերկարատև ժամանակ է՝ գործազուրկ են հանդիսանում։

Չեխո-Սլովակիայում ամբողջ յերիտասարդության մոտավորապես ¼ մասը գործազուրկներ են։

Անգլիայում կան 400.000 գործազուրկ յերիտասարդներ։

Յերիտասարդության այդ աճող գործազրկության ազդեցության տակ հանդես են գալիս «թափառաշրջիկներ»—ինչպես նրանց անվանում են բուրժուական թերթերը,—ամբողջական խմբեր՝ այն յերիտասարդ մարդկանց թվից, վորոնք քաշ են գալիս մի քաղաքից մյուսը, աշխատանք փնտրելու և սնունդի միջոցներ հոգալու համար։ Յուրատեսակ թափառաշրջիկության այս տեսակների դեմ հրատարակվում են զանազան օրենքներ, մի ամբողջ շարք միջոցառումներ։ Իսկ Գերմանիայում կառավարության կողմից կա-



յացրած հատուկ վորոշմամբ հարկադիր աշխատանք է մտցվում մինչև 25 տարեկան հասակը։

Այն ժամանակ, յերբ մեզ մոտ յերիտասարդ բանվորների դրությունը բարելավվում է, կապիտալիստական յերկրներում տեղի յեն ունենում դրա հակառակ յերևույթը։ Բանվոր դասակարգի նյութական մակարդակն իջեցնելու ուղղությամբ կապիտալիստների սկսած ընդհանուր արշավում այդ առանձնապես ծանր կերպով է անդրադառնում բանվոր յերիտասարդության վրա, և իբրև կանոն աշխատավարձն իջնում է։ Դպրոցն ավարտող աշակերտը, շնորհիվ գոյություն ունեցող գործազրկության, կյանքում հեռանկարներ չունի։ Ուսանողն ավարտելով ԲՈՒՀ-ը և մասնագիտություն ձեռք բերելով, հնարավորություն չունի այն գործադրելու։ Անելանելիություն, վաղվան օրվա անվստահություն։

Մեր դաստիարակչական աշխատանքի նորն այն է, վոր մենք գտնվում ենք նոր պայմաններում։ Այդ նոր պայմանները պահանջում են նոր ձևով աշխատել։

Մեզ մոտ միության մեջ մտնում է արդեն 1918 թվին ծնված յերիտասարդությունը։ Այստեղ ներկա յեղող պատգամավորներից շատերը, 1917–18 թվերին ցույց տալով գիտակից մասնակցություն յերկրի քաղաքական կյանքում և հանդիսանալով արդեն կոմյերիտականներ, ներկայումս դարձյալ գտնվում են կոմյերիտմիության մեջ աշխատանքում, և նրանք գործ են ունենում այնպիսի պատանիների հետ, վորոնք ծնվել են այն ժամանակ, յերբ մենք արդեն գտնվում եյինք կոմյերիտմիության մեջ։ Այն ժամանակ մեր միությունը հաշվում եր 22.000 մարդ։ Ներկայումս նա իր շարքերում հաշվում է մոտավորապես 5 միլիոն մարդ։ Մենք հեղափոխության այդ տարիների ընթացքում դաստիարակեցինք հարյուր հազարավոր յերիտասարդներ՝ պետական գործունեյության զանազան ճյուղերի համար։

Այդ ժամանակամիջոցում, մինչև 1931 թիվը ներառյալ, մենք լենինյան կոմյերիտմիության միջավայրից կուսակցու-

թյանն ենք հանձնել, վորպես կուս. անդամներ 756.000 կոմյերիտականների: Կոմյերիտմիությունը մեծ քանակությամբ մարդիկ է առանձնացրել իր շարքերից՝ մեր ռազմական, տնտեսական, կուլտուրական, քաղաքական և տնտեսական գործունեության զանազան ճյուղերի համար: Բազմաթիվ մասնագետներ ենք տվել մենք մեր միջավայրից: Կարելի յե գտնել գործարաններ, ուր մասնագետները հիմնականում հանդիսանում են յերիտասարդ մարդիկ, նախկին կամ ներկա կոմյերիտականներ, վորոնք ավարտել են բարձրագույն տեխնիկական ուսումնական հիմնարկները:

Օրինակ՝ Ստալինգրադի տրակտորի գործարանի մասնագետների մեծ մասը կազմում են յերիտասարդները, նախկին և ներկա կոմյերիտականներ: Ուկրայնայի գործարաններում կարելի յե ամենուրեք հանդիպել կարևորագույն բնագավառներ, այդ թվում նաև խոշորագույն գիգանտներ, ինչպես Խարկովի շոգեշարժերի գործարանը, վորտեղ իբրև մասնագետներ աշխատում են մեր բանվոր յերիտասարդները, նախկին կոմյերիտականներ, ներկա կոմյերիտականներ, նախկին կոմյերիտական աշխատողներ: Գնացեք Խորհրդային Միության ամենահեռավոր անկյունները, նորակառույցները, ինչքա՛ն դուք այնտեղ կհանդիպեք ծանոթ դեմքերի, ծանոթ մարդկանց, վորոնք ինքնուրույն կերպով հաճախ ղեկավարում են այնպիսի շինարարություններ, վորոնց արժեքը հարյուր միլիոններով է հաշվվում: Յես արդեն չեմ խոսում այն տասնյակ հազարավոր յերիտասարդ բրիգադիրների, վարպետների, յենթավարպետների, ցեխի պետերի մասին, վորոնք այժմ կան մեր գործարաններում:

Հարցրեք նրանց, թե ինչպես են նրանք այդպիսի մարդիկ դարձել: Նրանցից վոմանք ձեզ կպատմեն, թե ինչպես իրենք, մտնելով կոմյերիտմիության շարքերն անկուլտուրական, կիսագրագետ կամ անգրագետ մարդկանց վիճակում՝ ինչպես նրանք կյանք մտան, ինչպես դաստիարակվեցին լենինյան կոմյերիտմիության մեջ, նրա և մեր կուսակցության կողմից:



1930 թվին ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում աշխատող 289.500 մասնագետների ընդհանուր քանակի մեջ կային 35.000 յերիտասարդ մասնագետներ: Իսկ ներկայումս կան 750.000 մասնագետներ, վորոնց մեջ մոտ 100.000-ը յերիտասարդներ են: Մենք ունենք գործարաններ, ուր մասնագետների թվի մեծ մասը յերիտասարդությունն է կազմում:

1931 թվին գիտական աշխատողների մեջ մենք ունեյինք 2.500 յերիտասարդներ, 28.000 ընդհանուր քանակությունից. նրանցից 380 հոգի ինքնուրույն գիտական աշխատանք եյին կատարում: (Հապա փորձեցեք բուրժուական պետության մեջ գիտական աշխատող կամ պետական գործիչ դառնալ, առանց 35–40 տարեկան լինելու, մանավանդ յերբ բանվորի կամ գյուղացու ընտանիքից եք):

Շնորհիվ այս ընդհանուր իրադրության, մենք ունենք նոր հնարավորություններ աճող սերնդին ավելի հաջող քաղաքական և կուլտուրական դաստիարակություն տալու գործում: Բայց պետք է գիտենալ, թե ինչպիսի մարդկային կազմի հետ մենք գործ ունենք: Չէ՞ վոր 1918 թվին քաղաքային վոստիկան չկար, և ներկայիս կոմյերիտականը քաղաքային վոստիկանին չի ճանաչում: Նա պարզապես ֆիզիկականորեն չի կարող վորևե պատկերացում ունենալ նրա մասին: Այդ յերիտասարդ մարդը շատ հաճախ չի իմանում, և կամ համենայն դեպս թույլ է իմանում բանվոր դասակարգի պայքարի պատմությունը, նա չի իմանում, թե ինչ է գործազրկությունը: Իսկ մեր յերիտասարդ բանվորուհին չի իմանում, թե ինչ է ներկայացնում իրենից պոռնկությունը:

Պոռնկությունը—դա կապիտալիստական հասարակության հավիտենական ուղեկիցն է: Կապիտալիստական հասարակության մեջ առաջներում և ներկայումս հարյուր հազարավոր կանայք և աղջիկներ ստիպված են զբաղվելու բացահայտ կամ թաքնված պոռնկությամբ:

Արտադրական նոր հարաբերությունների հիման վրա

*մեզ մոտ կերտվում են նոր բարոյականություն, նոր էթիկա, նոր հարաբերություններ մարդկանց միջև, հասարակական նոր կապեր: Մարքսը, Էնգելսը, Լենինը մեզ սովորեցրել են այն, վոր գոյություն չունի հավերժամարդկային բարոյականություն, վոր ամեն մի բարոյականություն— դասակարգային է:*

Մեր բարոյականությունը—դա նա չէ, վորը պայթեցնում է կապիտալիզմը, վոչնչացնում է նրա մնացորդները, ամրացնում է պրոլետարիատի դիկտատուրան, առաջ է մղում սոցիալիզմի շինարարությունը: Մեր բարոյականությունը նրանումն է (վորի մասին ասում էր Լենինը), վորպեսզի մեր ուժերը, մեր գիտելիքները տանք ընդհանուր գործին:

*Իշխանության գլուխ յեկած պրոլետարիատը քննադատորեն վերամշակելով մարդկության կողմից կուտակված կուլտուրական հարստությունները, ստեղծում է իր հարստությամբ, իր բովանդակությամբ դեռևս չտեսնված նոր, բազմակողմանի կուլտուրա, նոր հասկացողություն այն մասին,* *թե* «ինչը կարելի չէ, ինչը չի կարելի»:

*Հին հասարակությունը հիմնված էր հետևյալ սկզբունքի վրա——կամ դու ուրիշին թալանիր, կամ նա քեզ կթալանի: Վորքան շատ կթալանես, այնքան ավելի խոշոր պատվավոր տեղ կգրավես դու կապիտալիստական հասարակության մեջ, շնորհիվ դրա դու հնարավորություն ունես կառավարելու պետությունը: Ցեվ դա կոչվում էր կապիտալիստական ազնվություն, վարքերի և բարքերի տեսակետից նա օրինական էր:*

*Կամ դու յես աշխատելու ուրիշի համար կամ ուրիշն է աշխատելու քեզ համար—ահա կապիտալիզմի բարոյականությունը: Մենք պայթեցրինք այդ բարոյականությունը: Մենք խփում ենք այդ բարոյականությանը, նրան հայտարարում ենք օրենքից դուրս, և նրանց, ովքեր փորձ են անում ապրել ուրիշի աշխատանքի հաշվին, լավագույն դեպքում կուլակաթափ ենք անում, կամ ուղարկում ենք «դժվարությամբ վե-*



*րադաստիարակվողների» գաղութները, ինչպես Սոլովկի: Այդպիսին է մեր պրոլետարական բարոյականությունը:*

*Բուրժուական հասարակության մեջ ամեն մեկը ձգտում է ապրել իրեն համար:*

*«Կարող է պատահել, ունևորների հանդեպ ներողամիտ լինելով, նրանց խաթրին չկպչելով՝ իշխանության համար, յես կպահպանեմ իմ փոքրիկ տեղը, գուցե նույնիսկ կկարողանամ փորձ անել բուրժուա դառնալու» (Լենին):*

*Այդպիսի իդեոլոգիան մշակման էր յենթարկվում բուրժուական հասարակության կողմից, վորի մեջ կենտրոնական հանդիսանում է անձնական բարիք ստանալն ուրիշների հաշվին:* Անձնական բարիք բուրժուական հասարակության մեջ աշխատավորը կարող է ստեղծել դավաճանությամբ՝ իր դասակարգի հանդեպ, կոմունիզմի իդեալների հանդեպ:

*Անձնական բարեկեցություն ստեղծում հնարավոր է միայն Խորհրդային Միության պայմաններում:*

Խորհրդային իշխանության 15 տարվա գոյության փորձը ցույց տվեց, վոր միայն այն ժամանակ անհատը կստանա իր ծաղկման բոլոր հնարավորությունները, յերբ բարիքի ստացումը ձեռք է բերվում աշխատավորության միլիոնների կողմից՝ համագործակցության միջոցով, կուսակցության ղեկավարությամբ, և վոչ թե ջոկ-ջոկ: *Խորհրդային յերկրի փորձը վկայում է այն մասին, վոր միլիոնավոր մարդիկ, վորոնց թվում առաջներում ճնշված ազգություններից, ուղղակի կերպով մոռացված և անիրավունք դրության մեջ գտնվող մարդիկ, հասարակակարգի մեր սխեմում սկսել են ապրել լավագույն կերպով, կուլտուրականորեն, սկսել են ապրել բազմակողմանի, դունեղ կերպով հատկապես նրա համար, վոր Խորհրդային Միության աշխատավորները համագործակցելով, միասին, կոլեկտիվ կերպով են վճռում պրոլետարիատի դիկտատուրայի ամրացման պրոբլեմը, բանվոր դասակարգի և գյուղացիության դիրքերի ամրացման պրոբլեմն ամբողջա-*

պես վերցրած և Խորհրդային Միության յուրաքանչյուր աշխատավորի պրոբլեմն՝ առանձնապես: Զանազան կարգի վուլգարիզատորները և սխեմատիկները, վորոնք նույնպես ճառում են սոցիալիզմի անունից, կարծում են, վոր լինելով կոլեկտիվիստներ, մենք դեմ ենք կանգնում անձնական բարեկեցությանը, իսկ մի շարք կեղծ կոմունիստներ, հատկապես մանր բուրժուական շերտերից դուրս յեկածները, նույնպես իրենց պատկերացնում են, վոր մենք կոմունիստներս դեմ ենք անհատական բարիքներին: Այդ ճիշտ չէ, ընկերներ, այդ սխալ է: Նրանք կարծում են, վոր մենք դեմ ենք 3-4 կահավորված, գեղեցիկ սենյակներին, կարծում են, վոր մենք դեմ ենք ծաղիկներին, յերաժշտությանը, դեմ ենք կոկիկ, մոդային համապատասխան կոստյումին, դեմ ենք մոդայի լավագույն դուլպաներին, կարծում են, վոր մենք ճնշում ենք առանձին անհատի ձգտումը, սոցիալիզմը պատկերացնում են վորպես դժգույն, մոնոտոն մի կազարմա, ուր ամեն ինչ արվում է բոլորին հավասարապես տրված կարգադրություններով: Այսպիսի հասկացողություն սոցիալիզմի մասին, հատկապես մանր-բուրժուական ինտելիգենցիայի, նրա առանձին շերտերի կողմից՝ բղխում է նրանից, վոր այդ մարդիկ մինչ այն աստիճան նեղմիտ են, վոր, լինելով վորպես արտոնյալ մի կաստա, ոգտվելով արտոնություններով, կապիտալիստական կյանքի բարիքների փշրանքներով, նրանց ֆանտազիան չի կարող առաջ գնալ այն բանից, վորպեսզի իմացարանեն, իմանան, վոր այնուամենայնիվ կյանքը կարող է լինել ավելի լավ, ավելի հետաքրքիր, քան այն, վորում նրանք գտնվում են:

Այո, մենք ճնշում ենք առանձին անհատի ձգտումները և ուղղակի ասում ենք.—յեթե այդ ձգտումները կրում են շահագործողական բնույթ, մենք այդ ձգտումները չենք խրախուսում, այլ ճնշում ենք: Բայց յեթե այդ ձգտումներն առողջ են, ապա նրանց զարգացնելու, հասունացնելու հնարավորությունները, նրանց բավարարելու հնարավորությունները վոչ



մի տեղ այնպես չեն, ինչպես մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ: Այն, ինչ կապիտալիզմը, Վլադիմիր Իլյիչի արտահայտությամբ, խեղդում էր, ճզմում, խորտակում էր հարյուրներով, միլիոններով, խորհրդային իշխանության որոք այդ հարյուրներն ու միլիոնները, վորոնք առաջներում ճնշվում եյին, խորհրդային իրականության պայմաններում, պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, լիակատար հնարավորություն են ստացել իրենց բարգավաճման համար:

Ահա ինչու համար, ընկերներ, պատահական չէ, վոր յերիտասարդության մեջ, մեր յերիտասարդ սերնդի միջավայրում, մենք կարողանում ենք հանդիպել գիտության ներկայացուցիչների, տեխնիկայի ներկայացուցիչների, մենք կարողանում ենք հանդիպել փթթող տաղանդների, կազմակերպիչների, գործարանների, կոլտնտեսությունների, գիտա-հետազոտական ինստիտուտների հարյուր հազարավոր յերիտասարդ ղեկավարների, հատկապես նրա համար, վոր միայն մեր, խորհրդային իրականությունն է հնարավորություն տալիս աշխատավորության միլիոնների ստեղծագործական բարգավաճման համար:

Մենք պայքար ենք տանում ինդիվիդուալիզմի դեմ: Մենք պայքարում ենք նեղ սահմանափակ, նեղ-անձնական ձգտումների և շահերի դեմ, բայց մենք,—և այդ բանը տարբերում է մեզ կապիտալիստներից,—տալիս ենք լրիվ, բազմակողմանի հնարավորություն ինդիվիդուալ հատկությունների ծաղկման համար: Մենք ինդվիդուալիզմին դեմ ենք, բայց մենք պայքարում ենք անհատականության լիակատար ծաղկման համար:

Մենք դժգույն և տխուր մարդիկ չենք, միևնույն «ղալըբի» մարդիկ չենք: Մեզնից յուրաքանչյուրի մոտ գոյություն ունեն իր սովորությունները: Մենք միևնույն պատմուճանը հագած մարդիկ չենք: Մեզնից յուրաքանչյուրն ունի իր անհատականությունը, ընդվորում դա վառ կերպով արտահայտվող անհատականություն է: Մեզնից յուրա-

քանչյուրն ունի ամուր կերպով արտահայտված իր բոլշևիկյան բնավորությունը, բայց այդ բոլորը միաձուլվում են մեր դասակարգի խնդիրների հետ, այդ բոլորը յենթարկվում են մեր դասակարգին, այդ բոլորն անխզելի կապակցության մեջ են գտնվում սոցիալիստական հասարակության կառուցման չափերի հետ: Հատկապես այն, վոր մենք մեր ամեն մի անձնական գիծը կապակցում ենք դասակարգի խնդիրների և չափերի հետ, այդ մեզ հոգեպես աճեցնում է, բարձրացնում է մեզ իդեական-քաղաքական ավելի բարձր մակարդակի վրա, օժանդակում է մեր աճմանը: Հատկապես դրա համար էլ մենք դառնում ենք առաջավոր մարդիկ, դառնում ենք մեր էպոխային արժանի մարդիկ: Այսպիսով ուրեմն, մենք դեմ չենք սիրո, դեմ չենք յերաժշտությանը, դեմ չենք ծաղիկներին և դեմ չենք լավ հագնվելու ձգտումներին: Ընդհակառակը, մենք կողմնակից ենք այդ բանին, բայց այդ բոլորը մենք յենթարկում ենք մեր դասակարգի խնդիրներին, վորովհետև մենք ստեղծում ենք նոր կյանք, ավելի գունեղ, ավելի հագեցած, մարդու համար ավելի հետաքրքիր կյանք: Մենք իրոք ստեղծում ենք այն կյանքը, վորի մեջ «մարդ բառը հպարտ է հնչելու», ինչպես ասում է Գորկին:

Դրա համար ենք մենք պայքարում, դրան ենք մենք ձգտում, ընդվորում մենք այդ բոլորն ստեղծում ենք բոլոր աշխատավորների համար, առանց տարբերելու այն, թե ինչպիսի ազգային ծագում ունեն նրանք, ինչ հասակի յեն, ինչ զբաղմունքի: Մենք այդ կանենք, մենք այդ կստեղծենք:

Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում, յեթե մենք համադրենք 19-րդ դարի յերիտասարդ մարդու պատմությունը, — յես նկատի ունեմ այն գրադարանը, վորը լույս է տեսնում Գորկու խմբագրությամբ, — մեր կոմյերիտական յերիտասարդության զարգացման պատմության հետ: Այդ անալոգիան (նմանությունը) մենք կարող ենք անցկացնել հարաբերականորեն, վորովհետև խոսքը գնում է վոչ միայն առանձին ժամանակների մասին, այլև առանձին դասակարգերի, առանձին շերտերի ներկայացուցիչների մասին: Այդ պատմությունը ցույց է տալիս կալվածատիրական, ինտելիգենտական, բուրժուական յերիտասարդության շրջահայացքը, իղձերն ու սպասելիքները: Միայն կոնկրետ-պատմական մոտեցում հանդես բերելով այդ մարդկանց, մենք կարող ենք հասկանալ, թե ինչո՞ւ այդ ժամանակների ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներն ստիպված եյին վատնելու իրենց լավագույն ուժերն անձնական ապրումների վրա, ինչո՞ւ նրանք դառնում եյին «ավելորդ» մարդիկ հասարակության մեջ:

«Դարի վորդու խոստովանության» մեջ Ալֆրեդ Մյուսեն, նկարագրելով Նապոլեոնի անկումից հետո ռեակցիայի տարիները (Լյուդովիկոս 18-րդի և Կարլոս 10-րդի մոնարխիան), գրում էր — «...Խորտակվող աշխարհի ավերակների վրա բարձրացվող մտահոգված յերիտասարդությունը... Նրանք նայում եյին յերկրին, յերկնքին, փողոցին, ճանապարհին — ամենուրեք դատարկություն էր, և միայն հեռվից լսվում էր նրանց ծննդավայրի յեկեղեցիների զանգակների ձայնը... Յերբ յերեխաները խոսում եյին փառքի մասին, նրանք պատասխանում եյին — «գնացեք վանքը» — յերբ նրանք խոսում եյին պատվասիրության մասին — «գնացեք վանքը» — հույսի, սիրո, ուժի, կյանքի մասին — վորպես պատասխան հնչում էր — «գնացեք վանքը».

Մեր հեղափոխության մեջ չի յեղել մի օր, և այդպիսի օր չի լինի, յերբ յերիտասարդ սերնդի այն հարցերին, թե ինչ անել, մեզ չպատասխանեյին — «Գնացեք պայքարելու շահագործողների դեմ, գնացեք դժվարությունների հանդեպ, հաղթահարեցեք նրանց»: Նախորդող դարերի վոչ մի յերիտասարդ սերունդ չի ունեցել այնպիսի բազմակողմանի, գունեղ կյանք, վորպիսին ունենք մենք, բանվորների և գյուղացիների սերունդը, մի սերունդ, վորն իր սկզբնավորումն առնում է բոլշևիկներից:

*Պատասխանելով քննադատների հանդիմանություններին, Լերմոնտովն իր «Մեր ժամանակի հերոսը» գրքի առաջաբանում գրում էր.—«Մեր ժամանակի հերոսը... ճիշտ և ճիշտ պորտրետ է, բայց վոչ մի մարդու.—նա մի պորտրետ է, կազմված մեր վողջ սերնդի արատներից՝ նրանց լիակատար զարգացման մեջ»:*

*Լերմոնտովն հասկանում էր, վոր նա ինքը ցույց չի տալիս յելք այդ դրությունից, նա միայն նշում էր հիվանդության մասին: Մի ուրիշ տեղում, «Խոհ» բանաստեղծության մեջ նա գրում է.*

«Թախծով եմ նայում յես մեր սերնդին,
Նրա ապագան սին է կամ մթին.
Կրքած գիտության ու կասկածանքի
Ծանրության ներքո,
Թառամում է նա իր անգործ կյանքով:
Հենց որորոցից հարուստ ենք մենք հար,
Անմիտ հայրերի բյուր սխալներով.
Ձանձրում է կյանքը, վոնց աննպատակ—
Վողորկ ճանապարհ,
Վոնց խնդությունը խնճույքում ոտար»:

*Այն ժամանակ կալվածատիրության, իսկ հետագայում արդեն մանր-բուրժուական ռադիկալ ինտելիգենցիայի հիմնական տոնը, դա—ժամանակից շուտ թառամելը, այդ հասարակության դեմ բողոքելու զգացմունքների հողնածությունն է:* Խզումը հասարակության հետ—ահա՝ ինչն էր բնորոշում այն ժամանակվա յերիտասարդության լավագույն մտքերի դրությունը:

*Իսկ մեզ մոտ հենց հակառակն է կատարվում: Աշխատավորները հասարակության մեջ միաձուլվել, միավորվել են բոլոր խնդիրներում, հայացքներում, պայքարի ընդհանրության մեջ: Հասարակությունը, վորը դրոհում է ու ավերում կապիտալիզմը, արմատախիլ է անում նրա մնացորդները, հաջողությամբ կառուցում է նոր կյանք, նոր հասարակարգ,*



*սոցիալիզմի հասարակարգը, այդ սոցիալիզմի վոգով է դաստիարակում աճող սերնդին: Ահա ինչո՞ւ համար է աճում նոր մարդը, նոր պատմության հետ: Յեվ այդ նոր, ծաղկող մարդը հանդիսանում է վոչ միայն վորպես դաստիարակվող, այլև հանդիսանում է ակտիվ մասնակիցն այդ պայքարի, այդ շինարարության, ինքնադաստիարակման յենթարկվելով նրա պրոցեսում:*

14–15 *տարի սրանից առաջ, իսկ յերբեմն էլ ավելի առաջ, մեզնից ամեն մեկը մասնակցություն էր ցույց տալիս մեզ շրջապատող իրերի դրությունը վերափոխելու գործում: Մենք բոլոր ուժերը նվիրեցինք նրան, վորպեսզի արմատահան անենք «վայրենությունը մեր հասկացողությունների մեջ», անզարգացած, հետամնաց դրությունը, անկուլտուրականությունը, աղքատությունը, «մտքերի խավարումը»: Մենք մեր ուժերը նվիրել ենք կուսակցության գիծն անցկացնելու գործին, վորն ուղղված է լիկվիդացիայի յենթարկելու մարդու շահագործումը մարդու ձեռքով, ստեղծելու համար այնպիսի պայմաններ, յերբ աշխատանքը կդառնա ամենաառաջնակարգ պահանջը:*

*Նայեցեք ապա մեր, այսպես կոչված, սեզոննիկի վրա, վորը սրանից* 2—3 *տարի առաջ է յեկել արտադրության մեջ, շինարարության վրա: Նա այժմ, այդ յերկու տարուց հետո, իր պորտրետի վրա նայում է վորպես իր պապի պորտրետի վրա՝ յերիտասարդ հասակում: Ահա թե ի՞նչպես, ընկերներ, կյանքը փոխում է մարդկանց: Ահա թե ի՞նչպես խորհրդային իրականության պայմանները մարդկանց շարժում են դեպի առաջ, ահա թե ի՞նչպես է աճում յերիտասարդ սերունդը:*

*Նույնիսկ նախկին անապաստանը, գողը, խուլիգանը մեր իրականության բոլոր պայմանների միջոցով արմատապես վերադաստիարակվում է, դառնում է լավագույն հարվածային, իսկ հաճախ նաև ինժեներ:*

*Բուրժուական հասարակությունը ծնել է վոչ միայն հա-*

վերորդ» և ճախողված մարդ: Նա նմանապես առաջ է քաշել նաև մարդկի՝ իրենց դասակարգային գայլի բարոյականությամբ, վորոնք մարդու վրա նայել են վորպես մի աստիճան, վորի վրայից կարելի յե թռչել ավելի վերև: Այդ բանը հատկապես վառ կերպով արտացոլված է 19-րդ դարի բուրժուական գրող Բալզակի ստեղծագործության մեջ,— «Խփե՛ք առանց խղճահարության—և ձեզանից կվախենան»: «Նայեցե՛ք մարդկանց և կանանց վրա միայն վորպես փոստատար ձիերի, վորոնց դուք թողնում եք հանգստանալու յուրաքանչյուր կայարանում, և դուք կհասնեք ցանկության գագաթին»:

«Ազնվությունը վոչնչի չի հանգեցնի»: Նրա հերոսը, աքսորական Վատրենը, «Հայր Գորիո» գրքում հայտարարում է.—«Ամուր կերպով մի՛ կանգնեք վո՛չ ձեր համոզմունքների, վո՛չ ձեր խոսքերի վրա: Երբ կպահանջվի—ծախեցեք նրանց»:

Ժուռնալիստ Բլոնդեն, դարձյալ մեկը նրա հերոսներից, ասում է.—

«Դուք սպանում եք մի մարդու, ձեզ գիլյոտինի յեն յենթարկում: Բայց յեթե, ղեկավարվելով կառավարական վորևե նկատառումով, դուք սպանում եք 500 մարդու.— ձեզ հարգում են, բոլորը հարգում են քաղաքական վոճրագործությունները: Ահա իսկական սկզբունքներն այն վոսկեդարի, վորում մենք ապրում ենք»:

Ահա կապիտալիզմի գայլի օրենքները: Ցավ շատ մարդիկ սովորված եյին կամ յենթարկվել այդ օրենքներին և ապրել նրանցով, կամ խորտակվում եյին նրանց ճնշման տակ:

Բալզակի այդ մի քանի արտահայտությունների մեջ առանձին ցցունությամբ ցույց են տրված մարդկության հոգեկան քայքայումը և այլանդակումը, նրա բարոյական դատարկացումը, վորը բերում է իր հետ կապիտալիզմը:

Բայց թե դա տեղի յեր ունենում վոչ միայն առաջներում: Կրիզիսի ազդեցության տակ հարյուր հազարավոր յերեխաներ սովամահ են լինում քաղցից, իսկ խոշոր ունեցվածքների տերերը, չիմանալով ուր սպառել կաթի ավելցուկները, լցնում են նրանց գետերի մեջ և այնպիսի քանակությամբ, վորից խորտակվում է ձուկը: Այսպես է, օրինակի համար, Ամերիկայում: Վառում են հացը, այրում են նրան և ուրիշ մթերքներն այն ժամանակ, յերբ կինը, քայլելով Բեռլինի, Նյու-Յորքի, Լոնդոնի փողոցներով, հարկադրըված է զբաղվել պոռնկությամբ՝ մի կտոր հացի բացակայության պատճառով:

Գործազուրկ բանվորներին, վորոնք մի դույզ կոպեկներ են գողանում, բանտ են նստեցնում, պատժում են: Իսկ իմպերիալիստական պատերազմում սպանված 10 միլիոն մարդկանց, կրիզիսից միլիոններով մեռնող մարդկանց մեղավորները ման են գալիս ազատության մեջ, ոգտվում են ազնիվ, չարատավորված մարդկանց փառքով, իսկ վոմանք նրանցից,—ինչպես հրաժարական տված Վիլհելմ կայսրը, տասնյակ միլիոնների հասնող սուբսիդիաներ են ստանում՝ գերմանական յերախտապարտ, այսպես կոչված «դեմոկրատական», «ժողովրդական» կառավարության կողմից, իհարկե, փառաբանված, «օրթոդոքսալ» գերմանական սոցիալ-դեմոկրատիայի համաձայնությամբ և հավանությամբ:

Հակառակ մեր յերիտասարդության՝ հետագա աճման պարզ հեռանկարների, հակառակ նրա այն ամուր համոզմունքին, վորը նա ունի վաղվա օրվա նկատմամբ, կապիտալիստական յերկրների յերիտասարդության մոտ վոչ մի հեռանկար գոյություն չունի: Հակառակ մեր յերիտասարդության, վորը պարզ գիտե՝ ուր գնալ և ինչ անել, կապիտալիստական յերկրների յերիտասարդ սերունդը դես ու դեն է ընկնում՝ փնտրելու պատասխան իր հարցերի.—ո՞ւր գնալ: Ո՞ւր է յելքը: Ի՞նչ անել: 2-րդ Ինտերնացիոնալի առաջնորդ Օտտո Բաուերը, իր վերջին գրքում ասում է.—«Յերիտասարդ սերունդը կորցրել է իր հավատը կապիտալիզմի հանդեպ: Բայց թե նա վո՞ր կողմը պետք է գնա՝ կորցնելով հավատը: Յերիտասարդ սերունդն անպատասխան դրության մեջ է: Նա վոչ մի յելք չի տեսնում. կա՞ արդյոք յելք: Վո՞ր-

*տեղ է այդ յելքը»: Յեվ կամ ահա դարձյալ մի հատված, վորը բնորոշում է յերիտասարդ սերնդի վիճակն Արևմուտքում:*

*Գերմանական ժուրնալ «Տագեբլատը» գրում է.—*

«Նոր սերունդը թևակոխում է կյանք և նա դիակի վերածվելու համար կարիք չունի նույնիսկ զինվորական համազգեստ հագնելու: Այն պետերազմում, վորը մենք այժմս տանում ենք, կռվի դաշտը մի քիչ այլ պատկեր կունենա, քան 1918 թվին, բայց մարդկային այն զոհերը, վոր պահանջում է այդ պատերազմը, պակաս հրեշային չեն: 1932 թվի աշնանը Մոլոխը (պատերազմի աստվածը) կկլանի ելի ամբողջ մի սերունդ և նույնիսկ վիճակագրությունը չի նշի այդ փրոնտը»:

*Գերմանական բուրժուական «Ֆոսսիշե Ցայտունգ» թերթը գրում է.—*

«Մեր աչքի առջևն է հարյուր հազարավոր յերիտասարդ մարդկանց վշտոտ պատկերը, վորոնք մնացել են փողոցում և կորցրել են ամեն տեսակի կապն իրենց պրոֆեսիայի հետ: Նրանք զրկված են իրենց մասնագիտության բնագավառում կատարվող տեխնիկական պրոգրեսին հետևելու հնարավորությունից: Նրանց հոգեկան զարգացման մեջ վրա յե հասել ընդհատում: Նրանց կյանքը դարձել է անբովանդակ, և նրանք մոլորված են:

Այդպիսին է ամբողջ մի սերնդի բախտը»:

*Ահա թե ինչպիսի մռայլ հեռանկարների յեն հանդում բուրժուական քաղաքագետները: Այո, նրանց համար— բուրժուազիայի համար, կապիտալիստական ամբողջ սիստեմի համար իրենց առաջ յելք չկա: Աշխատավորական մասսաների համար, կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի համար յելք կա:*

*Ո՞ւր է այդ յելքը: Իհարկե, այդ հարցի պատասխանը վո՛չ Օտտո Բաուերը և գերմանական սոցիալ-դեմոկրատները, վո՛չ էլ բուրժուական քաղաքագետներից վորևէ մեկը տալ չեն կարող: Նրանք անհույս կերպով շփոթվել են:* Յելքը կա: Պատասխանը տալիս են խորհրդային Միության վիթխարի



հաջողությունները, բոլշևիզմի տեսությունը, պրակտիկան և պատմությունը:

*Կապիտալիստական յերկրների բանվորները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ տարվող իրենց ամենօրյա պայքարի փորձի վրա, Խորհրդային Միության հաջողությունների օրինակով՝ ըմբռնում են բոլշևիզմի ճըշմարտությունը և կանգնում են նրա ուղու վրա: Այդ ճանապարհի մեջն է միակ յելքը: Դա պրոլետարական հեղափոխության ճանապարհն է, դժվարին, բայց հարցը միանգամ ընդմիշտ լուծող ճանապարհը:*

## ՍՈՑՄՐՑՈՒՄՆ ՈՒ ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Յես, ընկերներ, անցնում եմ մրցության հարցին: Ի՞նչ է մրցությունը: Մրցությունը կոնկուրենցիա չէ: Ընկ. Ստալինը Նիկուլինայի գրքույկի իր առաջաբանում ասում է.*

«Սոցիալիստական մրցությունն ու կոնկուրենցիան ներկայացնում են յերկու բոլորովին տարբեր սկզբունքներ: Կոնկուրենցիայի սկզբունքը վոմանց պարտությունն է ու մահը և մյուսների հաղթանակն ու տիրապետությունը: Սոցիալիստական մրցության սկզբունքը առաջավորների կողմից ընկերական օգնությունն է հետ մնացողներին՝ այն իմաստով, վորպեսզի ձեռք բերել ընդհանուր վերելք: Կոնկուրենցիան ասում է. խփիր հետ մնացողներին, վորպեսզի հաստատես քո տիրապետությունը: Սոցիալիստական մըրցությունն ասում է.—մեկը վատ է աշխատում, մյուսը՝ լավ, յերրորդը՝ ավելի լավ, հասիր լավագույններին և ձեռք բեր ընդհանուր վերելք»:

*Ահա թե ինչ է սոցիալիստական մրցությունը: Մեզ մոտ կան զանազան տհաս «փիլիսոփաներ», վորոնք ջանում են սոցիալիստական մրցության և կոնկուրենցիայի միջև նմանություններ գտնել: Նրանք չեն հասկանում, կամ չեն ցանկանում հասկանալ մեր իրավակարգի սոցիալիստական բնույթը:*

*Կապիտալիստական կոնկուրենցիան ուղղված է վոչ թե միլիոնավոր աշխատավորության նյութական բարեկեցու-*

թյան բարելավման ուղղությամբ, այլ առանձին ղեկավարող խմբակների, արտադրության միջոցների տիրապետողների ուժեղացման ուղղությամբ այն ժամանակ, յերբ սոցմրցությունը ուղղակի հետապնդում է աշխատավորության նյութական դրության բարելավումը: Սոցիալիստական մրցությունը իր բնույթով մասսայական չլինել չի կարող, վորովհետև նրանում պարտադիր ձևով ներգրավվում են բանվորների, կոլտնտեսականների, աշխատավորության միլիոնավոր մասսաները, վորոնք կոնկրետ գործում զարգացնում են իրենց ընդունակությունները, իրենց տաղանդը, այսինքն այն ամենը, ինչ առաջ կապիտալիզմի կողմից դաժանորեն խեղդվում էր, զսպվում էր ճնշման տակ և չէր կարող զարգանալ: Այդ ստեղծագործական վերելքը և խաշորագույն տաղանդների առաջ քաշումը հնարավոր է միայն այն դեպքում, յերբ պրոլետարիատն իշխանության գլուխն է անցնում և իր ձեռքն է վերցնում արտադրության բոլոր միջոցները:

Ի հակակշիռ կապիտալիստական կոնկուրենցիայի, սոցիալիստական մրցումը մի մարդուն չի ճնշում մյուսի կողմից, կամ մի խումբ բանվորների ուրիշ խումբ բանվորների կողմից, այլ ընդհակառակը, մի մարդն ոգնում է մյուս մարդուն, մի խումբ աշխատավորները մյուս խմբին, փոխօգնություն է սահմանում, առաջավորները բուքսիրի յեն վերցնում հետ մնացողներին, աշխատանքը գնում է համերաշխ, և վերջին հաշվով շահում են բոլորը և յուրաքանչյուրը. պետությունը դառնում է ավելի ուժեղ, և յուրաքանչյուր աշխատավոր նյութական-կուլտուրական տեսակետից սկսում է ավելի լավ ապրել:

Սոցմրցում կիրառելով, մենք մրցողների քաղաքական և կուլտուրական հորիզոնը դուրս ենք բերում ցեխի, գործարանի, կոլտնտեսության սահմաններից, առանձին ուսումնարանի, կոլտնտեսության սահմաններից, առանձին արտադրամասի շրջանակներից, հասկանալու վոչ միայն տվյալ ձեռնարկության, տվյալ արտադրական պրոցեսի ամբողջ ընթացքը, այլև տիրապետելու ժողովրդական տնտեսության, պետության կառավարման խնդիրներին: Մենք քաղաքականապես և կուլտուրապես հասունացնում ենք մրցողներին,



նրանց հաղորդակից ենք դարձնում համապետական գործունեությանը, նրանց հասկացնում ենք համապետական խնդիրներն ու շահերը: Ահա թե ինչու պատահական չէ, վոր անգամ պիոները հաճախ իր անհատական ուսումը դիտում է համապետական շահի տեսակետից: «Ի՞նչ կմտածի իմ մասին կոմյերիտմիությունը կամ մեր կուսակցությունը,— ասում է նա,—յեթե յես վատ սովորեմ»: Յուրաքանչյուր պիոներ իր փոքր ու մեծ արարքներում սկսում է յելնել ամբողջ պետության նկատառումից, այդ պետության շահերից, մեր կուսակցության շահերից, բանվոր դասակարգի շահերից:

## ԱՌԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՐՁՐ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԿԱ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Սոցմրցակցությունն անքակտելիորեն կապված է աշխատանքի կազմակերպման խնդիրների, հաշվառման և կոնտրոլի հետ, արտադրության կազմակերպման, արտադրական պրոցեսի կանոնավոր վերաբաժանման, ընկ. Ստալինի 6 ցուցումների կատարման խնդիրների հետ: Դաղդյահի մոտի աշխատանքի կազմակերպման խնդիրներից մենք մոտենում ենք պետության ղեկավարման խնդիրներին: Մրցության մասնակիցների միջավայրից մրցության հազարավոր կազմակերպիչներ առաջ են քաշվում վարչական-տնտեսական աշխատանքի:

Ներկայումս սոցմրցության մեջ վո՞րն է գլխավորը:

Գլխավորը նրանումն է, վորպեսզի աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել այնպիսի բարձունքի, վորի վրա նա չի յեղել և չէր էլ կարող լինել կապիտալիստական հասարակարգում: Առանց աշխատանքի բարձր արտադրողականության սոցիալիզմ լինել չի կարող:

Այդ պետք է յուրացնի յուրաքանչյուր յերիտասարդ բանվոր, յուրաքանչյուր յերիտասարդ կոլխոզնիկ: Սոցիալիզմը պահանջում է աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն՝ ֆիզիկական էներգիայի նվազագույն ծախսման հետ միասին՝ քան է կապիտալիստական յերկրներում: Սոցմրցակցությունը պլանավորման, աշխատանքի ռացիո-

նալիզացիայի, տեխնիկայի տիրապետման համար պայքա-
րի, տեխնիկական դիսցիպլինների ուսումնասիրման, ընկեր
Ստալինի վեց ցուցումների կատարման պայմաններում աշ-
խատավորության քաղաքական և նյութական-կուլտուրական
.մակարդակի բարձրացման հետ միասին, վերջին հաշվով
մեզ տալիս է աշխատանքի ամենաբարձր արտադրողականու-
թյունը, և այն էլ այնպիսին, վորի մասին չի յերազել և չի
կարող յերազել և վոչ մի կապիտալիստական յերկիր:

Վլադիմիր Իլյիչն իր «Մեծ նախաձեռնություն» աշխա-
տասիրության մեջ գրել է. «Աշխատանքի արտադրողակա-
նությունը՝ այդ վերջին հաշվով ամենից կարեվորն է, ամե-
նից գլխավորը նոր հասարակական իրավակարգի հաղթանա-
կի համար: Կապիտալիզմն ստեղծեց ճորտատիրության ժա-
մանակ չտեսնված աշխատանքի արտադրողականություն.
կապիտալիզմը կարող է վերջնականապես պարտվել և վերջ-
նականապես կպարտվի նրանով, վոր սոցիալիզմը կստեղծի
նոր, ավելի բարձր աշխատանքի արտադրողականու-
թյուն»:

Ահա մրցման վողնաշարը: Մրցումը մենք կազմակեր-
պում ենք վոչ իբրև ինքնանպատակ մի բան, այլ նրա հա-
մար, վորպեսզի ստեղծենք աշխատանքի այնպիսի արտա-
դրողականություն, վորպիսին չի տեսել կապիտալիստական
աշխարհը: Հասարակ լեզվով ասելով, այդ նշանակում է այն,
վոր մրցումը պետք է ապահովի մեր պլանների կատարումը,
այն պլանների, վորը սահմանում ենք մենք ինքներս: Ցեվ
պետք է ասել, վոր հարվածայնությունն արդեն իսկ աշխա-
տանքի բարձր արտադրողականության հրաշալի արդյունք-
ներ է տվել շինարարության մեջ, արդյունաբերության մեջ,
կոլտնտեսություններում:

## ՃԱՆԱՉԵԼ ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

Իզուր չէ, վոր մենք լենինյան կոմյերիտմիության մեջ
ունենք բազմաթիվ ընկերներ, վորոնց թվում և կոնֆերեն-
ցիայում մասնակիցներից այնպիսիները, վորոնք կառավա-



րությունից ստացել են բարձրագույն պարգևը՝ Լենինի շքա-
նշանը:

Բայց և այնպես, պետք է շիտակն ասել, վոր լենինյան
կոմյերիտմիության մեջ այդ ընկերների թիվն ավելի շատ
պետք է լիներ: Բարձրագույն պարգևատրման արժանիներ
մենք շատ ունենք: Բայց ինչո՞ւմն է գործը: Գործը նրանու-
մըն է, վոր տեղական կոմիտեները չգիտեն իրենց հերոսնե-
րին: Մեր միության IX համագումարում ԿԿ-ի զեկուցման
մեջ հարկ յեղավ այդ մասին հատկապես խոսել և այսոր
հարկ է լինում դարձյալ այդ մասին հիշեցնել: Մենք ունենք
բոլոր անհրաժեշտ պայմանները լավագույն յերիտասարդ
հարվածայիններին բարձրագույն պարգև տալու համար:
Կառավարությունը մեզ այս հարցում ընդառաջում է: Բայց
դժբախտությունն այն է, վոր մեր կոմիտեները չգիտեն, թե
ո՞ւմ ներկայացնեն: Մեր արդյունաբերական կազմակերպու-
թյունները պետք է ուշադրություն դարձնեն այդ խնդրին:
Հիշեք ի՞նչ էր ասում ընկ. Կագանովիչը կոմյերիտականի
նկատմամբ նրբազգաստ մոտեցման մասին, առանձին մար-
դու համար պայքարի մասին՝ ընդգծելով, վոր կոմյերիտ-
միության խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի յուրա-
քանչյուր կոմյերիտական գիտենա, ինչո՞վ է նա ապրում, ին-
չո՞վ է շնչում, գիտենալ նրա տարակուսանքները, տատա-
նումները, գաղափարապես նրան դաստիարակել, նրան՝ տա-
րակուսանքներից և տատանումներից ազատագրելու համար
ժամանակին ոգնության հասնել:

Զարգացնելով սոցմրցությունն ու հարվածայնությու-
նը, մենք աշխատանքի նոր դիսցիպլինա յենք ստեղծում:

Ձեզ նաև հայտնի յեն ընկ. Ստալինի այս խոսքերը.

«Սոցմրցության մեջ ամենից կարևորը կայանում է նրա-
նում, վոր նա մարդկանց դեպի աշխատանքն ունեցած հա-
յացքներում արմատապես հեղաշրջում է կատարում, քանի
վոր նա աշխատանքն անպատվաբեր և ծանր լծից՝ ինչպես ա-
ռաջներումն էր համարվում, վերափոխում է փառքի գործի,
պատվի գործի, հերոսության և արիության գործի»:

## ՀԱՐՎԱԾԱՅԻՆԻՆ ԱՄԵՆԱԼԱՎԱԳՈՒՅՆ, ԱՄԵՆԱՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂԸ ԿՅԱՆՔՈՒՄ

*Ահա դեպի աշխատանքն ունեցած հենց այդ եյականն ու սկզբունքայինն է, որ մեր իրավակարգը տարբերում է կապիտալիստականից, մեր բարոյականությունը՝ կապիտալիստականից:*

Մեզ մոտ աշխատանքը—այդ պատվի, փառքի, արիության և հերոսության գործ է, նրանց մոտ աշխատանքը—այդ նախատինք է, այդ ատելի ծանրություն է, այդ դժբախտություն է և անփառունակություն:

*Հենց դրա համար էլ նրանց մոտ աշխատավորին ատում են, մարդու տեղ չեն դնում: Մեզ մոտ լավագույն աշխատավորին՝ հարվածայինին մեծարում են դարաշրջանի վահանի վրա, լավագույնների անունները գրում են գործարանների պատմության մեջ, նրանց մասին գրում են թերթերում և պարգևատրում են պրոլետարական բարձրագույն պարգևով՝ Լենինի շքանշանով: Նրանց մոտ, կապիտալի յերկրներում, ֆիզիկական աշխատանքով զբաղվող մարդու համար կյանքում տրամադրված է վատագույն անկյունը: Մեզ մոտ բանվոր-հարվածայինին, կոլտնտեսական-հարվածայինին տրամադրված է կյանքում առաջին, ամենից լավ, ամենից պատվավոր տեղը, և շնորհիվ դրան մենք ջարդում ենք կապիտալիստական տարրերին ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ բարոյական-հոգեբանական տեսակետից: Կարելի յե բերել ամենասպանիչ փաստը: Ստուգեք՝ մեր յերիտասարդությունն ունի՞ կապիտալիստ, հարուստ դառնալու ձգտում: Հարցրեք մեր գյուղում որևե յերիտ. կոլտնտեսականի—«ի՞նչ ես ուզում դառնալ» և փորձեք պատասխան գտնել—«ուզում եմ հարուստ լինել»: Նման պատասխան չեք գտնի, քանի որ կապիտալիզմը մենք ջարդել ենք ոչ միայն տնտեսապես, այլև նրա արմատներն ենք դուրս հանում. մենք կապիտալիզմը բարոյական տեսակետից այնպես ենք դիմակազերծ արել, որ հարկավոր է գտնել մի ապուշ, որպեսզի ցանկանար մեզ մոտ պորտաբույծ դառնալ:* Ցել սա



*մեծագույն խաղթանակն է: Վերցրեք մեր ժամանակակից խորհրդային յերեխային: Առաջներում այն հարցին, «ի՞նչ ես ուզում դառնալ»—յերեխան սովորաբար պատասխանում եր՝ «ուզում եմ հարուստ լինել»: Առաջներում այդպես եր յերեխայի պատասխանը: Իսկ հիմա՞: Հարցրեք մեր խորհրդային յերեխային՝ նա ի՞նչ է ուզում դառնալ, և դուք կտեսնեք թե ի՞նչ է պատասխանում: Նա ձեզ կպատասխանի, որ ուզում է դառնալ ինժեներ, տեխնիկ, կոմյերիտական և նույնիսկ ուզում է Ստալին դառնալ:*

*Այդ բոլորը, թվում է՝ մանրուք են: Բայց այդ մանրուքները բնութագրում են մեր ամբողջ դարաշրջանը:* Նրանք վկայում են այն մասին, որ մեզ մոտ յերկրում տեղի յեն ունեցել այնպիսի խորը, մեծագույն տեղաշարժեր, որ վերադարձ դեպի անցյալը և դեպի կապիտալիզմը բացարձակորեն անհնարին է:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՆՈՐ, ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

*Սոցմրցումն ու հարվածայնությունը մեզ տանում են դեպի կապիտալիստական հասարակարգի վայրենության և անհեթեթության մնացորդներից ազատագրվելը, ստախանաբար մեզ սովորեցնում են առանց առանձին հարկադրանքի՝ պահպանելու համակեցության սոցիալիստական կանոնները: Չե՞ որ առաջ պրոլետարիատի մեջ սահմանված եր իր կարգապահությունը, որի իմաստը հետևյալ ֆորմուլայի մեջ եր կայանում.—«ինչո՞ւ յեմ աշխատում տիրոջ համար, ապուշ հո չեմ, որ իմ ձեռքով ինձ հալումաշ անեմ»: Այժմ նայեցեք, թե համակեցության ինչպիսի կանոններ են մշակվում մեզ մոտ: Տեր չկա, բանվորն ինքն է տերը: Վերակացու չկա, ինքն է իր վերակացուն: Քո կողքին կանգնած բանվորը քանի դեռ քո կողմից վատ բան չի տեսել, նույնպիսի բանվոր է, բայց յեթե դու վատ աշխատես, ծուլություն անես, աշխատանքից հետ մնաս, նա քեզ կկպցնի և կասի—«ինչո՞ւ յես հիմարի տեղ դնում»:*

*Յեթե դու կոլտնտեսական ես և դուր վազեցնում ես*

ձիուն, քո կողքին աշխատող մյուս կոլտնտեսականը, գյուղական վորոշ անկուլտուրականության հետևանքով՝ ավելի խիստ կարտահայտվի.—«եդ ի՞նչ ես անում, շուն շան որդի»: Իսկ յեթե դիտմամբ փչացնես մեքենան, ապա քո կողմից կատարված այդ փաստի ականատես մեկ ուրիշը բռունցքներով կհարձակվի քեզ վրա, և դա միանգամայն իրավացի յէ:

Բոլոր այս փաստերը խոսում են այն մասին, վոր մեծ հեղաշրջում է կատարվել մարդկանց հայացքների, հոգեբանության մեջ: Բայց նրանք խոսում են նաև այն մասին, վոր մենք առանց հատուկ հարկադրիչ ապարատի ազատագրվում ենք կապիտալիստական հասարակարգի վայրենություններից: Ճիշտ է, մեզ մոտ դեռ կան բազմաթիվ անկանոնություններ: Բայց մենք կատաղորեն վերացնում ենք նրանց, մենք մեզ համար հանրակացարաններ ենք կառուցում, կազմակերպում ենք մեր կենցաղը, առաջ ենք գնում, վերադաստիարակվում ենք: Իսկ ի՞նչպես է կապիտալիստական հասարակարգում: Չե՞ վոր այնտեղ ես համակեցության ամենատարրական կանոնների պահպանումն անիմաստ է առանց հատկապես ստեղծված խոշոր հարկադրիչ ապարատի: Այնտեղ յուրաքանչյուր քայլափոխում դուք կգտնեք տերեր, վոստիկան, վերակացու, լրտես, այնինչ մենք մեր սոցիալիստական գործարանում, մեր կոլտնտեսությունում ստեղծում ենք աշխատանքի նոր կարգապահություն, սկզբունքորեն տարբեր վերաբերմունք աշխատանքի հանդեպ, և այդ ամենն առանց հատկապես ստեղծված հարկադրիչ ապարատի:

Իհարկե, այս ամենը չի նշանակում, թե մեզ մոտ թերություններ չկան: Յեվ նրանց վրա ես յես պետք է հրավիրեմ ձեր ուշադրությունը:

## ՉԴԻՄԱԶՐԿԵԼ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ

Սոցմրցման գլխավոր թերությունն այն է, վոր այնտեղ, մրցման մեջ, շատ կա դիմազրկություն:

Դիմազրկությունը շղթայում է սոցմրցության հետագա զարգացումը: Այդ դիմազրկության մեջ մեզ մոտ բոլորն էլ հարվածայիններ են, իսկ փորձեք գտնել, ո՞վ է լավը, ո՞վ



վատը—չես գտնի. «Մենք բոլորս էլ հարվածայիններ ենք»—ահա այդ տերմինը մենք պետք է արխիվ ուղարկենք: Մենք բոլորս դեռ հարվածայիններ չենք: Դեռ վոչ բոլորն են հրաժարվել կապիտալիստական ժառանգության մնացորդներից: Լինում են հաճախակի և այսպիսի դեպքեր. մարդը հարվածային է համարվում, իսկ իրականում նա կամ գործարան, կոլտնտեսություն սողոսկած թշնամի յէ, կամ հարմարվող, կեղծ հարվածային: Կրկնում եմ՝ բոլորս դեռ հարվածայիններ չենք, իսկ ո՞վ է հարվածայինը և ի՞նչպիսի հարվածային է, ի՞նչպիսին է նրա դիմանկարը, ի՞նչպիսիք են ցուցանիշները, նրա աշխատանքի վորակն ու տեմպերը—այդ հաճախակիորեն չես կարողանում իմանալ մարդկանց դիմազուրկ հաշվառման պատճառով:

Մեզ մոտ դեռ մինչև այսօր բրիգադներում աշխատանքը հաշվի յեն առնում վորպես ամբողջապես բրիգադի աշխատանք: Այդ արդեն անցած շրջան է, այդ յուրատեսակ «յերեխայական հիվանդություն» է, հավասարեցման մոտեցում, վորը կար սոցմրցության սկզբնական շրջանում: Ներկայումս այդ մոտեցումից պետք է հրաժարվել: Վոչ վոք վոչ վոքի չի արգելում աշխատանքը հաշվի առնել վորպես ամբողջապես բրիգադի աշխատանք, այդ պետք է անել: Յեթե դուք ցանկանում եք սոցմրցության հետագա ծավալման համար ստիմուլներ ստեղծել, այդ դեպքում գլխավորը նրանումն է կայանում, վորպեսզի հաշվի առնել յուրաքանչյուր առանձին հարվածայինի աշխատանքի վորակն ու տեմպերը, ընդվորում խոսքի վատ իմաստով չստեղծել հատուկ գրասենյակներ, հակառակ դեպքում կարող է գործի խորտակման վտանգ ստեղծվել: Ճշտորեն և ամեն օր հաշվի առնել յուրաքանչյուր հարվածայինի աշխատանքը, կազմակերպել նրա աշխատանքի տեմպերի և վորակի հաշվառումը—ահա սոցմրցության բարելավման հանգուցային, գլխավոր մոմենտներից մեկը, վորին կառչելով մենք կկանխորոշենք սոցմրցության հետագա բարելավ ընթացքը: Յուրաքանչյուր որ հաշվի առնել հարվածայինի և բրիգադի աշխատանքն ինչ-

պես քանակապես, այնպես էլ որակապես, մասսաների սեփականությունը դարձնել ինչպես ընդհանուր, այնպես էլ անհատական հաշվառումը—այսպես է խնդիրը: Օրինակ՝ ես քեզ հետ մրցակցում եմ: Դու Ստախանովն ես, ես՝ Իվանովը: Ես պե՞տք է քեզ անցնեմ, թե ընդհակառակը դու՝ ինձ: Մենք յերկուսով էլ դրան պետք է ձգտենք: Իսկ դրա համար մենք պետք է յուրաքանչյուր որ իմանանք, ամեն մեկն առանձին, ամեն որ, ի՞նչպիսի ցուցանիշներ ենք տալիս: Այդ պահանջը բացարձակորեն ճիշտ է: Դրա համար էլ առանձին հարվածայինի աշխատանքի արդյունքը պետք է ամեն որ հայտարարել: Առանց դրան—դիմազրկություն է, առանց դրան հարվածայնությունը գոյություն կունենա ընդհանրապես, իսկ այդ հարվածայնության մասնակին ծածկված կլինի, պետքական, լրիվ կշխռով հարվածայնություն չի լինի: Յուրաքանչյուր հարվածային պետք է իմանա իր ամենորյա աշխատանքի արդյունքն ու իրեն հասանելիք վարձը: Ահա թե գործի ինչպիսի՞ կազմակերպվածություն է հարկավոր ձեռք բերել:

Կանգ կառնեմ կազմակերպչական հարցի վրա, վորն ունի քաղաքական խոշոր նշանակություն—դա հաշվետուի ջոկողության խնդիրն է: Յեթե դուք ուզում եք բարելավել սոցմրցության գործը, դուք ուշադրություն դարձրեք հաշվետուի վրա, վորը կարող լիներ ճշտորեն հաշվի առնել յուրաքանչյուր հարվածայինի արտադրանքը և հայտնել հարվածայինին նրա այսորվա ստանալիք վարձը: Ընդվորում հաշվետուներին պետք է ջոկել և առանձնացնել հենց բրիգադներից, նրանցից ավելի բանիմաց և ժրաջան ընկերներին, կապելով նրանց ցեխի դրասենյակի և ցեխի պրոֆբյուրոյի հետ: Ցեխի դրասենյակը, ցեխի պրոֆբյուրոն և կոմյերիտական բջիջը պետք է ոգնեն հաշվետուին կազմակերպելու իր գործը: Հաշվետուի ջոկողությունը վորոշում է դիմազրկության դեմ բարենպաստ պայքարի հարցը և սոցմրցության մեջ, առանձնապես խորհտնտեսության և կոլտնտեսության մեջ:



Հաճախ շնորհիվ հաշվառման բացակայության, կոլտնտեսականն աշխատում է աշխատում, և ի վերջո չի իմանում, թե ինչի՛ համար և ի՛նչպես է աշխատում: Ձեզ պատկերացրեք այդ կոլտնտեսականի վիճակում, վորը չգիտե, թե ինչ է ստանալու իր աշխատանքի համար: Դուք ձեզ կզգաք այնպիսի մի վիճակում, վորը ձեզ կստիպի ավելի շատ ջղայնանալ, քան թե աշխատել:

Հարկավոր է դազգյահը, մեքենան, գործիքը ամրացնել հարվածայինին: Գործիքներ հարվածայինին տալիս են «առհասարակ», իսկ մասնավորապես հարվածայինն առանց գործիքի յե: Այդպիսի պատկերներ ինչքան կամենաք: Յուրաքանչյուր հարվածային պետք է գիտենա իր դազգյահը,—այդ մասին շատ անգամ է խոսվել: Այժմ ժամանակն է վերջ տալ խոսակցություններին: Չէ՞ վոր այդ դժվար գործ չէ, նա միայն թե պահանջում է ավելի ուշադրություն, գործը մինչև վերջը հասցնելու հաստատակամություն:

Պետք է աշխատանքի պրոցեսում առանձնացնել վատերից լավագույն հարվածայիններին, դիմակազերծ անել կեղծ հարվածայիններին, աշխատավարձը տալ վոչ թե բրիգադին, կոմունային, այլ յուրաքանչյուրին իրեն՝ կատարած աշխատանքի, աշխատանքի վորակի համար, քանի վոր բրիգադների բոլոր անդամներն էլ արժանի չեն իրենց վորակավորման, իրենց գործի գիտելիքների տեսակետից, իրենց աշխատանքի տեմպերի տեսակետից ստանալու միևնույն վարձատրությունը: Այ, որինակ, Ստեպանովը: Նա արդեն 8 տարվա արտադրական ստաժ ունի, նա արդեն 8-րդ կարգի տոկար է: Իսկ մյուսը մի տարի առաջ է յեկել գյուղից: Ինչո՞ւ մենք նրանց հավասարապես վարձատրենք: Ինչո՞ւ Ստեպանովին և Գվոզդևին մենք պետք է նույն կերպ վճարենք: Գիտե՞ք ինչի կհանգի այդ: Բացի նրանից, վոր այդ անարդարացի յե, բացի նրանից, վոր այդ Ստեպանովի մոտ աշխատանքի շահագրգռություն չի ստեղծում, բացի նրանից, վոր այդ հավասարեցման մոտեցում է,—Գվոզդևին, վորը նոր է արտա-

դրություն յեկել, հակառակ նրա կամքին բոլորովին սխալ պատկերացում են պատվաստում սոցիալիզմի մասին: Մենք նրանից կզարգացնենք պոկողի, նրան չենք տա այն հայացքը, վոր մենք ունենք սոցիալիզմի մասին: Նա հետևյալ կերպ կդատի. «Աշխատեմ թե վոչ, միևնույնն է, ապահովված կլինեմ: Եվ ինչո՞ւ աշխատեմ: Թող ուրիշներն աշխատեն: Եվ ինչո՞ւ սովորեմ, ուժերս լարեմ»: Սոցիալիզմի պատկերացումը նրան կպատվաստվի խեղաթյուրված ձևով: Այս հարցը հսկայական նշանակություն ունի: Վարձատրման նկատմամբ այսպիսի դիմազուրկ մոտեցման փաստերը առանձնապես տարածված են գյուղում, կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում:

Պետք է ուղիղն ասել, մեր կոլտնտեսական կոմյերիտական բջիջները չափազանց քիչ են գործել հաշվառման գործը կարգավորելու ուղղությամբ, վորպեսզի լավագույն հարվածայիններին առանձնացնել, առաջ քաշել, բարձրացնել վահանի վրա:

Լինում է և այսպես, վոր մենք մեր կոմյերիտականներին, լավագույն հարվածայիններին, գիտենք, իսկ նրանց աշխատանքի հաշվառումը կազմակերպում ենք ընդհանրապես, վորովհետև սոցմրցության և հարվածայնության մասին ունենք չափազանց թույլ պատկերացում:

## ՄԵԾԱՐԵԼ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԻ ԲՐԻԳԱԴԱՎԱՐԻՆ

Հետևյալ հարցը բրիգադավարի մասին: Մեզ մոտ բրիգադավարները, վորպես կանոն, նշանակվում են պատահականորեն, իսկ լինել հարվածային բրիգադի բրիգադավար— դա պատիվ գործ է, դա մեծագույն գործ է: Հարվածային սոցիալիստական բրիգադի բրիգադավարին մենք պետք է վերաբերվենք պատվով, հարգանքով: Իսկ մեզ մոտ, առանձնապես կոլտնտեսություններում տեղի յեն ունենում բրիգադներում հաճախակի փոփոխումներ: Մենք ձեռքի վրա ձեռնոցների ավելի ուշ ենք փոփոխում, քան բրիգադավարներին: Դրա համար էլ մեզ մոտ բրիգադավարն իր վորակի տեսակետից շատ դեպքերում բավականաչափ ամուր չէ: Բրիգադի անդամները բրիգադավարին քիչ գիտեն և նա յել նրանց վատ է ճանաչում: Այստեղից յելնելով է, վոր բրիգադավարը դեպի իր աշխատանքը շահագրգռվածություն չի ցուցաբերում: Այսպես են պատճառաբանում. «Ինձնից առաջ բրիգադիրը 3 ամիս է նստել, նրանից առաջ՝ 2 ամիս և հետո գնացել է: Յես էլ յերևի ավելին չեմ մնալու»: Բրիգադավարը պետք է լինի կայուն, մշտական և դրված լինի առանձին պայմաններում և՛ քաղաքական, և՛ կուլտուրական, և՛ աշխատավարձի տեսակետից: Հարվածային բրիգադի բրիգադավարը պետք է ստանա ավելի, քան ամենալավագույն հարվածայինը, իսկ մեզ մոտ յերբեմն այնպես է լինում, վոր վատ հարվածայինն ստանում է ավելի, քան լավ բրիգադավարը:

Բրիգադավարներ ընտրելու գործում հարկավոր է հատուկ մոտեցում, այնինչ շատ հաճախ նրանց առաջ են քաշում և ջոկում անուշադիր կերպով: Բրիգադավարների վատ ընտրության օրինակներ ինչքան կամենաք: Այսպես, «Կրասնի Բողատիր» գործարանում 53 հոգուց բաղկացած հարվածային բրիգադի բրիգադավար է առանձնացված ընկ. Կոզլովան՝ կիսագրագետ, քաղաքականապես անգրագետ, 1 տարվա արտադրական ստաժով, վերջերս գյուղից յեկած: Բրիգադը սիստեմատիկ կերպով թերակատարում է պլանը, բարձրացնում է ինքնարժեքը, հսկայական բրակ է տալիս, հաճախակի գործալքումներ է ունենում, հաճախ փչացնում է մեքենաներ և այլն:

Ընդհակառակն, այնտեղ, ուր լավ է բրիգադիր ընտրված, բրիգադի աշխատանքը բոլորովին այլ է: Օրինակի համար՝ Տատյանա Սմոլենցևան, Մոլոտովի անվան «Տոչիզմերիտել» գործարանի մի բրիգադավար: Կոմյերիտմիության մեջ է 1927 թվից, կուսակցության մեջ՝ 1930 թվից: Ցեխի կոմյերիտական բջջի քարտուղարն է, ունի 4 տարվա ար-

տադրական ստաժ: Վորակավորումը 12-րդ կարգի յե: Ավարտել ե ուսՖնամյակը: Լավ գիտի իր գործը: Պահանջկոտ ե և շատ ձեռներեց: Նախ տղերքը դեմ եյին նրան, վորովհետև նա շատ պահանջկոտ ե և խիստ, հետո սիրեցին և այժմ մեծ հարգանքով են վերաբերվում նրան: Տանյա Սմոլենցեվայի բրիգադը լավագույնն ե գործարանում: Նա սիստեմատիկ կերպով ղեկավարում ե պլանը, առաջինն ե ցեխում: Ամեն ամիս մոտ հազար ռուբլի յե տնտեսում հումքից (պլանի 10%-ը): Համարյա բրակ չկա, բրիգադում աշխատանքի որինակելի հաշվառում գոյություն ունի, վորպիսին տանում ե ինքը Սմոլենցեվան: Բրիգադն ունի մի շարք խոշոր ռացիոնալիզատորական առաջարկներ, վորոնք արդեն կենսագործվում են:

Մի ուրիշ որինակ, ընկ. Ֆոմիչևի բրիգադը, «Սերպ ի մոլոտ» գործարանում: Բրիգադավարը կուսանդամ ե, ունի 7-ամյա կրթություն: Գործարանում աշխատում ե 1920 թվից: 8-րդ կարգի ավագ վալցովշչիկ ե: Հրաշալի գիտի իր արտադրությունը: Նրա կարգադրությունները կատարվում են առանց առարկության: Բոլորը նրան հարգում և սիրում են: Բրիգադը սիստեմատիկ կերպով ղեկավարում ե պլանը: Մետաղի մեծ տնտեսում ե տալիս: Ակտիվ կերպով մասնակցում ե ռացիոնալացմանը, 15 ռացառաջարկներ արդեն իսկ կիրառվում են:

Մենք ի՞նչ պետք ե տանք բրիգադավարին և նրանից ի՞նչ պետք ե պահանջենք:

Բրիգադավարն իր վորակավորումով հանդիսանալով առաջատար, փորձված բանվոր, պետք ե լավ վարձատրվի, մանավանդ այդ մասին գոյություն ունի ծանր արդյունաբերության ժողկոմատի հրամանը: Նա պետք ե բրիգադավարի համար ստանա հատուկ հավելում: Նա պետք ե լինի ակտիվ, նախաձեռնող, ժրաջան, բրիգադի համար հեղինակավոր ընկեր և ի դեմս կոմյերիտմիության ճանաչի իր լավագույն ընկերոջը: Չի կարելի տնտեսությամբ լավ զբաղ-



վել առանց կապ հաստատելու բրիգադավարի հետ: Մենք ինչպե՞ս կարող ենք հաջողությամբ արդֆինպլանի, տնտհաշվարկի համար պայքարել, յերբ ձեռքի տակ, վորպես ողնաշարի, չկա լավ բրիգադավար, այսինքն այնպիսի կազմակերպիչ, վոր շատախոսությամբ չի զբաղվում, շրջաբերականներ չի գրում, նիստեր չի գումարում, այլ արդֆինպլանի կատարման համար կազմակերպում ե մասսաներին և ինքն ել գործնականորեն աշխատում ե դազգյահի մոտ:

Ահա թե ինչու տոմսերի փոխանակման ժամանակ մի քանի ընկերների տարորինակ եր թվում, թե այդ ինչպես ե, վոր բջիջը ավելի լավ, յեռանդուն, աշխույժ ե աշխատել, քան կոմիտեն: Այս ամենը դիալեկտիկորեն պետք ե հասկանալ: Մենք շատ եյինք գրում, և ահա այդ քանակության վատ կողմը յերևաց: Իսկ բջիջում գործն այլ ե, այնտեղ կոմյերիտականները նրա ոձիքից բռնում եյին և ասում— փոխվի՛ր տոմսդ, այ, ԿԿ-ն այդպես ե ասում, սա՛ ժամկետը: Ուզեր թե չուզեր, բայց բջիջին ձիգ տվին և ստիպեցին շարժվել, աշխատել: Իսկ վերադաս կոմիտեներն այդ ճնշումը չզգացին իրենց վրա, դրա համար ել շատ եյին նիստ անում և գրում: Դրա համար ել կարիք չկա վիրավորվել ԿԿ-ի տված գնահատականի խստությունից:

## ԱՎԵԼԻ ՔԻՉ ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ, ԱՎԵԼԻ ՇԱՏ ԿԵՆԴԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք պետք ե ձեռք բերենք այն, վորպեսզի բրիգադներում լայնորեն ծավալվի սոցմրցությունը, վորպեսզի յուրաքանչյուր բրիգադավարն իմանա, վոր իր լավագույն աշխատողն այսինչն ե, միջակն այսինչն ե, ըստ վորում լավագույն այսինչին ուզում ե առաջ անցնել այսինչը, իսկ վատագույն այսինչին պետք ե ոգնել: Բրիգադում դանդաղկոտություն, հանդստություն կամ անոգուտ խոսակցություն չպետք ե լինի: Բրիգադը պետք ե ընդունակ լինի բոլոր դեպքերում շարժվել, պտտվել: Այսոր դու լավագույնն ես, յես

քեզ ուզում եմ անցնել, վաղը դու ձգտում ես ինձ անցնել:
Իսկ մեզ մոտ հաճախ բրիգադները բրիգադների հետ մրցում
են, իսկ բրիգադի ներսում մրցում կազմակերպելու մասին
վոչ վոք ուշադրություն չի դարձնում:

Հաճախ և բրիգադը բրիգադի հետ վատ է մրցում: Բրի-
գադների կամ գործարանների միջև պայմանագրեր են կնք-
վում. բայց լավ պայմանագրեր շա՞տ կան արդյոք: Մեծա-
գույն դեպքերում դրանք ձևական պայմանագրեր են, ստան-
դարտ արտադրության, ինչպես «Մոսկվոշվեյի» կոստյում-
ները: Յեվ այդ ստանդարտ պայմանագրերը խորտակում են
հազարավոր ստեղծագործական գործեր, վորոնք բացվում
են բանվոր դասակարգի ընդերքից, կոլտնտեսականների մի-
ջավայրից: Մեզ մոտ լինում է այսպես. կոլտնտեսականին
ստիպում են պայմանագիրն ստորագրել: Իսկ նրան ասում
են. «Հակառակ դեպքում դու հարվածային չես»: Իսկ այդ
կոլտնտեսականը 60 տարեկան է, վորոնցից 50-ն անց է կաց-
րել գյուղացիական անտեսության մեջ, հիանալի գիտե իր
տնտեսությունը, աշխատում է լավ, իսկ գրել չգիտի և պայ-
մանագիր էլ չի կնքել: Ըմբռնեք, վոր նա աշխատել կարող
է, բայց վոչ պայմանագիր ստորագրել: Իսկ նրան ասում
են, դու հարվածային չես: Այդ մրցությունը ձևական մո-
տեցում է, նշանակում է թղթին կառչել, այլ վոչ կենդանի,
կոնկրետ գործին:

Չպետք է, իհարկե, իմ յելույթը հասկանալ այնպես,
վոր յես սկզբունքորեն բոլոր թղթերին դեմ եմ: Յես դեմ եմ
թղթային ավելորդաբանություններին, սոցմրցությունը
ստանդարտային շրջանակներում խցկելու թղթային փորձե-
րին: Յեվ խոստովանենք, վոր ստանդարտ պայմանագրեր
մենք շատ ունենք: Պայմանագրերում մատնանշվում են այն-
պիսի ցուցանիշներ, վորոնք չեն թույլ տալիս համեմատել
մրցող բրիգադների աշխատանքի արդյունքները: Ասացեք,
պայմանագրերի մեջ մտցվո՞ւմ են այնպիսի ցուցանիշներ,
վորոնց միջոցով կարելի լինի վորոշել ի՞նչ ես դու ցանկա-



նում և ի՞նչն ես ձգտում ձեռք բերել: Վոչ միշտ և դրանում
է թերությունը: Սոցմրցման համար կնքվող պայմանագրերի
խոշոր մասը կազմվում են ընդհանուր նախադասություննե-
րով՝ անդասակարգ, սոցիալիստական հասարակակարգ կա-
ռուցելու մասին: Մեզ հարկավոր են կոնկրետ ցուցանիշներ:
Վոչ թե ընդհանրապես սոցիալիզմ կառուցիր, այլ մեզ տուր
ածուխ, մետաղ, նավթ, մեքենաներ, ավելի լավ պատրաս-
տիր և ավելի մեծ քանակությամբ: Ահա այն ժամանակ դու
սոցիալիզմի կառուցող կլինես:

Կոլտնտեսական բրիգադների գլխավոր բացը նրանում
է, վոր նրանք չեն կարողանում կազմակերպել աշխատանքը:

Ներկայումս առանձնապես լրջորեն դրվում է տեխնի-
կայի ուսումնասիրության, տեխնիկական գիտելիքներին տի-
րապետելու հարցը: Յեթե դու ներկայումս հարվածային ես,
ուրեմն հենց այդ քեզ պարտադրում է ուսումնասիրել տեխ-
նիկան: Այժմ բավական չէ հարվածայինին հասկանալ այն-
պես, ինչպես հասկանում էին առաջ: Հարվածայինն
այսօր պետք է ուսումնասիրի տեխնիկան և միայն այն ժա-
մանակ նա կլինի ըստ էության հարվածային:

Առաջ գյուղում տանջվում էին մեքենաների պակասից,
այժմ գյուղը շատ մեքենաներ է ստացել և նայեք՝ ինչպե՞ս
են խորտակում այդ մեքենաները—ուղղակի սիրտ է ցավում:
Յերբեմն լավագույն տրակտորը, լավագույն մեքենան, վորի
մասին առաջներում չէին համարձակվում անգամ յերազել,
թավալվում է բաց յերկնքի տակ, անձրևի, ձյունի տակ:
Մի՞թե այդ թույլատրելի յե:—Գյուղում սոցմրցության
բացը կայանում է հենց նրանում, վոր հարվածային աշխա-
տանքը թույլ է շաղկապվում ագրոնոմիական գիտելիքների
ուսումնասիրության, խորհտնտեսություններում և կոլտն-
տեսություններում մեքենայական տեխնիկայի (տրակտոր,
կոմբայն) տիրապետման հետ:

## «ԲՈԼՈՐ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻՆ ՄԻԱՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՒՅՑՆԵՐ»— ՄՈՏԵՑՄԱՆ ԴԵՄ

Մրցության և հարվածայնության մեջ խոշոր չարիք է հանդիսանում հարվածայինների վոչ ճիշտ, ձևական խրախուսանքի և պարգևատրման պրակտիկան: Մեզ մոտ, ամենորյա աշխատանքի կարգով, լավագույն աշխատողներին քիչ են պարգևատրում, այլ այդ բոլորը հավաքում, տոնի համար կուտակումներ են կատարում: Մոտեցավ տոնը և ահա սկսում են պարգևատրել: Դա մրցությունը խորտակում է: Յեթե յես լավագույն հարվածային եմ, յեթե յես լավագույն ցուցանիշներ եմ տալիս, հոկտեմբերյան տարեդարձն առանց ձեզ էլ կտոնեմ, իսկ դուք ինձ, ինչպես պարտավորեցնում են կուսակցությունն ու իշխանությունը, իմ լավագույն ցուցանիշների համար խրախուսիր վոչ թե տոնին, այլ հենց հիմա: Իսկ մեզ մոտ հաճախ գործարկոմի նախագահը կամ կոմյերիտական բջիջի քարտուղարը ասում է. «Յերկու ամսից տոն կլինի, հավաքեցեք լավագույններին, կազմեցեք ցուցակներ, պրեմիաներ գնեցեք»: Այդ բոլորով հանդերձ նաև ում ինչ տալն էլ վորոշում են իրենք, վոչ թե հարվածայինները: Այդ խորտակում է սոցմրցումն ու հարվածայնությունը: Յերբեմն պարգևատրում են անարժաններին, իսկ լավագույնների կողքով են անցնում, վորի հետևանքը լինում է այն, վոր աշխատողը հեռանում է հարվածային բրիգադից: Ահա ձեզ որինակ. «Ռեմմաշտրեստ» գործարանի բանվոր-հարվածային ընկ. Տ. Ի. Գլադկովը գործարանկոմի արտադրական սեկտորին գրում է հետևյալ դիմումը. «Խնդրում եմ արտադրական սեկտորին վերցնել իմ վրայից հարվածային կոչումը, վորովհետև յես 1932 թ. հունվարի 1-ից ինձ այլևս հարվածային չեմ համարում: Աշխատում էյի որ ու գիշեր, սոցմրցության և հարվածայնության համար չկար և վոչ մի հաշվառում և դրա համար էլ հարվածայինների պարգևատրումը համարում եմ սխալ: Կցում եմ սրան հարվածային տոմսս: Ա. Ի. Գլադկով: Դեկտեմբերի 31-ին 1931 թ.»:



Յերկրորդ դիմումը փականագործ Կրամոլեյեվից. «Խնդրում եմ իմ վրայից վերցնել հարվածայնության կոչումը, վորովհետև վերջին ժամանակներս յես ուշացումներ ունեմ և գտնում եմ, վոր վերջին անգամ վորոշ ընկերներ սխալ են պարգևատրված: Կցում եմ հարվածային տոմսս: Հունվարի 3-ին 1932 թ. Ա. Կրամոլեյեվ»:

Խորացեք այդ դիմումների իմաստը հասկանալու մեջ և ուշադրություն դարձրեք «վորովհետև վերջին ժամանակներս յես ուշացումներ ունեմ» նախադասության վրա: Փականագործ Կրամոլեյեվը լավագույն հարվածային էր: Իսկ պարգևատրել են վատագույններին: Նա չէր ուշանում, իսկ հիմա սկսել է ուշանալ: Նրան թերագնահատեցին, դա վիրավորական է մարդու համար և նա սկսեց ուշանալ: Կլինեն և պրոգուլներ: Նման սխալները հարվածայնության մասին հակառակ տպավորություն են ստեղծում: Լավագույնների հայտնաբերման գործի սխալ կազմակերպման պատճառով պարգևն ստանում է նա, ում կոկորդն առողջ է:

Ի՞նչպես են պարգևատրում: Ծերունիներին վոտասահնակներ են տալիս, միևնույն հարվածայինին պարգևատրում են յերեք անգամ, և չարունակ վերարկուներով, կամ բոլորին պարգևատրում են ժամացույցներով և պայուսակներով, ընդվորում բոլորին միատեսակ: Որինակի համար, յես արտադրությանը տվել եմ ամսական 25 ռ. տնտեսում, իսկ պարգևատրում են մետաղյա ժամացույցով: Իսկ քեզ, իբրև սկսնակի, վոր, ասենք թե, տվել ես ամսական 250 ռ. տնտեսում, նույնպես պարգևատրում են մետաղյա ժամացույցով: Դուք ձեզ դրեք առաջնի տեղը: Նա հին հարվածային է, միշտ լավագույն է յեղել, մեծ ոգուտ է տալիս, նրան մի քանի անգամ պարգևատրել են ավելի թանկարժեք իրերով, իսկ այժմ պարգևատրում են մետաղյա ժամացույցով, այնպես, ինչպես նորեկին: Մի՞թե նման ընդհանուր մոտեցումը կարող է մրցության մեջ չարժման ստիմուլը հանդիսանալ: Իհարկե, վոչ: Իսկ չա՞տ են այնպիսի բջիջները, վորոնք պար-

քարել են այդ յերևույթի դեմ: Դրանց քանակը քիչ է: Ինչո՞ւ: Այստեղ մենք ունենք դեպի հարվածայնությունը ցուցաբերած ձևական մոտեցում, փաստեր, վորպիսիք հաճախ հանդիպում են և մի շարք այլ հարցերում: Կարդացեք Համ. ԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշումը տոմսերի փոխանակման մասին, ուր մենք ձեզ մեղադրում ենք ընդհանուր մոտեցման և ձևականության մեջ :

Ուրեմն ի՞նչ է հարկավոր անել: Պետք է պարգևատրել ըստ եյության, այլ վոչ ձևականորեն, վոչ ըստ տոների, այլ յեթե կան լավագույնները՝ ամեն որ և վոչ այնպես, վորպեսզի մտնելով գործար-տեղկոմի մոտ, ասեն. «վերցրու ժամացույցը և դուրս գնա», այլ այնպես, վորպեսզի ինձ, վորպես արժանավորի հայտարարեն բոլորին և վորպեսզի իրենք հարվածայինները վորոշեն ո՞ւմն է անհրաժեշտ պարգևատրել: Ընկ. Ստալինն ասել է, վոր սոցմրցությունը խորհրդային դեմոկրատիայի բարձրագույն ձևն է հանդիսանում: Ճիշտ է: Ուրեմն թող հարվածայինները, այդ դեմոկրատիայի հիման վրա, իրենք վորոշեն, տվեք նրանց իրավունք վորոշելու, թե ո՞ւմն է հարկավոր պարգևատրել՝ յելնելով առանձնացված հատուկ ֆոնդի չափի հնարավորություններից: Թե չէ այդ ի՞նչ է նշանակում: Դու գործար-տեղկոմի քարտուղարն ես, յես էլ գործարանային կուսբջիջի քարտուղար, դու էլ, յես էլ արտադրության մեջ չենք և ահա մենք հավաքվում ենք և վորոշում ենք թե ո՞ւմը պարգևատրել: Այստեղ կարելի յե թույլ տալ շատ սխալներ: Թող հարվածայինները պարգևատրման գործում իրենք վորոշեն իրենց բախտը: Յեվ հետո հարկավոր է այդ բոլորն այնպես կազմակերպել, վորպեսզի չուշացնել, և այն, ինչ խոստացված է, կատարել: Իսկ մեզ մոտ յերբեմն մտածում են տոնին պարգևատրել և ահա խոսում են, տարածում են, ուշացնում են. և սրան պարգևատրել, և նրան պարգևատրել, իսկ անցավ տոնը—և ահա մոռանում են: Նման դեպքեր չափազանց շատ են տեղի ունեցել: Այդ ստոր մոտեցում է հարվածայիններին: Միայն բանվոր դա-



սակարգի թշնամիները կարող են խաբել բանվորներին և առանձնապես հարվածայիններին: Նրան, ով խաբում է իսկական հարվածայինին, ով այդ հարվածայինին վիրավորում է, նեղացնում, պետք է պատասխանատվության կանչել և յեթե նա կոմունիստ է—քաշել նրան վերահսկիչ հանձնաժողով, յեթե նա կոմյերիտական է—դուրս շպրտել նրան կոմյերիտմիությունից, յեթե նա պրոֆմիության անդամ է—դատել նրան պրոֆմիութենական դատարանով: Միայն այսպես է հարկավոր հարցը դնել: «Հարվածայինը մեր ժամանակի հերոսն է»— դա նախադասություն չէ, այլ մեր շինարարության իմաստն է, դա—դեպի աշխատանքը, դեպի արտադրությունը մեր մոտեցման իմաստն է և հենց դրա համար էլ մենք վոչ վոքի չենք թույլատրի նեղացնել հարվածայինին, խաբել հարվածայինին: Դեպի հարվածայինն այդ խորթ, վոչ պրոլետարական, վոչ կոմունիստական մոտեցումը պետք է վերացնել, յեթե մենք ցանկանում ենք, վորպեսզի հարվածայնությունն է՛լ ավելի ծավալվի, բարելավվի նրա վորակը: Պետք է ճիշտ կազմակերպել հարվածայինների պարգևատրումը, պարգևատրել վոչ թե տոներին և վոչ թե այս կարևորագույն գործի վրա դնել բյուրոկրատական կնիք, թե բոլոր քույրերին՝ ուլունք, իսկ բոլոր հարվածայիններին ժամացույցներ, միատեսակ ժամացույցներ:

Պետք է հարվածայիններին պարգևատրել բազմապիսի ապրանքներով, այն ամենով, ինչ նրանց հարկավոր է: Լավագույններին պետք է տալ ավելի արժեքավոր պարգևատրում: Պարգևատրումով պետք է հարվածայիններին շահագրգռել հետագայում է՛լ ավելի բարձրացնելու իր աշխատանքի արտադրողականությունը: Յեվ յեթե ինձ առաջին անգամ պարգևատրել են վոսկե ժամացույց, իսկ յերկրորդ անգամ աշխատանքի արտադրողականությունն է՛լ ավելի բարձրացնելու համար յես ստանում եմ միայն դուլպաների համար ռեզին, շատ հասկանալի յե, վոր աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացման ստիմուլն ինձ մոտ կորչում է:

## ՀԱՆՈՒՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԻ

*Անցնում եմ հարվածային բրիգադների աշխատանքի վորակի խնդրին:*

Բրիգադավարն *ու բրիգադն ամբողջությամբ պետք է պլանավորումն այնպես կազմակերպեն, վորպեսզի բրիգադի աշխատանքը լինի անընդհատ, վորպեսզի իր ժամանակին լինի նյութեղենը, դետալները, գործիքները, ճիշտ դասավորված լինեն ուժերը, վորպեսզի յուրաքանչյուր հարվածային ունենա իր առաջադրությունը և իմանա այն, վորպեսզի առաջադրությունները բաշխվեն ըստ անունի, այդ հիմունքների վրա կազմակերպելով հերթային հանդիպական պլանավորում, ընկալարելով ճշտորեն հումույթի պաշարները, իր ժամանակին ապահովելով բրիգադները նրանցով:*

*Հարվածային բրիգադների աշխատանքի* թերությունը *հանդիսանում է ռացիոնալիզատորական առաջարկությունների հավաքման սխալ կազմակերպումը, նրանց թույլ կենսագործումը, ռացիոնալիզատորական առաջարկությունների համար թույլ խրախուսանքն ու նրանց նկատմամբ վոչ բավականաչափ եքսպերիմենտալ աշխատանք տանելը: Այդ հաճախակի բացատրվում է նրանով, վոր դեռ հաճախակիորեն ուժ են տալիս մկանային ուժին, իսկ աշխատանքի հասարակ տեսակները, վորոնք կարող են մեքենայացման յենթարկվել, չպահանջել խոշոր ծախսեր, ռացիոնալիզացիայի չեն յենթարկվում: Այդ առանձնապես նկատելի յե գյուղատնտեսական մեքենաների ոգտագործման բնագավառում:*

Ի՞նչ է նշանակում ռացիոնալիզացիա: Այդ նշանակում է գտնել աշխատանքի լավագույն մեթոդներ, վորոնք կթույլատրեն ուժերի պակաս ծախսումով ստանալ մեծ արդյունքներ. այդ նշանակում է ճշտորեն դասավորել ուժերը, մեքենաները, գործիքները, դետալները, հումույթը, ճշտորեն խնամել դազգյահը, ոգտագործել տականքները, փչացվածքները, խնայել նյութեղենը:



*Ինչպես ձեզ բոլորիդ հայտնի յե, մեր արտադրանքի վորակը դեռ բավականաչափ լավ չե և այդ, իհարկե, հարվածայնության թերությունն է հանդիսանում:*

*Այդ բացատրվում է նրանով, վոր մենք դեռ չենք սովորել, ինչպես հարկն է խնամել սարքավորումը, բավականաչափ ուշադրությամբ չենք վերաբերվում հանդեպ հումույթի և շատ հաճախ անխնամ ենք աշխատում: Մեզ մոտ դեռ այնպիսի գզվելի սովորություն գոյություն ունի, վորը խըցկըվել է մեզանից շատերի մեջ, դա ֆորմուլայով աշխատելու սովորությունն է. «մի կերպ կդզվի, մի կերպ յոլա կըտանենք»: Ահա այդ «մի կերպ կդզվի»-ն մեր պետությանը միլիոն ռուբլիներ է նստում, այդ «մի կերպ յոլա կտանենք»-ը մեզ վրա մեծ ջանքերի, աշխատանքի մեծ ծախսումների հետևանք է թողնում: Այդ «մի կերպ յոլա կտանենք»-ը դրդրում է մեր խորհրդային սպառողին, հաճախակի իրավացի դժգոհություն է առաջացնում գործարանների և ֆաբրիկների նկատմամբ: Պետք է վերջացնել, մեզմ արտահայտված, այդ աննորմալ, արտադրանքի վորակի նկատմամբ յեղած վերաբերմունքը: Ցեխը, ասենք թե, փականագործն ուզում է, վոր վորևէ մի մեխանիզմ համապատասխանի բոլոր տեխնիկական պահանջներին, ապա տըվյալ դետալը պետք է ճիշտ լինի: Քիչ է այն, վոր նա պետք է իր ձևն ունենա, նա պետք է ունենա նաև ճիշտ հաշվարկում, այդ հաշվարկման ճիշտ կատարում, լավ հղկված լինի: Առանց դրան նա թեև դետալ կկոչվի, բայց չի գործի: Այդպես է արտադրանքի վորակի նկատմամբ: Մենք կտորեղեն—մանուֆակտուրա, կերպաս կամ կաշի յենք արտադրում, և հաճախ հումքը փչացնում ենք: Մշակում ենք անունով կաշի, բայց փաստորեն լաթ: Այդ ֆոկուսների կոնկրետ մեղավորներին, «մի գույն կդզվի» ֆորմուլայի կրողներին մեր հարվածայինները քիչ են յերևան հանում:*

*Մենք քիչ ենք այդ չարիքը ցույց տալիս մեր հասարակայնությանը, անբավարար ենք պայքարում նրա դեմ:*

Յեվ ընդհանրապես պետք է դնել մի հարց, որը հսկայական նշանակություն ունի հարվածային շարժման և սոցմրցման ճակատագրի համար,—դա ինքնաքննադատության հարցն է հենց հարվածային շարժման մեջ, հենց մրցողների մեջ:

Ընկ. Ստալինն ասել է, որ հարվածայնությունն ու սոցմրցակցությունը հանդիսանում են մասսաների գործարար ինքնաքննադատության արտահայտությունը: Ահա այդ հարցի վրա է, որ մենք պետք է խոր մտածենք: Հարվածայնությունը — դա մասսաների գործարար ինքնաքննադատության արտահայտությունն է:

Ղեկավարության խնդիրը նրանումն է կայանում, որպեսզի պահպանել, խրախուսել, աճեցնել այդ գործարար ինքնաքննադատությունը: Պետք է հարվածայինների կրթությունը, խոշոր չափով, քան մինչև հիմա է յեղել, ուղղել այն բոլորի քննադատության ուղղությամբ, ինչ խանգարում է հարվածայինի աշխատանքը, այն քննադատության ուղղությամբ, որ նրան հումույթով, գործիքներով չի մատակարարում, որ նրան դազգյահին չի կցում, որ նրան չի հայտնում իր աշխատանքի արդյունքը, որ հաշվառում չի կազմակերպում, որ քիչ է օգնում նրան՝ կազմակերպելու հաշվառումը:

Ինքնաքննադատությունը պետք է լինի ոչ միայն հասարակական աշխատողների հատկությունը, պետք է այն լինի ոչ միայն կուսակցական, պրոֆմիութենական և կոմյերիտական ապարատների աշխատանքներում, այլև մեծ չափով պետք է հանդիսանա սոցիալիստական մրցության քանակական լայնացման և որակական բարելավման կարևորագույն միջոցը, կարևորագույն մեթոդը: Նա, ով չի աջակցում հարվածայինների կողմից ինքնաքննադատության զարգացմանը, նա խանգարում է արտադրանքի որակի բարելավմանը, խանգարում է տարբերել հարվածայինին կեղծ հարվածայինից: Հարվածայինը դարձել է մեր արդյունա-



բերության մեջ կենտրոնական դեմքը: Նա արդեն կենտրոնական դեմք է դառնում նաև գյուղատնտեսության մեջ, խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում: Ամեն մեկը հարվածային չի, ով իրեն հարվածային է հայտարարել, ով պարտավորություն է վերցրել, ով կնքել է պայմանագիր: Բոլորին հայտնի յե, որ ավելի հեշտ է պարտավորություններ վերցնել, քան այդ պարտավորությունները կատարել: Դրա համար էլ, յեթե դու ուզում ես իսկական հարվածային լինել, ավելի լավ է կատարիր վերցրածդ պարտավորությունները, այլ ոչ թե նրանց մասին խոսիր: Հարվածայինը նա յե, ով աշխատանքի յուրաքանչյուր բնագավառում ցուցադրում է բոլշևիկյան տեմպեր, մեր յերկրում ապահովում է լավագույն որակը, տալիս է որակական լավագույն ցուցանիշներ, գտնում է աշխատանքի լավագույն ձևեր, ով պակաս ջանքերով լավագույն արդյունքների յե հասնում: Հարվածայինը նա յե, ով դրա հետ միասին խնամքով է վերաբերվում դեպի սարքավորումը, դեպի դազգյահներն ու գործիքները, ով տնտեսում է հումույթը, էներգիան, նյութեղենը:

Հարվածայինը նա յե, ով ագահությամբ իր մեջ է ներծծում տեխնիկական գիտելիքները, ուսումնասիրում է տեխնիկան, տիրապետում է նրան, ով իր աշխատանքում լավագույն արդյունքների հասնելու համար ցուցաբերում է ստեղծագործություն և նախաձեռնություն:

Հարվածայինը նա յե, ով իր գործը հասցնում է մինչև վերջ, ով պատասխանում է իրեն հանձնված գործի համար, ով ստուգում է իր աշխատանքի յուրաքանչյուր քայլը:

Հարվածայինը նա յե, ով արտադրության մեջ բոլորից լավ է աշխատում և միաժամանակ ակտիվորեն մասնակցում է հասարակական, քաղաքական կյանքում:

Այսպես հարվածային լինել չի յել կարելի, որովհետև հարվածայինը դա նոր եպոխայի, աճող սոցիալիզմի եպոխայի մարդ է: Այդ առաջավոր բանվորի, լավագույն հար-

վածային, նոր եպոխայի մարդու վրա մենք պետք է հեն-
վենք առաջին հերթին՝ հատկապես խորհտնտեսություններում
և կոլտնտեսություններում: Մեր աշխատանքը կոլտնտեսու-
թյան և խորհտնտեսության մեջ՝ սոցմրցման և հարվածայ-
նության գծով, ներկայումս ստանում է վոչ պակաս նշանա-
կություն, քան կոմյերիտմիության աշխատանքը խոշորա-
գույն նորակառույցներում, կամ խոշորագույն գործարան-
ներում: Հարկավոր է ուղղակի ասել, վոր կոլտնտեսու-
թյուններում և խորհտնտեսություններում աշխատանքի կազ-
մակերպմամբ, սոցմրցման կազմակերպմամբ մենք դեռևս
հիմնավոր կերպով, բավարար չափով չենք զբաղվում: Մենք
թույլ ենք ուսումնասիրում տեխնիկան, ագրոտեխնիկան և
ավելի քիչ ենք զբաղվում, քան արտադրության մեջ, հար-
վածային բրիգադների աշխատանքի վորակով, բրիգադների
ընտրությամբ և այլն: Շատ հաճախ կոլտնտեսա-
կան բրիգադների գլխում, կոլտնտեսությունների
գլխում, մեր կուսակցական և կոմյերիտական բջիջների ղե-
կավարության մեջ նստած են մարդիկ, վորոնք կոլտնտեսա-
կան արտադրական պրոցեսներում մասնակցություն չեն ցու-
ցաբերում և չեն էլ հասկանում նրանց. դրանք կամ կոոպե-
րացիայի աշխատողներ են, կամ ուսուցիչներ, կամ գյուղ-
խորհրդի աշխատողներ և այլն: Յեթե մենք ուզում ենք կոլ-
տնտեսություններում սոցմրցման և հարվածայնության
գործն առաջ մղել արագ թափով, ապա կոլտնտեսության
բրիգադի մեջ, կոլտնտեսական բջիջի ղեկավար պոստում՝
սկսած այդ բջիջի բյուրոյից և վերջացրած նրա քարտու-
ղարով, պետք է կանգնեն կոլտնտեսական արտադրության
լավագույն կազմակերպիչները:

## ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Անցնում եմ արտադրական պրոցեսի կազմակերպման
մասին յեղած հարցին:

Մեզ մոտ, իբրև կանոն, նոր գործարանի շինարարու-
թյունը վերջացնելու հետ միասին այդ նոր գործարանին տա-



լիս են վոչ միայն նոր շինված կորպուսները, դազգյահները,
ընակարանային կոմբինատները, այլև ժառանգություն են
թողնում շինարարական շրջանի աշխատանքի մեթոդները,
վորոնք անպետք են գործարկված գործարանի պայմաննե-
րում: Հենց այստեղից է, վոր մեզ մոտ առաջանում են գոր-
ծարկման շրջանի մանկական հիվանդություններ: Ի՞նչ ենք
նկատում մենք նորակառույցներում: Արտադրական պրոցեսի
տեխնիկայի տիրապետման թույլ տեմպեր, դազգյահին տի-
րապետելու, առանձին ոպերացիաների, դազգյահների, ա-
ռանձին ցեխերի, ագրեգատների միջև կապը, գործարար
փոխադրեցությունը գտնելու անկարողություն: Զե՞ վոր դուք
գիտեք, վոր մեր նոր գործարանները կառուցվում են հոսուն
արտադրության սկզբունքով, իսկ յերբ հոսուն արտադրու-
թյան մեջ վորևէ ամենափոքրիկ խոկ մասում խանգարում
առաջանա, այդ նշանակում է, վոր վտանգ է սպառնում ամ-
բողջ հոսուն արտադրության համար:

Թերություն է հանդիսանում այն, վոր մեր ինժեներ-
ները սովորում են և շատ դեպքերում լավ են սովորում ար-
տասահմանում, սակայն նրանք բավարար չեն սովորում ար-
տադրական պրոցեսի, արտադրության ամբողջ ընթացքի
տեխնիկային տիրապետելու գործը: Արդյունքը լինում է
այն, վոր գործարանները «տենդում» են, իսկ քանի վոր գոր-
ծարանները «տենդում» են, այստեղ արդեն սկսվում է,—
կարծես հրդեհի մեջ լինես,—«կործանարար ղեկավարու-
թյունը», շտուրմային մեթոդները, պարտիզանչչինան այդ
բառի վատագույն իմաստով—ամեն մեկը վնտռում է այն,
ինչ իրեն պետք է: Սկսվում է վիթխարի լարվածությամբ,
ուրնկումներով տարվող աշխատանքը, անքուն գիշերները, ու-
ժերի խոշորագույն լարումը, վորից արտադրությունն սկսում
է ընթանալ մեկ խոշոր լարվածությամբ, մեկ յերկարատև
ընդհատումներով ու պարապուրդներով: Այդպիսի մեթոդը դե-
մոբիլիզացիայի յե յենթարկում աշխատողներին, խախտում
է արտադրության նորմալ ընթացքը, չի սովորեցնում մարդ-
կանց աշխատանքի սիստեմին: Դեռ ավելին. կարելի յե ա-

սել վոչ-պրոլետարական մոտեցում և պարզացնում գործի հանդեպ: Դեռ շատ-շատերը կարծում են, վոր հենց այդպիսի աշխատանքն է ճիշտ ճանապարհը, վոր դրանում է կայանում աշխատանքի սոցիալիստական մեթոդը:

Մեզ համար, ընկերներ, հարկավոր է յելակետ ունենալ հեղափոխական նպատակահարմարությունը.—յեթե պահանջվում է չքնել, նշանակում է՝ մենք կարող ենք և չքնել յերկու, յերեք, չորս որ, յեթե այդ բանի կարիքը և անհրաժեշտությունն զգացվում է: Բայց ի՞նչ գործ ունի այստեղ սիստեմը: Ինչո՞ւ այդ բանը սիստեմ դարձնել: Նրանք, ովքեր կիրառում են պարտիզանականության սկզբունքը, ովքեր աշխատանքի տարերային մեթոդը աշխատանքի սիստեմ են համարում, նրանք չեն հասկացել այն հիմնականը, ինչ ասել է Վլադիմիր Իլյիչ Լենինը: Մեզ հարկավոր է պրոլետարիատի յերկաթյա բատալյոնների համաչափ առաջխաղացումը, այլ վոչ հիստերիկան:

Կենտրոնականը մրցության մեջ,—դա պայքարն է արտադրական նորմալ աշխատանքի համար, վորովհետև միայն նա յե ապահովում արտադրական առաջադրանքների սիստեմատիկ, անշեղ կատարումը: Այդ մասին, ընկերներ, վկայում է Ստալինգրադի տրակտորի գործարանի փորձը, Խարկովի տրակտորի գործարանի փորձը, այդ մասին վկայում է նաև Մոսկվայի Ստալինի անվան գործարանի փորձը: Բարձրացնել տեմպերը,—ահա թե ինչ է պահանջվում մեզանից: Ստալինգրադցիները ճչում եյին ու ճչում, իսկ յերբ շոշափեցին տեմպերի բարձրացման պրոբլեմը, գործը կարգին գնաց: Թե չէ այսօր տալիս են 80 տրակտոր, վաղը՝ 20, մյուս որը՝ 30, յերեք որից՝ 30, իսկ 4 որից՝ վոչինչ: Հարկավոր է դիսցիպլինայի յենթարկել արտադրությունը, հոսուն արտադրության մեջ ամեն մի մանրուք կատարել ճշտորեն: Պայքարել ձուլվածքի ճիշտ չափերի համար, այլապես նրանք դազգյահի վրա չեն գնա, պայքարել մետաղի վորոշ ամրության համար: Այ, որերս «Պրավդա»-յում գրեցին, վոր Նիժնի-Նովգորոդի գործարանը հարկ յեղած մետաղը չի տալիս: Արդյունքը լինում է այն, վոր դետալը շինում են, բայց այդ դետալների ձևը ճիշտ չի, և նրանք կոտրվում են: Բայց ո՞ւմ են հարկավոր այդ ավտոմոբիլները, յեթե նրանց մետաղը ճաքում է, յեթե այդ մետաղը չունի հարկ յեղած ամրությունը:

Ապահովել դետալների ժամանակին հայթայթումը—այդ նույնպես շատ կարևոր խնդիր է: Հոսուն արտադրության մեջ մանրուքներ չկան: Տրակտորն ունի 3200 դետալ: Յեթե նրանցից մեկը չլինի, տրակտորը, միևնույն է, դուրս չի գա. մեկ դետալի բացակայությունը մոտիկ ժամանակում կքանդի տրակտորը: Հենց դրանում է հոսուն արտադրության տարբերությունը այլ տեսակի արտադրությունից:

Պետք է նոր ձևով և ճիշտ դասավորել ուժերը ձուլարաններում և առհասարակ բոլոր վճռական ցեխերում, վորոնք իրենց ձեռքումն են պահում արտադրության պրոցեսը:

Միանձնյա ղեկավարություն վերից մինչև ներքև, սկսած դիրեկտորից ու վերջացրած ցեխի վարպետով: Այստեղից և պետք է պատասխան տալ նաև այսպես կոչված «նեպ-տնտեսական» մոտեցման հարցին: Այդ հարցը վերջին ժամանակում դիսկուսիայի նյութ եր դարձել մեր միության մեջ, ընդվորում առանձին տեղերում ընկերներն հանգել են հետևյալ յեզրակացության.—դեպի հետ, դեպի ներմիութենական հարցերը.—պետք է, վոր մենք դադարենք զբաղվել տնտեսությամբ և սկսենք զբաղվել մեր գործով—դաստիարակությամբ: Առանձին ընկերներ ընդունակ են մեր միության անցած ճանապարհի վրա, տնտեսական շինարարության մեջ ցույց տված մասնակցության գծով,—նայել համարյա թե վորպես ճակատագրական սխալի վրա: Դա տխմարություն է: Առանց մեր մասնակցության՝ տնտեսական-արտադրական աշխատանքին,—լինի այդ քաղաքում կամ գյուղում,—արդֆինպլանի համար տարվող պայքարում, արտադրանքի վորակի համար, այդ արտադրանքի քա-

նակը մեծացնելու համար տարվող պայքարում, առանց յերիտասարդ բանվորների, առանց աճող սերնդի մասնակցության կոմունիստական դաստիարակությունն անմիտ ե:

Վոչ թե, ընկերներ, մենք հետ պետք ե գնանք դեպի միութենական հարցերը, այլ ավելի վճռականորեն, ավելի համարձակորեն պետք ե առաջ շարժվենք դեպի տնտեսական հարցերը: Իր մասնագիտության ուսումնասիրության խորացումը և առաջ քաշումը՝ վերտիկալ ուղղությամբ (բանվոր, բրիգադիր, վարպետ),—իր դազգյահի տեխնիկայի տիրապետումը, իր պատրաստած մասի արտադրական պրոցեսի և արտադրության կազմակերպման տեխնիկայի տիրապետումը (տնտհաշվարկ, գործարքային աշխատանք, աշխատողների ամրացումը դազգյահին, նեղ մասնագիտացում)— ահա ինչ ե պահանջվում մեզնից: Եվ այդ հիման վրա, հատկապես այդ հիման վրա անհրաժեշտ ե մեր վողջ աշխատանքը կապակցել հերթական ներմիութենական հարցերի լուծման հետ: Այստեղ փնտռել ամուր յենթարկվողականություն, միտք չունի,— մեկը բղխում ե մյուսից: Այդ յերկու մոմենտներն իրարից չի կարելի խզել: Այդ սխալ գործ ե, վորը հանգեցնում ե խոշոր քաղաքական հետևանքների:

Հարցի ճիշտ լուծումն այն ե, վոր մենք ուժեղացնենք մեր մասնակցությունը տնտեսական շինարարությանը և դրա հետ միասին լուծենք նաև ներմիութենական հարցերը, մեր յուրահատուկ խնդիրները, վորոնք մեզ առաջադրում են յերիտասարդ բանվորների և գյուղացիների առողջ պահանջները:

Դաստիարակության հիմունքը տնտեսությունն ե: Դրա վրա պետք ե սովորել՝ մարդկանց դաստիարակել, նրա համար, վորպեսզի նրանցից կադրեր պատրաստել: Թե չե ինչ ե ստացվում մեզ մոտ: Մեզ մոտ յերբեմն տնտեսությամբ զբաղվում են, իսկ բարակներ չկան, հասարակական ճաշարան չկա, տնտեսությամբ զբաղվում են, իսկ ահա, յերիտասարդ բանվորի համար հանգստի ու ազատ ժամերը կազմակերպված չեն, չեն զբաղվում այդպիսի բաներով, մոռանում են բանվորների համար բաղնիք կառուցել: Հետևաբար դրվում ե այն հարցը, վոր մենք չկրկնենք տնտեսավարների գործերը, տնտեսական հարցերին այնպես չմոտենանք, ինչպես մոտենում են տնտեսավարները, այլ քիչ ուրիշ կերպ, վորպեսզի յերիտասարդ բանվորի կենցաղը, նրա կյանքի և ուսման միջնոլորտն ու պայմանները նրան մղեն ավելի լավ զբաղվելու արտադրությամբ գործարանում, կոլտնտեսությունում, խորացրած ձևով ուսումնասիրելու սեփական մասնագիտությունը, տիրապետելու սեփական դազգյահի, վողջ արտադրական պրոցեսի տեխնիկային:

Արտադրության հանդեպ, աշխատանքի հանդեպ յեղած վերաբերմունքի վրա յե ստուգվում յերիտասարդ և հասուն բանվորի դասակարգային կոփվածությունը և քաղաքական գիտակցությունը:

## ՄԱՐՏԻ ՀԱՆԵԼ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՌԵԶԵՐՎՆԵՐԸ

Մենք մարդկային խոշոր չափի, թաքնված մասսիվներ ունենք, վորոնք մեզ համար վիթխարի ռեզերվներ, ստեղծագործության, նախաձեռնության, եներգիայի աղբյուրներ են հանդիսանում և վորոնք մենք դեռևս բավարար չենք ոգտագործում՝ հատկապես գյուղում:

Սոցիալիստական մրցության հետագա խնդիրը հենց կայանում ե նրանում, վորպեսզի հայտնաբերել այդ լրացուցիչ ռեզերվները, պայքարի դուրս բերել նրանց և համապատասխան ձևով ոգտագործել:

Որինակ՝ շատ կոմունիստներ և կոմյերիտականներ դեռ հարվածային չեն, լավագույն դեպքում ձևականորեն են հարվածային համարվում: Այժմ մենք պետք ե մեկ անգամ ընդմիշտ վճռենք այն հարցը, վոր յուրաքանչյուր կոմունիստ և կոմյերիտական պետք ե հարվածային լինի. այդ դեռ քիչ ե, նրանք պետք ե լինեն մրցության առաջատար ելեմենտներ, նրա առաջնորդներ: Ճարտարապետ–տեխնիկական

աշխատողները, այդ թվում նաև մեր յերիտասարդ մասնագետները բավարար չափով չեն ներգրավվում սոցմրցման մեջ։ Ըստ յեղած պաշտոնական վիճակագրության, նրանք ներգրավված են 56 տոկոսով, իսկ փաստորեն շատ ավելի պակաս։ Հաճախ նրանք ձևականորեն են մրցում։ Իսկ նրանցից վոմանք չեն հասկանում մրցումը, թերագնահատում են այն, կարծում են, թե սոցմրցումն ու հարվածայնությունը շարքային բանվորների համար են։ Հարվածայնության նկատմամբ նման արհամարհական վերաբերմունքը հետևանք է այն բանի թերագնահատման, վոր սոցմրցումն ու հարվածայնությունը գիտական-տեխնիկական մտքի աշխուժացման և առաջխաղացման կարևորագույն մեթոդ են հանդիսանում։ Մենք դեռևս թույլ ենք կազմակերպում հարվածայնությունը գիտական-տեխնիկական աշխատողների մեջ, իսկ հենց իրեն, մրցության մեջ, դեռևս շատ չօգտագործված հնարավորություններ կան, դեռևս խոշոր թաքնված ռեզերվներ կան։

Այդ ռեզերվները թաքնված են գլխավորապես ղեկավարության բյուրոկրատական մեթոդների պատճառով։ Բյուրոկրատիզմը մրցության մեջ առավել վտանգավոր է, քան վորևե այլ տեղ, վորովհետև նա քողի տակ է պահում անասելի հնարավորությունները, թաքցնում է մեզնից մրցողների վիթխարի ստեղծագործական ռեզերվները։ Այդ բյուրոկրատիզմն իրեն հանդես է բերում նորանոր այն ձևերից վախենալու մեջ,—վորոնք առաջադրում են հենց իրենք, մրցող մասսաները,—մրցողների ղեկավարությունը թղթային-բյուրոկրատական ճանապարհով կենտրոնացնելու ձգտման մեջ, դրանք ընդհանուրիս հայտնի և շատ հաճախ իրենց ժամանակն ապրած ձևերի շրջանակների մեջ թողնելու փորձերի մեջ (հանձնաժողովներ՝ մրցությունը ղեկավարելու գծով, ստանդարտային պայմանագրեր և այլն)։ Ահա հանդես են յեկել «հասնել և անցնել» բրիգադները։ Մի քանի բյուրոկրատներ չեյին ուզում հաշվի առնել այդ շարժումը․



ստիպված ենք ցավելով արձանագրել, վոր այդ բրիգադներին անթույլատրելի վերաբերմունք ցույց տվեց նաև մեր պրոֆմիությունների առանձին աշխատողների կողմից։ «Հասնել և անցնել» բրիգադները—դա սոցիալիստական մրցության նոր ձևն է, վորն առաջ է քաշված հենց իրենց, մասսաների կողմից, և նրանց համար վոչ մի բյուրոկրատիզմ սարսափելի չէ։ Միևնույն է, ինչ ձևով էլ վոր նրանց դեմ հանդես գան, նրանք դարձյալ կաճեն, կլայնանան։

Բյուրոկրատիզմը կայանում է նաև նրանում, վոր փորձեր են անում՝ հարվածայնության և մրցության ամեն մի ձևին տալու ինչ-վոր ավարտված, հոյակապ տեսք, հոյակապ սխեմա։ Այնտեղ, ուր խոսքը գնում է միլիոնավոր մասսաների շարժման մասին, կարիք չկա անհանգստանալ այդպիսի հարցերով։ Մասսաների ստեղծագործությունը չի կարելի տրաֆարետ կերպով հավասար չափերով հաշվի առնել։ Պահանջվում է միասնություն հիմնական սկզբունքներում և բազմազանություն՝ նրանց իրագործման մեթոդներում և ձևերում։ Մրցությանը նույնպես վտանգ են սպառնում գոյություն ունեցող ավելուլյականությունը, հարվածայնության հասցեյին յեղած տոնական փռազների ծաղկեփունջը և հարվածայիններին ցույց տրվելիք կոնկրետ ոգնության, կոնկրետ ղեկավարության բացակայությունը։ Մեզ մոտ շատ կան այնպիսի աշխատողներ,—ի թիվս վորոնց և պրոֆմիության աշխատողներ,—վորոնք հարվածայնությունից համարյա վոչինչ չեն հասկանում՝ այդ խոսքի բառացի իմաստով, բայց խոսում են ամենուրեք, ուր էլ վոր նրանք հանդես գան, հարվածայնության մասին, յերդվում են հարվածայինի անունով։ Այդ բանը գոյություն ունի և մեզ մոտ, կոմյերիտմիության մեջ։

Մրցությունը կազմակերպելիս, պետք է կարողանալ արդյունաբերության կամ պրոֆեսիայի յուրաքանչյուր առանձին ճյուղի մեջ առանձնացնել գլխավոր ողակը, առաջատար և վճռական խնդիրները, վորոնցից և կառչելով, կարելի յե քանակապես մեծացնել մրցողների շարքերը։ Իսկ

մեզ մոտ, ընկերներ, մինչև այժմս ընդհանուր մոտեցում գոյություն ունի մրցության հանդեպ։

## ԿԵՆՑԱՂԻ ՅԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐ ԶԲԱՂՎԵԼ ԿԵՂՏՈՏ ԲԱՐԱԿԻ ՄԱՍԻՆ. ԱՅԼ ՄԱՔՐԵԼ

Աշխատավորության նյութական կենցաղային վիճակի բարելավումը (սնունդը, մատակարարումը, լայն գործածության ապրանքները, բնակարան, բարակ) յուրաքանչյուր բոլշևիկի համար կարևորագույն խնդիրն է հանդիսանում։ Չի կարելի կենցաղի և մատակարարման հարցերը հակադրել մեր շինարարությանը, ինչպես այդ անում էին տրոցկիստական էլեմենտները, ինչպես այդ անում էին աջ օպորտունիստները, վորովհետև այդ հարցերը բխում են մեր շինարարության ամբողջ ընթացքից։ Մինչդեռ առանձին կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի պրակտիկայում գոյություն ունի այդ հարցերի նշանակության բացահայտ թերագնահատում։ Բարակներում կեղտ է տիրում, իսկ ինչ ենք մենք անում։ Մենք ընդգծում ենք, վոր իրոք բարակներում կեղտ, խտություն է, վոր այնտեղ իրոք թախտաբիթներ և ոջլեր կան։ Ճաշարաններում հերթ է, հաճախորդների հետ կոպիտ վերաբերմունք գոյություն ունի,—իսկ ի՞նչ ենք մենք անում։

Շատ հաճախ մենք ընդգծում ենք միայն, վոր այդպիսի փաստեր գոյություն ունեն, վոր ճաշարաններում ծաղկում են կոպտությունը, անկազմակերպվածությունը, վոր այնտեղ հերթեր գոյություն ունեն։ Իսկ ո՞վ կկշտանա դրանից։ Մեզ մոտ մատակարարման հարցերում բազմաթիվ խայտառակություններ կան, բայց նրանց հանդեպ մեզ մոտ, կոմյերիտմիության մեջ մշակվել է ինչ-վոր հատուկ վերաբերմունք։ Մարդն ընդգծեց փաստը, և դրանով նա հպարտանում է, վոր նկատել է։ Իսկ ահա, վորպեսզի աշխատի վոչնչացնել այդ նկատված խայտառակությունները,— ապա այդ արդեն իր գործը չէ։ Ահա մեզ օրինակ։ Սինչայի հանքերում բարակներում յերիտասարդներ են ապրում։ Ածխի ավազան է, բայց ածուխ չունեն, բան չունեն վառելու, իսկ հանքը 3 րոպեյի ճանապարհ է։ Ջուր չկա, չգիտեն ինչով լվացվեն. բարակում կեղտ է։ Հարցնում ենք.—«Իսկ վո՞րտեղ եք դուք, ի՞նչ եք անում»։ Պատասխանում են—«Մենք վրդովվում ենք, բղավում» և այլն։ Չե՞ր կարելի հավաքվել, կարգ ու կանոն սահմանել. այսօր դու կապահովես ածուխ բերելու գործը, վաղը՝ դու, մյուս օրը՝ դու. այդպիսի կարգ ու կանոն չկա։ Իսկ չէ՞ վոր այդ հնարավոր է անել։ Ջուր չկա,—ամսական 50 կոպեկ պետք է վճարել ջրի։ Բոլորը համաձայն են վճարել։ Էլ բանն ինչո՞ւմն է։ Մարդ չեն գտնում, վոր բարակում ապրողներից այդ 50 կոպեկները հավաքի։ Յեվ քանի վոր չի հավաքվում, չի վճարվում, ջրկիրը ջուր չի բերում,—այ քեզ ամբողջ հասարակ մեխանիկան։ Յեվ բղավում են, ջղայնանում, հայհոյում կյանքի պայմանները։ Հարկավոր է հենց իրեն հայհոյել իր անօգնականության համար։ Ամոթ է յերիտասարդ ընկերներին այդպես թափթփված, անյեռանդ, այդպես անկարող լինել։ Թերությունները նշել—այնքան էլ մեծ պատիվ չէ, իսկ ահա լավն այն է, սա, թե ինչպես հաղթահարել այդ թերությունները, վոչնչացնել, արմատահան անել նրանց։ Մեղավոր է, իհարկե, նաև նա, ով ծնում, թույլատրում է այդպիսի թերություններ, բայց և պակաս աստիճանով չէ, վոր պատասխանատու յե նաև նա, ով այդ թերությունները նկատել է, բայց չի վերացրել։ Յեթե դու իմացել ես այդ թերությունների մասին, այդ խայտառակությունների մասին և չես պայքարել նրանց վերացման համար, նշանակում է, դու ինքդ դառնում ես այդ խայտառակությունների մասնակիցը։ Ահա ինչպես պետք է հարցը դնել։

Մենք 5 միլիոնանոց կոմյերիտմիության մեջ ունենք վճարովի թե անվճար զանազան հրահանգիչների խոշորագույն բանակ. նրանք տեղերն են գնում, տեսնում ամեն ինչ։ Դե յեկեք այսպես դնենք հարցը—նկատել ես, խնդրեմ, վերացրու։ Իսկ մեզ մոտ այնպես է լինում, վոր անգամ ԿԿ-ի հրահանգիչն ասում է— նկատել եմ այսինչ բանը, այնինչ

բանը: Զարմացրեց նկատել, և ավելի լավ կլինի ասել՝ վերացրել եմ: Չե՞ս վերացրել. ուրեմն դու պակաս պատասխանատու չես նրանցից, վորոնք ծնունդ են տվել այդ թերություններին և խայտառակություններին:

## ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ՇԱՀԱԳՐԳՌԵԼ ԿՈՆԿՐԵՏ ԳՈՐԾՈՎ

Հարկավոր է հրաժարվել կոոպերացիայում ձևական աշխատանք կատարելուց, հարկավոր է սովորել առևտուր անել, վաճառողների մեջ աշխատանք կատարել: Իսկ մենք հաճախ այսպես ենք անում — բացում, կազմակերպում ենք յերիտասարդական խանութներ. յերկու— յերեք շաբաթ, մեկ ամիս նրանք մաքուր են, կանոնավոր, իսկ հետո չես ջոկի՝ վո՞րտեղ է սկսվում շարքային խանութը և վորտեղ է վերջանում կոմյերիտական խանութը.— նույնպիսի կեղտ, նույնպիսի խառնաշփոթություն, նույնպիսի անկազմակերպվածություն, միայն թե հափշտակումներն ավելի քիչ են:

Հարկավոր է ստեղծել սանիտարական-տեսչային խմբակներ առևտրական խանութների, ճաշարանների գծով: Այդ բանի համար բոլոր հնարավորությունները կան և մարդիկ էլ շատ են: Ունենք մեր բժիշկները, տեսուչները, հրշեջները: Ի՞նչ միայն չունենք մենք՝ մեր 5 միլիոնանոց կազմակերպության շարքերում: Հարկավոր է միայն նրանց գտնել, շահագրգռել, լինել նրանցից յուրաքանչյուրին կոնկրետ գործով և վոչ ընդհանրապես: Այն ժամանակ մենք մեր տեղից առաջ կշարժվենք առավել ուժեղ չափով, առավել մեծ չափով: Հարկավոր է ոգտագործել տեղական հնարավորությունները: Զբաղվել ձկան գործով: Իսկ մեզ մոտ, վորպես կանոն, ձկով զբաղվում են Հեռավոր Արևելքում, Սև ծովում, Կասպից և Բալտիկ ծովերում, Վոլգայի վրա, Աստրախանում: Իսկ ինչքա՞ն գետեր ունենք մենք, ինչքա՞ն ձկներ կան նրանցում: Այդ մասին յես չեմ խոսում, այդ մասին բավականին շատ է գրվում մամուլում: Դուք յերևի գիտեք: Իսկ մենք այդ գործով բոլորովին չենք հետաքրքրվել: Իսկ հետո յել աղաղակներ ենք բարձրացնում — ճաշարաններում վոչինչ չկա:



Զբաղվել ճագարներով: Իդեպ ասած, դա շատ հաճելի կենդանի յե:

Զբաղվել խոզաբուծությամբ, մերձքաղաքային բանջարանոցներով, սունկերով, մրգերով, վորսով և այլն:

Պետք է զբաղվել այնպիսի բաների արտադրությունը կազմակերպելով, ինչպիսին են կոնսերվի, սունկի, հնդեղենի տուփերը, քացախի, տակառի, թեյամանի, բահի պատրաստումը: Մեկ խոսքով՝ յես խոսում եմ բոլոր այն բազմազան իրերի մասին, վորոնք ամենալայն սպառման ապրանքներ են հանդիսանում: Մեզ մոտ այդ գործով շատ քչերն են զբաղվում, թերագնահատում են նրա նշանակությունը, չեն սիրում, հաճախ էլ ամաչում են դրանով զբաղվել, դա ամոթալի գործ համարելով:

Իսկ այժմ, նայեցեք, թե ինչպես հին ժամանակում վորևէ մի միլիոնատեր վաճառական ուներ իր բմբուլի և փետուրի խանութները և այդ վաճառականը չեր թաքցնում այն, թե ինչով է նա զբաղվում, այլ, ընդհակառակը, համարյա հպարտանում եր դրանով, վորպես փող աշխատելու միջոց: Իսկ մեզ մոտ, այժմ, փորձ արեք կոմունիստին կամ կոմյերիտականին վարիչ կարգելու այդպիսի խանութներին, իսկ հետո հարցրեք նրան.— «վո՞րտեղ ես աշխատում»,— նա կամաչի ձեզ պատասխանել: (Ծիծաղ): Ինչպես թե այդպես ասել.— չորս կողմ գիգանտներ են կառուցում, իսկ նա բմբուլների ու փետուրների հետ գործ ունի (ծիծաղ), նա չի հասկանում այն, վոր առանց այդպիսի բաների, բանվորները Մագնիտոգորսկ չեն կառուցի: Շատերն իրենց աշխատանքը կոոպերացիայի խանութում, ճաշարանում կամ ճագարանոցում հաշվում են յերկրորդ տեսակի աշխատանք, ամաչում են խոսել այդ մասին և չեն գնում այդպիսի աշխատանքի: Պետք է ձեզ ասել, վոր սոցիալիստական պետության մեջ լավ կերպով դրված ամեն աշխատանք հանդիսանում է պատվի, փառքի, արիության և հերոսության գործ: Դա փաստ է:

Ուստի և Խորհրդային պետության մեջ ամեն մի աշխատանք, որը բարելավում է աշխատավորության կենցաղը և բարելավում մեր յերկրի վիճակը, պատվավոր գործ է հանդիսանում: Ահա հենց այստեղ է, որ պետք է ասել, որ մեր շարքերում, կոմյերիտմիության մեջ, մենք դեռևս կոոպերացիայի աշխատողների, խանութների, ճաշարանի աշխատողների, ուսուցիչների և նույնիսկ բժիշկների հետ վատ ենք վերաբերվում: Հաշվում ենք, որ, ե՛հ, առանց նրանց էլ կարելի յե ապրել:

## ԲԱՆՎՈՐԻՆ ԼԱՎ ԿԵՐԱԿՐԵԼԸ ՊԱՏՎԻ ԳՈՐԾ Ե

Լավագույն խոհարարներին, լավագույն վաճառողներին, մեր հանրային ճաշարանների լավագույն մատուցողներին պետք է վահանի վրա բարձրացնել, պարգևատրել, նրանց մասին թերթերում գրել: Ցեթե միայն խոսենք խոհարարների մասին, ապա դժվար է լավագույն խոհարարներին ամրացնել գործարաններին:

Բանվոր դասակարգին լավ կերակրելը — դա պատվի գործ է, և այստեղ խոհարարը գլխավոր ջութակն է: Լավագույն խոհարարներին պետք է գործարանում իմանան բոլորը, իմանան, որ նրանք ճիշտ կերպով են օգտագործում մթերքները, իսկ դա,—մթերքների հսկայական քանակի ճիշտ օգտագործումը, շատ մեծ գործ է: Վերցնում են ձուկը, խաշում են նրան, և տալիս: Աղի ձուկը նույնիսկ չեն թրջում: Կամ հացը: Չկա այն բանը, որպեսզի բավարար չափով թխեն: Նույնը և տեղի յե ունենում մսի հետ: Նրա համար, որպեսզի ստացվի համեղ, հաճելի և ախորժալի կերակուր, հարկավոր է լավ մաքրել, ջրով լվանալ, իսկ մեզ մոտ, որպես կանոն, այդ գործով չեն զբաղվում, խուսափում են դրանից և ոչ մի ուշադրություն չեն դարձնում այդ կարևոր հարցի վրա: Իսկ ի՞նչ է ստացվում արդյունքում: Արդյունքը լինում է այն, որ նույնիսկ լավագույն մթերքներից մենք վատորակ ճաշեր ենք պատրաստում: Մի



շարք, այդ գործին լավ ծանոթ անձնավորություններ, մասնագետներ, մասնավորապես Ստալինգրադի տրակտորի գործարանի հասարակական ճաշարանի վարիչը, պնդում է, որ, որպես կանոն, հասարակական սննդի համարյա բոլոր մթերքները մենք միանգամայն ոչ-ճիշտ կերպով ենք ծախսում:

1928 թվին սպառկոոպերացիայի բոլոր ճաշարանների օրական կարողությունը քաղաքներում կազմում էր 765.000 ճաշ, 1931 թվի հոկտեմբերին նա հասավ 16,5 միլիոնի: Յեթե մենք վերցնենք հասարակական սննդի սիստեմը, այստեղ ներառնելով Ժողսնունդ միությունը և մյուս կազմակերպությունները, ապա ընդհանուր կարողությունը սահմանվում է մոտ 28.000.000 բաժին ճաշով: Գյուղում միայն սպառկոոպերացիան ունի 19,2 միլիոն բաժին ճաշ մատակարարող ճաշարաններ: Հասարակական սնունդն արդեն 1931 թ. դդայի ֆակտոր հանդիսացավ կենցաղը վերակառուցելու համար:

## ՉԱՐՀԱՄԱՐՀԵԼ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԻ «ՄԱՆՐՈՒՔՆԵՐԸ»

Մեզ, կոմյերիտմիությանը հարկավոր է լայն ֆրոնտով արշավի շարժվել լայն սպառման ապրանքների մշակման, առևտրական ցանցի լավագույն կազմակերպման, լայն սպառման ապրանքների լավագույն ասորտիմենտի ընտրության և ավելցուկների լավագույն օգտագործման համար:

Այստեղ իրոք շատ բան կա, որ մենք պետք է սովորենք Ցեվրոպայից: Դանակներ չկան, ատամի խոզանակ Հեռավոր Արևելքում գտնել չի կարելի,—միայն նա կա Կ. բանակային զորամասի հրամանատարի մոտ, որը պատրաստել է ատամի խոզանակները կարմիր բանակայինների համար: Ահա տեսեք, սովորել են Մագնիտոգորսկ կառուցել,— ընդ որում այնպես, ինչպես աշխարհը յերբեք չի կառուցել,— իսկ ատամմաքրիչ խոզանակ չենք կարողանում պատրաստել: Պորտման նույնպես չես գտնի. բանվորական կենցաղին վե-

բաներով մի ամբողջ շարք իրեր մեզ մոտ բացակայում են,— ասեղներ, թել և այլն: Ինչո՞ւ չկան այդ բաները: Վորովհետև մենք սովորել ենք խոշոր մասշտաբների հետ գործ ունենալ: Մագնիտոգորսկը, դա մեզ կսազի, մեզ համար բան է, իսկ ահա լուցկին— չնչին գործ է, չենք էլ ուզում զբաղվել նրանով: Նոր հանք սարքավորելու— մենք պատրաստ ենք, այդ գործում վարպետ ենք, իսկ բանվորական կենցաղի մանրուքները կարգավորելու ժամանակ չունենք:

Մեզ մոտ արհամարհանք գոյություն ունի բանվորական կենցաղի մանրուքների հանդեպ: Այդ արհամարհանքին պետք է վերջ տալ: Կուսակցության ԿԿ-ն այժմ խիստ կերպով է դնում լայն սպառման ապրանքների հարցը: Մենք, լենինյան կոմյերիտմիությունը, լայն սպառման ապրանքներով պետք է զբաղվենք վոչ այնպես, ինչպես այժմ ենք զբաղվում: Նայեցեք, մամուլը գրում է լայն սպառման ապրանքների մասին, այդ մասին խոսում են, քննարկում, բայց ցույց տվեք ինձ գոնե մեկ հատիկ կոմյերիտական կազմակերպություն, վորն իր անտեսավարի հետ սկանդալ բարձրացրած լինի այն բանի համար, վոր նա արտադրության մնացորդները չի օգտագործում լայն սպառման ապրանքներ արտադրելու համար: Յեթե կա՞ այդպիսի կազմակերպություն, ապա նրա աշխատանքի մասին վոչ վոք չգիտե:

Որվա խնդիրը նրանումն է, վորպեսզի կոմյերիտական բջիջն ամեն մի գործարանում, ամեն մի արհեստանոցում պայքար մղեր ավելցուկներն օգտագործելու, լայն սպառման ապրանքներ մշակելու համար, վորպեսզի մեր կոմյերիտական կազմակերպությունն այդ տեսակետից ամենաարմատական, ամենից յեռանդուն կազմակերպությունը լիներ, այսինքն՝ լիներ այնպիսի մի կազմակերպություն, վորը վոչ վոքի հանգիստ չտար, վորը բառացիորեն որ ու գիշեր տեղից շարժեր ում վոր հարկն է, իմանար, թե ի՞նչպես օգտագործել մնացորդները, ի՞նչ է պատրաստվում այդ մնացորդնե-



րից, ի՞նչ քանակով, ի՞նչպիսի վորակի, վո՞րպիսի ժամանակամիջոցում: Ահա ինչում է կայանում մեր խնդիրը:

## ԶԲԱՂՎԵԼ ԲԱՐԱԿՆԵՐՈՎ ՅԵՎ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ

Յես կուզեյի ձեր ուշադրությունը հրավիրել նաև այնպիսի մի հարցի վրա, ինչպիսին է բնակարանը: Մենք յերկար և շատ ենք խոսել այն մասին, վոր պետք է ավելի մաքուր ապրել, իսկ մեզ մոտ բարակը առաջվա պես դիմագուրկ է, առաջվա պես այնտեղ կեղտ կա, և վոչ միայն այնտեղ՝ բարակում: Յերբեմն սենյակն էլ, նոր շինված բնակարանն էլ դարձնում են միանգամայն անբնակելի շենք: Այդ ամենը բացատրվում է մեր արհամարհողական վերաբերմունքով այդ կենցաղային հարցերի հանդեպ:

Որինակի համար վերցնենք աղջիկների առանձին բարակները: Նրանք ապրում են նույնպիսի բարակներում, բայց, ինչպես յես դիտել եմ այդ, ապրում են ավելի լավ, ապրում են շատ ավելի մաքուր, քան մեր տղաները: Բարակը նույն նյութերից է շինված, նույն վորակի յե, նույն չափի: Բարակները նույնն են, բայց այնտեղ, ուր տղաներն են ապրում, ասես թե ախոռ լինի, իսկ այստեղ՝ դուրեկան է ու հաճելի: Այստեղ անկողինն էլ է հավաքված, սպիտակեղենն էլ մաքուր է, հատակն էլ է սրբված, մաքուր, իսկ տղաների մոտ գուլպաները, թերթերը, ծխախոտի մնացորդները և կոշիկները ցիրուցան թափված են ամբողջ սենյակում:

Դե, իհարկե, առանձին դեպքեր են լինում, վոր աղջիկների մոտ էլ այնքան մաքուր չի· (ծիծաղ): Բայց, իբրև կանոն, աղջիկների բարակները միշտ ավելի մաքուր են: Բնորոշ է, վոր մենք բոլորս էլ գիտենք բարակների կեղտի մասին, շատ ենք խոսել, բայց թույլ ենք պատժում մարդկանց այդպիսի անկարգությունների համար: Թույլ ենք պատժում, թույլ ենք պատասխանատվության կանչում:

Իմ կարծիքով, չէր խանգարի, վոր մենք, դաստիարակչական նպատակներով, աղմուկով կոմյերիտմիությունից

դուրս չպրտեյինք մի տասնյակ մարդ խոշոր արդյունաբերական կենտրոններում՝ կյանքի այդպիսի սոսր պայմաններ ստեղծելու համար, այդ անմաքրասիրության համար, կուլտուրան, առողջապահությունը, սանիտարիան արհամարհելու համար, բարակներում այդպիսի անկարգություններ առաջացնելու համար: Իմ կարծիքով՝ չեր խանգարի:

Պետք ե հասկանալ, վոր այս ֆրոնտը պակաս չի իր նշանակությամբ, սակայն կարևոր չի, քան՝ ասենք թե, վորևե գործարանի գործարկումը: Ամենևին չեմ չափազանցնում: Դե, պատկերացրեք, թե ինչքան մարդ ե ապրում բարակներում: Ահագին քանակությամբ: Հարկավոր ե զբաղվել բարակներով:

## ՏՎԵՔ ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ ԼԱՎ ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Կոմյերիտմիությանը հարկավոր ե ընդհուպ կերպով մոտենալ մեր կինոյանցի, ռադիոկետերի ծավալման, յերաժըշտական գործիքների մշակման լայնացման հարցերին: Այդ բանի շատ մեծ պահանջ կա վոչ միայն բանվորական, այլև գյուղացիական յերիտասարդության մեջ: Կոմիտեներից և վոչ մեկը քննության չի առել ֆոտոապարատների և կամ յերաժշտական գործիքների մասին յեղած հարցերը: Այնինչ ապրում ե բանվոր յերիտասարդության հետ կողք կողքի: Մեր բանվոր տղաները ման են գալիս խանութները, փնտրում են գիթար, ջութակ, գարմոշկա, չեն գտնում և յեթե գտնում են, հինգ անգամ թանկ ե լինում ինքնարժեքից: Աջ ու ձախ ընկնում են ֆոտոապարատներ, պլաստինկաներ փնտրելու,— չեն գտնում: Կամ պատեֆոնները: Դուք բոլորդ տեսե՞լ եք արտադրած պատեֆոնները: Կարծել եք, թե լավ բան եք շինել, բայց հիմար բան ե դուրս յեկել. պատեֆոններ, վոր առաջին իսկ լարելուց փչանում են: Յեվ դեռ ստորություն ունեն դրանք շուկա հանելու: Իսկ չե՞ վոր ձեղնից յուրաքանչյուրը հաճույքով կլսի պատեֆոնի յերաժշտությունը: Կամ ահա պլաստինկաները.— յես ծանոթացա մեր պլաստինկա ար-



տադրող գործարանի հետ, վորը, իդեպ, միակն ե ԽՍՀՄ-ում (Ապրելևկայում): Գործարանի տարեկան կարողությունը 2 միլիոն պլաստինկա յե: Յես արդեն չեմ խոսում նրանց թանգության, նրանց վատ վորակի մասին,— դուք բոլորդ այդ գիտեք: Յես ուզում եմ ասել այդ պլաստինկաների թեմատիկայի մասին: Նրանցում շատ քիչ հաճելի բան կա հանգստության և հոգու համար: Փաստ ե, ընկերներ: Քեզ կամ ճառ կամ հեղափոխական յերգ են հրամցնում: Ասես թե մենք քիչ գիտենք հեղափոխական յերգեր: Յես փորձեցի Հեռավոր Արևելքի համար պլաստինկաներ գնել: Բառացիորեն համար բան չգտա գնելու: Մեզ լավ յերաժշտություն տվեք լսելու, լավագույն կլասիկ յերաժշտություն, ասում եմ այն իմաստով, վորպեսզի տային լավագույն հին յերգեր, ռուսական ժողովրդական յերգեր, զանազան ազգությունների լավագույն յերգեր: Հին— յես ասում եմ այն իմաստով, վորպեսզի տային հնչող, յերաժշտական, գեղեցիկ յերգ: Հենց այդ ե, վոր չկա. կամ շատ քիչ կա: Իսկ ահա այն մասին, թե ի՞նչպես կռել մետաղը, այդպիսի պլաստինկաներ կան: Յես չափազանցությունների հետև չեմ ընկնում: Ազնիվ խոսք եմ տալիս ձեզ (ծիծաղ): Արտադրական տեխնիկական պրոցեսների մասին պլաստինկաներ կան: Մոսկվայի Կոմիտեն լսել ե (ծիծաղ), իսկ գործարանը գտնվում ե հենց Մոսկվայի կողքին: Ահա դուք բոլորդ կուլտուրական մարդիկ եք, անտարակույս սիրում եք և՛ յերաժշտություն, և՛ յերգեր, ձեզնից շատերն ունեն պատեֆոններ, վոմանք—լավերը, մյուսները՝ վատերը, ձեզնից վոմանք ուզում են գնել, բայց այդ մասին չգիտեմ ինչու լռում եք: Այստեղ ավելի խոսանգում ե պետք, ավելի վրդովմունք, և վոչ միայն վրդովմունք: Այստեղ պետք ե ուժեղ հսկողություն սահմանել այդ արտադրության և շուկայի վրա: Կուսակցությունը մեզ այդ բանում կոգնի:

## ԿԱԴՐԵՐԻ ՊՐՈԲԼԵՄԸ

## ԴԱՌՆԱԼ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՇԿՈԼԱ

Մեր աշխատանքում խոշոր նշանակություն ունի ներկա յերիտասարդությունից, լենինյան կոմյերիտմիության ան-

դամներից գիտական կադրեր, դրագետ մարդիկ, յես կասեյի, մեր պրոլետարական ինտելիգենցիայի կադրեր պատրաստելու հարցը: Այդ մեծ կարևորություն ներկայացնող պրոբլեմ է, վորի լուծումից է կախված մեր սոցիալիստական շինարարության տեմպերի արագացումը: «Ինտելիգենտ» բառը վաղուց մեր միջավայրում բացասական է հանդիսացել: Բացառությամբ լավագույն հեղափոխական ինտելիգենցիայի առանձին խավերի, վորոնք բանվոր դասակարգի հետ միասին բանտ և աքսոր եյին գնում, դաղտնի ընկերություններ եյին կազմակերպում, այդ խավի մնացած մասի հանդեպ բանվոր դասակարգը մինչև հեղափոխությունը թշնամական վերաբերմունք ուներ: Յեվ այդ միանգամայն որինական եր, վորովհետև հանձին ինտելիգենցիայի այդ մասի՝ բանվոր դասակարգը տեսնում եր մի կաստայի, վորը մոտիկ հարաբերություն ուներ տիրող կապիտալիստական դասակարգի հետ, կապիտալիստներին ոգնում եր նրանց տիրապետությունն ամրացնելու, իր գիտելիքները գնում եր բուրժուազիայի տրամադրության տակ բանվոր դասակարգին ճնշելու համար, հաճախ էլ ինքն եր ճնշում աշխատավորությանը:

Հենց դրանով էլ բացատրվում է բանվոր դասակարգի թշնամական վերաբերմունքը ինտելիգենցիայի այդ խմբի հանդեպ: Նա իր համապատասխան արտահայտությունը գտնում եր նաև բանվոր յերիտասարդության մեջ:

Յեթե ձեզնից վորևէ մեկն աշխատել է ցարական գործարաններում, ապա նա պետք է հիշի, վոր այն ժամանակ բանվոր աղջկա համար մեծագույն նախատինք եր ինտելիգենտի հետ զբոսնելու գնալը: Գիմնազիստին խայտառակելը և նույնիսկ ծեծելը հաճախ բարձր պատիվ, հերոսական քայլ եր համարվում գործարանի յերիտասարդի համար: Դրանում նույնպես արտահայտվում եր պրոլետարների դասակարգի, նրա յերիտասարդ ներկայացուցիչների թշնամությունը ինտելիգենցիայի առանձին խավերի հանդեպ:



Բուրժուազիան հայտարարում եր գիտության ապաքաղաքականության մասին: Այդ ամբողջապես կեղծ հայտարարություն եր, վորովհետև բուրժուազիան լայնորեն ոգտագործում եր գիտությունը՝ աշխատավորներին ստրկացնելու նպատակով: Մտավոր աշխատանքը ասես թե հատուկ պրոֆեսիա լիներ: Մտավոր աշխատանքով զբաղված մարդիկ սահմանազատված եյին ֆիզիկական աշխատանքից: Դրանով իսկ բուրժուազիան ստեղծում եր մտավոր աշխատանքի մարդկանց մենաշնորհյալ կաստա և նրանց ոգնությամբ, նրանց միջոցով ստրկացնում եր աշխատավորությանը: Մտավոր աշխատանքի խզումը ֆիզիկական աշխատանքից հաճախ ծնունդ եր տալիս ամպերում սավառնող մարդկանց, ֆանտազյորների, մարդիկ, վորոնք չեյին ճանաչում կյանքի պրակտիկան, նրա ամբողջ բարդությունը, մարդիկ, վորոնք այս աշխարհից չեյին, վորոնց բուրժուազիան մեծ ճարպկությամբ ոգտագործում եր իր շահերի համար: Յեվ դրա համար էլ բանվոր դասակարգը թշնամաբար եր վերաբերվում ինտելիգենցիայի այդ խավերին:

Այժմ պայմաններն արմատապես փոխվել են: Իշխանությունը գտնվում է բանվոր դասակարգի ձեռքում: Մենք հանդիսանում ենք վերընթաց դասակարգ, վորն իր պատմական խնդիրները կատարելու համար պետք է բոլոր ոգտակար առաջավոր գիտությունները, բոլոր նորագույն հայտնաբերումները գիտության զանազան ճյուղերից վերցնի և ոգտագործի կապիտալիստների դեմ վերջնական հաղթանակ շահելու, սոցիալիզմ կառուցելու նպատակով:

Ընկեր Ստալինն ասաց, վոր մենք պետք է առաջիկա ժամանակում ստեղծենք մեր արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի կադրերը:

Սոցիալիզմը կառուցել, կապիտալիզմը վերջնականապես հաղթահարել, չունենալով պրոլետարական ինտելիգենցիայի մեր կադրերը, — հնարավոր չէ: Մենք որեցոր ավելի և ավելի յենք վոչնչացնում մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած սահմանագիծը: Մեզնից պահանջվում են այնպիսի

կադրեր, վորոնք ուսումնասիրեյին գիտությունը և դրա հետ մեկտեղ հեռու չմնային հանրոգուտ ֆիզիկական աշխատանքից, իրենց գիտելիքները տանեյին արմատավորեյին մասսաների մեջ, ոգնեյին կուսակցությանը՝ կազմակերպելու մասսաներին կուսակցական դրոշի տակ: Հատկապես այդ բանի համար է, վոր լենինյան կոմյերիտմիության մեջ հարկավոր է արմատապես փոխել վերաբերմունքը դեպի ինտելիգենցիան: Ընկերներից վոմանց մոտ այդ բանը հանդես է գալիս զուտ արտաքին կերպով: Ցանկանալով նմանվել ինտելիգենտ մարդու, նրանք գնում են շլյապներ և գործածում փողկապներ.—լինելով կիսագրագետ, հազիվ կարողանալով կարդալ և գրել, նրանք կարծում են, վոր արդեն հասան մարդկային գիտելիքների գագաթին: Ուզում եք կապեք տասը, քսան, յերեսուն փողկապներ, բայց դրանից գիտելիքները ձեր գլխում չեն ավելանա:

Հնգամյա պլանի անցած յերեք և կես տարիների ընթացքում մենք դարձանք ամենաառաջավոր յերկիրը՝ բարձրագույն և միջնակարգ հատուկ դպրոցների համար կադրերի պատրաստման հարցում: Նույնիսկ այնպիսի փառաբանված, այնպիսի կուլտուրական յերկիր, ինչպես Ամերիկան է, ներկա տարում բարձրագույն և միջնակարգ հատուկ դպրոցներում սովորեցնում է միայն 827·000 մարդ: Իսկ մենք 1932 թվին բարձրագույն և միջնակարգ հատուկ դպրոցներում սովորեցնում ենք 1·200·000 մարդ: Այդ բանը հանդիսանում է ցուցանիշը նրա, թե ի՞նչպիսի պայմաններ է ստեղծում պետությունը, վորպեսզի բարձրացնի իր բնակչության կրթական մակարդակը՝ այդ խոսքի լիակատար իմաստով: Մենք կադրերի պատրաստման գծով դարձել ենք առաջին յերկիրը ամբողջ աշխարհում, բայց, չնայած այն խոշոր հաջողություններին, վոր մենք ունենք կուլտուրայի, գիտության,



տեխնիկայի, եկոնոմիկայի կադրեր պատրաստելու բնագավառում, մենք, այնուամենայնիվ, պետք է այստեղ դեռևս միքանի անգամ ավելի արագ թափ վերցնենք՝ առաջ շարժվելու համար: Յերկրորդ հնգամյակում մենք պետք է մեր բարձրագույն դպրոցներում սովորեցնենք մոտավորապես 2 միլիոն մարդ: Տեխնիկումներում ներկայումս սովորում են 800·000 մարդ, իսկ առաջիկա 2—3 տարիներում մենք պետք է սովորեցնենք նրանցում 3 և կես միլիոն մարդ: Մեր ֆաբգործուսային դպրոցներում սովորում են 1·200·000 մարդ, իսկ առաջիկա 2–3 տարիներում այդ թիվը միքանի անգամ աճելու յե, հասնելով 5·000·000 մարդու: Ի՞նչ պարտավորություններ են դնում մեզ վրա այդ թվանշանները: Նրանք մեզ պարտավորեցնում են այն բանին, վորպեսզի մենք, կոմյերիտմիությունը, գտնեյինք մեր տեղը կադրերի պատրաստման վիթխարի այդ աշխատանքում: Լենինյան կոմյերիտմիությունը պետք է դառնա պրոլետարական ինտելիգենցիայի դպրոցը: Առաջվա նման պայքարելով արդֆինպլանի համար, բարելավելով սոցիալիստական մրցության և հարվածայնության գործը, զբաղվելով կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացմամբ, դրա հետ մեկտեղ, առավել մեծ չափով, քան յերբևէ, պետք է շեշտը դնենք գիտության և տեխնիկայի վրա, կուլտուրայի վրա և դառնանք մեր պրոլետարական ինտելիգենցիայի իսկական դպրոցը: Ամենից առաջ մենք պետք է վերջնականապես բնաջնջենք գիտության վերաբերյալ մեր հետամնացության, անկուլտուրականության, վայրենության մնացորդները: Մեզ մոտ շատ հաճախ է ընդունված գիտության անունից ճառել, գիտությունների վրա հենվել թեթևամիտ կերպով, բայց նույնիսկ փոքր չափով ընդունված չէ խորանալ նրանց նյության

մեջ: Հաճախ է լինում, որ մենք հենց նոր միայն գտնվելով առանձին գիտական դիսցիպլինների ուսումնասիրության ճանապարհի վրա, մենք արդեն հայտարարում ենք, որ մենք նրանց կլանել ենք, յուրացրել ենք լիակատար չափով: Ահա հենց այդ մեծամտությունը, այդ գոռոզությունը, այդ անկուլտուրականությունը, որ կա լենինյան կոմյերիտմիության միջավայրում, պետք է որ հաղթահարվեն, պետք է ուժեղ հարվածների յենթարկվեն, որովհետև առանց այդ բանի, ինչպես մեզ սովորեցրել է Վլադիմիր Իլյիչ Լենինը, մենք չենք կարող տիրապետել՝ մարդկության կողմից կուտակված գիտելիքներին և փորձին, չենք կարող վերամշակել այդ գիտելիքներն ու այդ փորձը մեր ձևով, պրոլետարական ձևով:

## ՍՈՎՈՐԵԼՈՒ ԳՆԱԼ ՊՐՈԼԵՏՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄՈՏ

Հարկավոր է, ընկերներ, մեզ վրա վերցնել լրացուցիչ կերպով մի ամբողջ շարք խիստ կարևոր խնդիրներ, որը մեկ անգամից չես լուծի, գրոհով իսկույն չես վերցնի, որոշումով չես վճռի: Պահանջվում է ոչ թե ցատկումներ կատարել, այլ կամք, նստակունություն ունենալ գիտությունների նկատմամբ: Ահա թե ինչն է այժմ մեզ հարկավոր:

Սոցիալիստական շինարարության խնդիրները մեզ պարտադրում են այն բանին, որպեսզի մենք հանդիսանայինք ժամանակակից յերիտասարդ սերնդի լավագույն մասը, լինեյինք բոլշևիկներ, հեղափոխականներ, սոցիալիզմի իսկական կառուցողներ, որպեսզի մենք ձեզ հետ միասին, հանուն սոցիալիզմի, առաջիկա տարիներում մեր միջավայրից հանեյինք ոչ թե տասնյակ և հարյուր հազարավոր, այլ, բառացիորեն՝ միլիոնավոր ներկայացուցիչներ կուլտուրայի, գիտության, եկոնոմիկայի, քաղաքականության և տեխնիկայի զանազան բնագավառների համար, որպեսզի մենք առաջ



քաշեյինք հարյուրավոր և հազարավոր լավագույն հարվածայիններին տեխնիկական ղեկավար պոստերի վրա, ԲՈՒՀ-երում և ԲՏՈՒՀ-երում: Ահա մեր խնդիրը: Յեվ այդ խնդրի լուծման պրակտիկ արտահայտություններից մեկը հանդիսանում է բարձրագույն դպրոցը: Մինչև հնգամյակը մենք բարձրագույն դպրոցով համեմատաբարեն զբաղվում եյինք ավելի շատ, քան ներկայումս: Բարձրագույն դպրոցի նշանակությունն աճում է, իսկ մեր մասնակցությունը նրա աշխատանքում պակասում է: Ասել, որ այդ բանն անիրավացի յե, մեղմ կլինի: Պետք է ուղղակի ասել, որ դա սխալ դըրվածք է: Մեր բարձրագույն և միջնակարգ հատուկ դպրոցում սովորում է յերիտասարդությունը: Նա իրենից կռում է կադրեր՝ գիտության, տեխնիկայի, եկոնոմիկայի զանազան ճյուղերի համար, իսկ մենք համարյա թե հեռու յենք կանգնած դըրանից: Պետք է ներթափանցել բարձրագույն դպրոցի վերակառուցման խորության մեջ, աշխատել ձեռք բերել այնպիսի դրություն, որպեսզի մեր ԲՈՒՀ-երն ու ԲՏՈՒՀ-երն ինքնուրույն՝ հատուկ աշխատանքի ունակություններ տային, բարելավեյին գիտական աշխատանքը, ավելի մեծ չափով կապակցեյին նրան արտադրության հետ: Այդ բանը կանխորոշում է բարձրագույն դպրոցի հաջող աշխատանքի մասին յեղած հարցը:

Շատ հաճախ բրիգադային մեթոդը բարձրագույն և նույնիսկ միջնակարգ դպրոցում խեղաթյուրվում է, որի հետևանքով էլ յերբեմն յերկու հետամնաց ուսանողներ գերության մեջ են պահում յերեք կարող (դասերը հասցնող) ուսանողների, չեն թողնում նրանց հաջողությամբ առաջ քայլել. դա ևս հանդիսանում է մեր աշխատանքի բնագավառներից մեկը դպրոցում:

Խնդիրը կայանում է նրանում, որպեսզի գնալ դեպի պրոլետարական ուսանողությունը և սովորել նրա մոտ: Այդ լոզունգը ամոթաբեր չէ, այլ ճիշտ է և իրավացի լոզունգ:

Պետք է սովորել այն բանին, թե ինչպես պայքարել գի-

տելիքներ ձեռք բերելու համար, այն ճիշտ կերպով յուրացնելու համար, կուլտուրա, գիտություն ձեռք բերելու համար, իսկ մեր պրոլետարական ուսանողությունը պետք է հանդիպական պլան առաջադրի և դա լենինյան կոմյերիտմիությունից սովորելու, այսինքն սովորելու այն, թե ինչպես գործնականորեն բարձրացնել արդյունաբերությունը, զարգացնել սոցիալիստական գյուղատնտեսական արտադրությունը, կազմակերպել մասսաներին՝ մեր պլանները կատարելու համար: Հարկավոր է յերիտասարդ մասնագետներին ներգրավել մեր աշխատանքում, և օգնել նրանց իրենց աշխատանքում՝ հետագա առաջ շարժման գործում:

Մենք վիթխարի տեմպերով ենք աճում: Արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության տեսակետից մենք դարձել ենք և դառնում ենք խոշորագույն յերկիրն աշխարհում: Մասսաները մեզ մոտ քաղաքականապես աճում են: Մենք այդ բանին պետք է համընթաց դարձնենք մեր յերիտասարդության կուլտուրական աճման առավել ուժեղացրած տեմպերը: Մեր յերիտասարդության մեջ շատ ավելի մեծ հնարավորություններ կան, քան վորևէ այլ մի յերկրում: Յեվ ահա, այդ բանը հաճախ մեզ փչացնում է, սառեցնում է:

Հարկավոր է 2-րդ հնգամյակում մեր առաջ խնդիր դնել, վորպեսզի յուրաքանչյուր կոմյերիտական,—յեթե նա իրոք ուզում է լինել այդպիսին,—ունենար միջնակարգ կրթություն, ընդվորում միջնակարգ կրթություն ստանալու նույն այդ պրոցեսը խորհրդային իրականության պայմաններում պարտադիր չէ կապակցել այն բանի հետ, վորպեսզի անցնել հատուկ բարձրագույն ուսումնական հիմնարկի, բանֆակի կամ դպրոցի դասընթաց: Փորձը ցույց է տվել, վոր աշխատելով գործարաններում, փոխօգնության ճանապարհով, աշխատանքի և գործի ճիշտ կազմակերպման ճանապարհով, չկտրվելով արտադրությունից, կարելի յե և առանց դպրոցի ձեռք բերել միջնակարգ կրթություն, միայն թե լինեյին ցանկություն, կամք, կայունություն: Այդ—խոշոր քաղա-



քական կարևորություն ունեցող խնդիր է: Նա կանխորոշում է այն հարցը, թե մենք կարո՞ղ ենք արդյոք մեզնից պատրաստել մեր ինտելիգենցիայի կադրերը:

## ԽՆԱՄՔՈՎ ՅԵՎ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՊԱՏԵԼ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ

Մեզ մոտ գիտելիքներին տիրապետելու ասպարեզում հետաքրքիր պատմություն է ստացվել: Մի քանի տարի առաջ բազմաթիվ ընկերներ ձգտում էին դառնալ ուսուցիչներ, բժիշկներ և այլն, իսկ այսօր քիչ յերիտասարդներ կան, վորոնք կամենան բժիշկ դառնալ: Մենք պետք է ստեղծենք մեր պրոլետարական հումանիտար ինտելիգենցիան: Նկատի ունեցեք, վոր առանց բժշկի նույնպես չի կարելի սոցիալիզմ կառուցել: Մեզ մոտ բանվոր յերիտասարդության շրջանում հաճախ այսպես են ասում—«Յեթե յես տոկար եմ, փականագործ, մեխանիկ, տեքստիլշչիկ, այդ դեռ վոչինչ: Իսկ յեթե յես դրասենյակային ծառայող եմ, ուրեմն անպետք մարդ եմ»: Այսպիսի տրամադրությունները սխալ են: Խորհրդային Միության մեջ մենք պետք է հարգենք ամեն մի աշխատավորի, և յուրաքանչյուր աշխատանք խորհրդային իրականության պայմաններում—լինի դա խոհարարի աշխատանք, թե հրդեհաշեջի, դռնապանի, կուրյերի, հավաքարարի, փականագործի, տոկարի, դրասենյակային ծառայողի աշխատանք,—փառքի, արիության և պատվի գործ է հանդիսանում:

Ուսուցչին և բժշկին պետք է շրջապատել մեծ հարգանքով: Հաճախ սրված դասակարգային պայքարի պայմաններում այնպես է լինում, վոր դռնապանն էլ իր ավելով խոշոր նշանակություն ունի հեղափոխության համար: Իսկ բժշկականության պրոֆեսորը, վորակյալ, գրագետ, ազնիվ բժիշկը մեզ վճռական օգնություն են ցույց տալիս ներկա և ապագա մարտերում: Հարկավոր է մեր հասարակայնության վահանի վրա բարձրացնել աշխատողների մի ամբողջ աբ-

պիսի խավի: Նրանցից լավագույններին պետք է ներկայացնել բարձրագույն պարգևի՝ Լենինի շքանշանի:

Այդ նույն բանը կարելի չէ ասել նաև այն հարցի նկատմամբ, թե ինչպիսի գիտական գծով պետք է շարժվել: Բոլորը կամենում են տեխնիկ դառնալ,—լավ է: Կամենում են ինժեներ, մեխանիկ դառնալ,—ճիշտ ձգտում է: Բայց միք մոռանա, վոր հարկավոր են նաև գյուղատնտեսներ, բժիշկներ, ուսուցիչներ, մանկավարժներ, կենսաբաններ: Պետք է զբաղվել նաև այդ գործով: Խորապես սխալվում են այն ընկերները յերիտասարդ բանվորներից և բանվորուհիներից, վորոնք կարծում են, թե նրանց համար պարտավոր է տեխնիկական ուսուցման գծով առաջ շարժվել: Նրանցից շատերի համար, յեթե ուշադիր մոտեցում ունենան իրենք իրենց հանդեպ, շատ ավելի ձեռնտու յե դառնալ կենսաբան, բնագետ, մանկավարժ, ուսուցիչ: Կադրերի այս բոլոր ճյուղերը մեզ շատ են հարկավոր, և մենք պետք է ստեղծենք այդպիսիք:

## ՉՏԱՐՎԵԼ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԿՈՒԼՏՈՒՐԱՅՈՎ

Ցես կուզեյի ձեր ուշադրությունը հրավիրել ևս մի պայմանի վրա, վորը կապահովեր հարցի լուծումն այն բանի օգտին, վորպեսզի մենք լինեյինք այնպիսի դպրոցում, վորն ստեղծեր մեր պրոլետարական ինտելիգենցիայի կադրեր, կարողանար մտավոր և ֆիզիկական աշխատանքը միավորել: Այդ պայմանը—այն պարտադիր պայքարն է, վոր մենք պետք է տանենք մեր միջավայրում յեղած անկուլտուրականության, վայրենության և գոռոզության արտահայտությունների դեմ:

Ով վոր ասում է, վոր նա հանդիսանում է լավագույն պրոլետար, վորովհետև նա անգրագետ է, նրան պետք է դատել մեր ընկերական հասարակական դատարանով, ապացուցել նրան, համոզել նրան, վոր դա պրոլետարիատի հատկանիշը չէ, այլ դժբախտություն է: Մեր պրոլետարը հաջողությամբ կառուցում է սոցիալիզմը, ընդվորում նա կառուցում է գիտական մարքս-լենինյան տեսության հիման վրա:



Իսկ յեթե այդ պրոլետարը անգրագետ լինի, ապա ինչպե՞ս նա պետք է կառուցի սոցիալիզմը: Մենք պետք է փափկորեն, ուշադիր, զգոն կերպով և ընկերականորեն ապացուցենք նրան, համոզենք նրան սովորելու անհրաժեշտության և գիտելիքներին տիրապետելու անհրաժեշտության մեջ: Դրա համար, ընկեր պատգամավորներ, դուք պետք է ձեր ձեռքը վերցնեք նախաձեռնությունը ամենից առաջ հենց ձեր վերաբերյալ:

Մեզ մոտ հաճախ իրենց անկուլտուրականությունը քողարկում են կուլտուրական արտաքինի տակ: Իհարկե, ապրել մեր խորհրդային յերկրում, չնայած մեր բոլոր դժվարություններին, անհամեմատ ավելի լավ է և հեշտ, քան վորևե կապիտալիստական յերկրում. թե ինչ կպատահի վաղն ինձ հետ,—այդ հարցը վոչ վոքի չի հուզում: Ամեն մեկն ունի իր աշխատանքը, ամեն մեկն ապահովված է այդ աշխատանքով՝ նաև վաղվա օրվա համար, հակառակ կապիտալիստական յերկրների: Շատ հաճախ մեր տղաներն սկսում են, յեթե կարելի յե այդպես արտահայտվել,—կուլտուրականորեն հագնվել, ուզում են ունենալ մոդայի կոստյում, փառահեղ կոշիկներ, գեղեցիկ կարված շորեր: Դա վնասակար չէ: Վոչ վոք վոչ վոքի չի արգելում այդ բանին ձգտելու, ընդհակառակն, այդպիսի բան հանձնարարելի յե: Մենք—սոցիալիզմի կառուցողներ ենք, և մեզ համար պարտադիր չէ ման գալ վատ շալվարներով, ստանդարտ չափի հագուստներով.— ընդհակառակը, մեզնից յուրաքանչյուրը կարող է հագնվել այնպես, ինչպես իրեն է դուր գալիս, միայն թե այդ բանը չխանգարեր նրա կոմունիստական աշխատանքին, նրա մասնակցությանը՝ սոցիալիստական շինարարության մեջ: Բայց չէ՞ վոր լինում է և այնպես, վոր արտաքին տեսքով յերիտասարդը կարծես թե վոչինչ, վատ չէ, ունի նույնիսկ մի քանի շալվարներ, իսկ ինքը տխմարի մեկն է:

Աղջկա կամ տղայի մոտ շատ հաճախ դրսի հագուստը փայլում է մաքրությամբ, իսկ նրա տակին ամեն ինչ կեղտոտ է (ծիծաղ)։ Չպետք է տարվել կուլտուրայի արտաքին, ցուցադրական ձևերով, այլ պետք է ներթափանցել գործի էության մեջ։ Կուլտուրական մարդը պետք է տիրանա գիտելիքներին, կարողանա աշխատել գրքի հետ, կարողանա գնահատել միտքը, ընկնել այդ մտքի հետևից, այլ վոչ թե նրա կողքով անցնել, նա պետք է կարողանա կենտրոնանալ նրա վրա, ուսումնասիրել այն։ Կուլտուրական մարդը պետք է կարողանա կազմակերպել իրեն՝ գիտելիքների համար տարվող պայքարում։ Իսկ դա նշանակում է, վոր նա պետք է իր անձնական կյանքը շրջապատի հարմարություններով, դա նշանակում է, վոր նա չպետք է այնպիսի խրտնեցնող մարդ լինի, վորից բոլորն էլ մի կողմ քաշվեն, այլ լինի կուլտուրական մարդ՝ իր տեսքով, իր վարմունքով։ Ահա թե ինչ է մեզանից պահանջվում։

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՖՈՐՄԱԼԻԶՄԸ ԳԼԽԱՎՈՐ ՉԱՐԻՔՆ ԵՆ

Սոցիալիստական շինարարության ցույց տվելիք մեր մասնակցության հետագա բարձրացման կարևորագույն պայմաններից մեկը հանդիսանում է լենինյան կոմյերիտմիության աշխատանքի ամբողջ պրակտիկայի հանդեպ յեղած ղեկավարության բարելավման հարցը։ Պետք է նախորոք ասել, վոր մեզ մոտ շատ–շատ են զբաղվում վերակառուցմամբ, հաճախ նույնիսկ պահանջվածից ավելի, բայց նրան մոտենում են մակերեսային կերպով, իրենք էլ չիմանալով, թե ինչ են ուզում վերակառուցումից, իրենք էլ չիմանալով, թե ինչը պետք է վերակառուցել, ինչու համար վերակառուցել և ինչպես վերակառուցել։ Իսկ միության առանձին ողակներում վերակառուցումը վերածվել է միութենական աշխատանքի «ինքնուրույն ճյուղի»։



Մեզ մոտ արդեն հայտնվել են ակտիվ աշխատողներ, վորոնց հիմնական մասնագիտությունը կայանում է նրանում, վորպեսզի վերակառուցվեն (ծիծաղ)։ Հանդես են յեկել մասնագետներ՝ վերակառուցման գծով։ Այդպիսի հերոսներ գտնել ձեզնից յուրաքանչյուրը կարող է իր կազմակերպության մեջ, ի թիվս վորի նաև մարզային ու յերկրային ղեկավարության մեջ։

Վո՞րն է միութենական ղեկավարության գլխավոր բացը՝

Ցեթե կարելի յե այսպես արտահայտվել, գլխավոր չարիքը,—դա ընդհանրությունն է, թափթփվածությունը, չիմացումն այն բանի, թե ինչն է ինչի համար հարկավոր, ակտիվի անբավարար կուլտուրական վորակավորումը և, վորպես կանոն, այն խոշոր ֆորմալիզմը, վորը նկատվում է մեր ընթացիկ աշխատանքում։ Այդ բանի շնորհիվ է, վոր մեր յերիտասարդական ստեղծագործական դաստիարակչական կազմակերպության մեջ գոյություն ունի բյուրոկրատիզմ, նկատվում է այնպիսի դրություն, յերբ չեն կարողանում հարկադրման մեթոդը միավորել համոզման մեթոդի հետ։ Հաճախ մեր առանձին կոմիտեները պարզապես վարչարարում են։ Կենտրոնական հարցը ղեկավարության մեջ պետք է դառնա՝ առանց ընդհատումների, առանց շտուրմային մեթոդների աշխատել կարողանալը։ Անհրաժեշտ է սիստեմատիկ հետևողականություն աշխատանքում։ Անհրաժեշտ է կարողություն՝ գործը մինչև վերջ հասցնելու համար։ Ընդհանրության գերին ենք մենք բոլորս, սկսած Միության Կենտկոմից և վերջացրած մեր ստորին բջիջով։ Ամենից վատն այն է, վոր մենք չենք ուզում իրերը կոչել իրենց անուններով։ Ահա, մենք վորոշում ենք հանել տոմսերի փոխանակման մասին, վորը խփում է այդ ընդհանրությանը։ Իսկ յեթե այստեղ ուղղակի ասենք, ընկերներից միքանիսն այդ վորոշման հետ համաձայն են միայն այն պատճառով, վոր նա գալիս է Կենտկոմից, իսկ ըստ էության՝ այդ վորոշման հետ վոմանք համաձայն չեն, թեպետ և նրանք ուղղակի հանդես չեն գալիս։ Ուկրայնային մենք այդ վորոշման մեջ

առանձնապես հուշ տվինք, Ուրալին, Մոսկվային և Լենինգրադին նույնպես հուշ տվինք։ Հասկացեք, վոր դրությունը լավ լինելու դեպքում մենք այդ քայլը չեյինք անի։ Կկ–ն իր մեջ կամք և համարձակություն գտավ իրերը կոչել իրենց անուններով։

Մեզ մոտ կենտկոմում յերբեմն լինում է այսպես. մարդ և՛ ուզում է, և՛ քաշվում է։ Հարկավոր է իրերը կոչել իրենց անուններով, բայց գիտե՞ք արդյոք դուք պայմանները, դրությունը, բացի այդ, մենք բարձր քաղաքական հիմնարկ ենք, պետք է հանդես բերենք, այսպես ասած, տակտ։ Իսկ արդյունքը լինում է այն, վոր հարցը սվաղվում է։ Բայց, չնայած այդպիսի դեպքերին, այնուհանդերձ իմանում ենք, թե ինչով ենք մենք յերբեմն հիվանդ, իմանում ենք մեր հիվանդությունը, պայքարում ենք նրա դեմ։ Իսկ ահա, մեր տեղական կազմակերպություններն այնպես են ցույց տալիս, վոր նրանց մոտ այդ բանը չկա, չեն ուզում իմանալ այդ հիվանդությունները, գտնվում են ընդհանուր մոմենտների, ընդհանրության, ֆորմալիզմի ճանկերում գերության մեջ։ Ավելի հեշտ բան չկա մեր միջավայրում, քան վորոշում հանելը։ Վատն է նա, թե լավը—այդ ուրիշ կարգի գործ է, բայց մարդիկ շատ պատասխանատու վորոշմանը մոտենում են չտեսնված թեթևությամբ։ Ինչո՞ւ։ Նրա համար, վոր նրանք այդ բանին ձևական կերպով են մոտենում։ Նրանք գիտեն, վոր այդ վորոշումներն իրենց վոչ մի բանի չեն պարտադրում։ Նույնիսկ շատ–շատերի գլուխներում հետևյալ միտքն է պտտվում.— Ինչո՞ւ համար յես պետք է դեմ քվեարկեմ։ Միևնույն է, նա կյանքում չի կիրառվելու, կխափանվի։ Փաստ է, վոր այդպես շատերն են մտածում։ Վերցրեք մետալուրգիայի բնագավառի մի բջիջ։ Նա շատ մեծ հաճույքով և թեթևությամբ վորոշում է հանում սոցիալիստական շինարարության, սոցմրցմանը, կոնտրոլ թվերի մշակմանը մասնակցելու մասին։ Իսկ թե ինչպես ավելացնել ձուլվածքը, ինչպես կարգավորել դոմնայի աշխատանքը, ինչպես ապահովել շիխտան ճիշտ տալու գործը, նրա մշտա-



կան բաղադրությունը,—այդ մասին մոռանում են, դրանով անբավարար չափով են զբաղվում, իսկ մետալուրգիական գործարանի կոմյերիտական բջիջի քարտուղարը, թվում է, պետք է հասկացողություն ունենա թուջի, մետաղի, դոմնայի, մարտենի, գլանիչ դազգյահի, շիխտայի մասին, կարողանա գլուխ հանել շիխտա կազմելու աշխատանքից։ Ասես թե այդպես պետք է լինի։ Բայց հենց այդ էլ նրա թույլ կողմն է։ Նրա ուժեղ կողմերն են՝ կարողանալ հանդես գալ ընդհանուր քաղաքական ճառով, ընդհանուր քաղաքական զեկուցումով։

Պետք է ուղղակի ասել—մենք դեռ չենք լուծել այն, ինչ ասված է 9–րդ համագումարում, թե այժմ քարտուղարը վոչ միայն քարտուղար է, այլ նա պետք է զինված լինի թուջով, պողպատով, ելեկտրականությամբ, քիմիայով։ Թույլ ենք զինվում, ընկերներ։

Գյուղում ընդհանուր վորոշումներ են հանում կոլտնտեսությունների կազմակերպչական–տնտեսական ամրացման, կուսակցության գծի պաշտպանության և կիրառման, կուլակության՝ վորպես դասակարգի՝ վերացման մասին։ Իսկ թե ինչպես կոլտնտեսությունում բարձրացնել բերքատվությունը, դրա համար կոնկրետ իրականության մեջ ի՞նչ պետք է անել, վո՞րտեղից պարարտանյութ ձեռք բերել, վո՞ր դաշտերին տալ այդ պարարտանյութը, ի՞նչպես ապահովել գյուղատնտեսական մեքենան փչացումից, պարզել, թե ով է փչացնում, ինչո՞ւ յե փչացնում, ի՞նչ միջոցներ են ձեռք առնված այդ թույլ չտալու համար, ի՞նչպես է աշխատում տրակտորիստը, ի՞նչպես է խնամում տրակտորը, ի՞նչ կարգով է պահում և ի՞նչպես կազմակերպել տրակտորի ճիշտ խնամքը,—ահա այս հարցերով անբավարար են զբաղվում։ Յեվ ահա ձին լղարում է։ Այդ վերացնելու համար հարկավոր է կազմակերպել ճիշտ սնունդ, ճիշտ հսկողություն, հարկավոր է, վոր ախոռապանը ձիուն այնպես վերաբերվի, ինչպես իր սեփականության, վոր նա պատասխանատվության կանչի ամեն մեկին, ով ձիուն անկարգ է պահում, ով չգիտե,

թե ինչ է կատարվում իր ձիու հետ, չգիտե՝ առո՞ղջ է նա, թե հիվանդ, ինչո՞ւ յե հիվանդացել, ինչո՞վ է հիվանդ, հարկավո՞ր է արդյոք անասնաբույժ կանչել, ինչո՞վ բուժել ձիուն, ինչպես բուժել և այլն: Այս բոլորն անշուշտ մանրուքներ են, բայց ահա այդ իսկ մանրուքներով պետք է զբաղվել, բայց քիչ են զբաղվում: Դրա փոխարեն այսպիսի վորոշում են հանում—«Ձի բուծել Կարմիր բանակի համար, պայքարել անասունների կաթնատվության համար և այլն»: Այդ ամենազուտ ֆորմալիզմ է: Պետք է գիտենալ՝ ինչո՞ւ անպայման տվյալ բնագավառը պետք է ուղարկել Պետրովի բրիգադին, ինչո՞ւ բրիգադն այս կերպ պետք է ընտրել և վոչ թե այլ կերպ, ինչո՞ւ բրիգադիր պետք է նշանակել Պետրովին և վոչ թե Ստեպանովին: Դրա համար վորևէ բանով պետք է ղեկավարվել. չէ՞ վոր չի կարելի ինքնահոսի թողնել: Ահա գործի մեջ թափանցելու, գործի տեխնիկան հասկանալու այդ սովորությունն է, վոր պակասում է մեզ:

## ԱՎԵԼԻ ՄԵԾ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻՆ

Ելի մի որինակ.— Մեր կազմակերպությունները հաճախ իրենց վորոշումների մեջ նշում են, վոր անգրագետ լինելը կուսակցականին վայել չէ: Իսկ նրա համար, վորպեսզի վերացնել անգրագիտությունը, պետք է իմանալ, թե ինչքան անգրագետներ կան, ով է անգրագետ: Նորից ձեր ուշադրությունը հրավիրում եմ այն բանի վրա, վորի մասին ասաց Լազար Մոիսեյեվիչ Կագանովիչը,—նրա համար, վորպեսզի իմանալ այդ բոլորը, հարկավոր է սողոսկել հոգու մեջ, իմանալ, թե ով ինչ է իրենից ներկայացնում, ահա հենց այդ բանն է, վոր մեզ մոտ պակասում է:

Մեզ մոտ գրական դիսկուսիա յեղավ.—խոսում եյինք մենք գրականության մասին, սարքում եյինք գրական վեճեր: Իսկ ահա, թե ինչ գիրք է կարդում յերիտասարդությունը և ինչ պետք է կարդա, մեզ մոտ այդ բանը չեն իմանում: Իսկ նրա համար, վորպեսզի այդ բանից դուրս հանել, պետք է



ծանոթանալ գրադարանի հետ, գրադարանապետների հետ, գրքային շուկաների հետ, գործարանային և կոլտնտեսական ակումբների և վերջիվերջո, հենց իրեն, յերիտասարդության հետ, և հետո արդեն վճռել վոչ թե ընդհանրապես, այլ կոնկրետ կերպով, թե ինչ և ինչպես պետք է անել:

Ընկ. Կիչը,—մեր կոմյերիտական ժուռնալիստներից է,—ուղևորվեց Ստալինգրադի տրակտորի գործարանը, և ահա այնտեղի բջիջներից մեկը բջիջի ընդհանուր ժողովի մեջ քըննության է դրել 3 կոմյերիտականների վիճակը և քննության առել, թե ինչպես են նրանք ապրում: Ընկերը հաստատում է, վոր յերբեք չի յեղել այնպիսի հետաքրքիր, ակտիվ ժողով, ինչպես այդ ժողովը, վորովհետև նրանք չեյին խոսում ընդհանրապես, այլ կոնկրետ կերպով, թե ինչպես է ապրում Պետրովը, թե ինչու այդ Պետրովը կոշիկներով է քնում իր մահճակալի վրա, ինչու այդ Պետրովը ման է գալիս քրքըրված շորերով, իսկ արկղում ընկած է իր նոր կոստյումը: Պարզվեց, վոր տղան գյուղից է,—ասում է իր մասին, վոր իրեն քիչ գիտեն, վոր նա ընկերներ չունի, ամեն մեկն իրենով է զբաղված, իսկ ինքն էլ, դե, իրեն համար, վոր կոստյումը նա այստեղ կմաշի, իսկ իրեն գյուղում գիտեն, գյուղում նա ուզում է յերևալ լավ կոստյումով: Շատ հատու յե ասված:

Լավ գործ է կատարել այդ բջիջը, նա յուրաքանչյուրին տեղից շարժեց, թե ինչպես պետք է ապրել: Չէ՞ վոր յես կոմյերիտական եմ, յես պետք է այլ կերպ ապրեմ, վոչ այնպես, ինչպես ամեն մեկը: Այդ փաստ է: Այ, ավելի՛ շատ այսպիսի փորձեր, և վոչ միայն փորձեր, այլև այդպիսի աշխատանքի սիստեմ: Ահա այդ կարող կլինենք կոչել ամեն մեկին ճանաչելու, հոգու մեջ թափանցելու կարողություն: Վորոշում են հանում ակտիվի մասին, վերակառուցման մասին, իսկ ինչո՞ւ համար են Իվան Պետրովիչ Սիդորովին առաջ քաշել վորպես կազմակերպության քարտուղար, այլ վոչ Կուզմինին, ինչո՞վ է Սիդորովը Կուզմինից տարբերվում, ինչո՞ւ նա կարող է լինել քարտուղար, իսկ յերկրորդը՝ վոչ:

Ասում են Կուզմինն այնքան էլ հարմար չէ: Դու ապացուցիր, թե ինչպիսի հատկություններ պետք է ունենա քարտուղարը, վորպեսզի բոլորն համոզվեյին այն բանում, վոր պետք է ընտրել Միրոնովին, այլ վոչ Կուզմինին: Ահա այդպիսի մոտեցում մեզ մոտ շատ հաճախ չի կիրառվում: Ինչո՞ւ պետք է շրջկոմի մեջ ընտրել բջիջի քարտուղարին, այլ վոչ բյուրոյի անդամին: Չե՞ վոր դրանք զուտ ձևական դատողություններ են:

Անհրաժեշտ է աշխատել մարդկանց հետ յերկար և լուրջ կերպով,—իսկ մեզ մոտ այդ չեն անում: Ընտրում են քարտուղար և չեն ոգնում, այլ առաջ են քաշում և դրանով իսկ մարդուն փչացնում: Նա 6 ամիս յեղավ քարտուղար, մինչ այդ ղեկավար աշխատանքի վոչ մի փորձ չուներ, բայց նա արդեն կարծում է, վոր իրեն համար ամեն ինչ հնարավոր է—յես տաղանդավոր եմ, յես ընդունակ մարդ եմ:

Այստեղից են, ընկերներ, ծնվում մեծամիտները, այստեղից է ծնվում մեծամտությունը, ծնվում «առաջնորդները», այստեղից է ծնվում անպատասխանատվությունը, այստեղից—մասսաներից կտրվածությունը, այստեղից է վերջիվերջո, ծնվում այն, ինչ մոսկովցիներին հատկապես ծանոթ է և վորի մասին ընկ. Կագանովիչն ասաց կուս. խորհրդակցության ժամանակ.—դա հանդիստ աշխատանքն է, եներգիայի, կյանքի, վառվելու բացակայությունն է: Յերիտասարդ. ատրճանավորը քայլում է բոլոր գրահներով պատված—ճանապարհ տվեք նրան: Իսկ չե՞ր կարելի այդ յերիտասարդի հետ խոսել և ելի' խոսել: Չէ՞ լավ, հո'սպ տվեք, ընկերներ: (Ծիծաղ): Ուրիշ ի՞նչպես:

Այստեղից միանգամայն իրավացի յե ընկ. Կագանովիչի նկատածն այն մասին, վոր դուք շատ հանգիստ եք աշխատում, վոչ յերիտասարդության նման: Միտքն ընդհանուր առմամբ հետևյալն է, վոր նույնիսկ պետական մարդիկ, վորոնք պատասխան են տալիս պետության համար,—ավելի յեռանդուն են, աշխույժ են աշխատում, քան առանձին կոմյերիտական աշխատողները: Ֆորմալիզմից է գալիս այդ հիվանդությունը: «Իմ ի՞նչ գործն է: Իմ գործն է միայն վորոշում ընդունել, վերաբերմունք արտահայտել ամեն մի ասպարեզ յեկած հարցի վերաբերյալ, իսկ ինչ վերաբերում է նրան, թե ինչպես պետք է այդ վորոշումը կատարվի,—այդ իմ գործը չի: Դա ինչ-վոր իր տեղերն ունի—բջիջներում: Իսկ յես մաքուր եմ, յես վերաբերմունք արտահայտեցի հարցի առթիվ: Յեթե Կենտկոմից գան ստուգման յենթարկելու,— խնդրեմ, նայեցեք, ահա մեր վորոշումը: (Ծիծաղ): Յեթե մարզային կենտրոնից գալիս են հսկելու,—խնդրեմ.—ահա մեր վորոշումը»: (Ծիծաղ): Դա իսկական յերիտասարդ չինովնիկի վարմունք է: Դա յերիտասարդ, սկսնակ բյուրոկրատ է: Ահա հենց այդ բաների դեմ է, վոր պետք է պայքարել:

## ՉՄՏՆԵԼ ՎԵՐԱՑԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ, ԱՅԼ ՀԻՄՆՎԵԼ ՇԱՐԺՄԱՆ ՓՈՐՁԻ ՎՐԱ

Տոմսերի փոխանակման փորձը համառորեն մեր առաջ խնդիր է դնում պայքարելու բյուրոկրատիզմի դեմ, ընդհանրության դեմ, ֆորմալիզմի դեմ: Յեկել ենք բոլորս Կենտկոմ, հավաքվել ենք, մեզ թեյ են տալիս, ցեկխատական դիրքավորում՝ թե մենք բոլորս հավասար մարդիկ ենք, ղեկավարներ ենք: Հավաքվել ենք և պրուցում, թե մեզ մոտ այս բանն է, այն բանն է, 5-րդ, 10-րդ բանն է: Յեվ ահա հարց ենք տալիս—քանի՞ մարդ է քեզ մոտ մաղվել, ո՞վ է մաղվել, ո՞ւր, յե՞րբ, ի՞նչ պատճառներով, քանի՞սն են իրենց կամքով դուրս յեկել, քանի՞ խորթ տարր է վտարված, քանի՞ «մեռած հոգիներ» կան, քանի՞սն են գրել, ո՞ւմ, ո՞ւր, յե՞րբ: Յեվ լսում ես—«չգիտեմ, չգիտեմ, չգիտեմ»: Այ ձեզ գնահատական: Մեզ նույնպես: Բայց մենք իրավունք ունեինք հուսալու, վոր դուք կգաք Կենտկոմ և այդ հարցերը կլնեք ներքևից: Բայց հակառակը յեղավ, մենք ստիպված յեղանք հարցերը դնել վերևից: Իսկ դա ամենավատն է: Դուրս է գալիս, վոր ներմիութենական կյանքի պրակտիկան

ԿԿ-ն ավելի լավ գիտե, քան տեղական ղեկավարությունը: Ինչո՞ւ այդպես պատահեց: Գործի տեխնիկայի մեջ չեն մտել: Այ, ասում եյին—կոփել միության շարքերը, բարձրացնել քաղաքական ակտիվությունը, ուժեղացնել պայքարը կուսակցության գլխավոր գծի համար: Բայց թե ուր, յերբ և ով պետք է փոխանակի կոմյերիտական տոմսը, այդ վորոշելու կարողություն չունեցան շատերը: Քեզ մոտ 10 օրվա ընթացքում քանի՞ կոմյերիտական է տոմսերը փոխել, քանի՞սն են կամավորապես հրաժարվել, ինչքան խուլթ տալեր են հայտնաբերված: Այ, այդ է, վոր չգիտեն:

Անշուշտ, չի կարելի վուլգար մոտեցում ունենալ ղեկավարության ընդհանրության: Մենք քաղաքական կազմակերպություն ենք, և ընդհանրությունը մեզ հատուկ է: Նա մասամբ անհրաժեշտ է: Բայց պետք է իմանալ համեմատականությունը: Այ, ընդհանուրից գնում են դեպի մասնակին. իսկ մասնակիից դեպի ընդհանուրը՝ ավելի սակավ: Դրա շնորհիվ ղեկավարության պրակտիկայում դրվում են այնպիսի հարցեր, վորոնք բղխում են վոչ թե կենդանի գործի փորձից, այլ չմտածված, կաբինետային ճանապարհով առաջադրված, կտրված յեզրակացություններից, այնինչ յուրաքանչյուր յերևույթ պետք է դիտել այն կապակցությամբ, վոր ունի նա իր նախորդ իրադարձությունների հետ, կարողանալ դիտել, թե ինչպես նա առաջացավ, ինչպես զարգացավ, ինչպիսի փոփոխություններ կրեց իր զարգացման ընթացքում, իր ճանապարհին, ինչ է դարձել նա ներկայումս: Ահա այդ կերպ պետք է մոտենալ հարցին, իսկ այդ քիչ կա մեզ մոտ:

Չպետք է մտնել վերացական բնագավառները, այլ հիմնվել շարժման գոյություն ունեցող փորձի վրա, վորովհետև միմիայն մասսաների կողմից ստուգված փորձն է, վոր զուգորդվելով հեղափոխական թեորիայի հետ, պատվանդան է հանդիսանում մեր հետագա իդեական աճման համար: Թեորիան առանց պրակտիկայի վոչինչ է, իրական չէ: Պրակտի-



կան առանց թեորիայի—այդ նշանակում է քայլել կուրորեն, չգիտենալով, թե ինչն ինչի համար է:

## ԿԱՐՈՂԱՆԱԼ ԳՏՆԵԼ ԳԼԽԱՎՈՐԸ ՅԵՎ ՆՐԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ի՞նչ է պետք ճիշտ աշխատանքի համար, ընկերներ: Հարցը լուրջ է: Յես ինձ խնդիր չեմ դնում մանրամասնորեն այդ բոլորը պարզաբանելու: Բայց յես հանձնարարում եմ յուրաքանչյուրին կարդալու ընկ. Ստալինի «Լենինիզմի հարցերը» գիրքը և հատկապես «Ստրատեգիա և տակտիկա» գլուխը: Այնտեղ դուք կգտնեք պատասխանը.—«Աշխատանքի կազմակերպման մեջ գլխավորը կայանում է նրանում, վորպեսզի մեր առջև կանգնած խնդիրների ընդհանուր գումարից առանձնացնենք հատկապես հերթականը, գլխավորը, կենտրոնականը, վորի լուծումը կապահովի մնացած բոլոր խնդիրների հաջող կատարումը»: Ահա ինչ է պետք աշխատանքի ճիշտ կազմակերպման համար—կարողանալ առանձնացնել գլխավոր, վճռական, կենտրոնական օղակը, կառչել նրանից, վորովհետև այդ գլխավորի լուծումն իր հետևից կձգի ամբողջ շղթան:

Այսպիսով ուրեմն, մեր խնդիրներին չի կարելի մոտենալ հավասարեցման սկզբունքով, ասել, թե «բոլոր խնդիրներն էլ հավասար են»: Դա անմտություն է: Պետք է հրաժարվել խնդիրների մոտեցմանն այդ հավասարեցման սկզբունքից: Յուրաքանչյուր պայմանում, յուրաքանչյուր խնդրի վորոշման ժամանակ—գոյություն ունի գլխավոր, կենտրոնական օղակ, վորից պետք է կառչել: Պետք է կարողանալ գտնել այդ գլխավորն ու վճռականը և ամբողջ մնացածը յենթարկել այդ գլխավորին: Չհավասարեցնել բոլոր խնդիրները, դիմացուրկ մոտեցում չունենալ նրանց, այլ կարողանալ առանձնացնել կենտրոնական օղակը:

Յերբ այդ գլխավոր օղակը չի առանձնացվում, ապա և՝ աշխատանքը գնում է ընդհատումներով, յելևէջով, մի գոր-

ծից մյուսին են վազում, ամեն ինչ գնում է ինքնահոսով: Այդ վատ է:

Հաճախ եք դուք պատահում բջիջի, վորը ժամանակավոր բանվորի նման մի խնդրից մյուսն է ընկնում, ընկնում է ամեն ինչի հետևից, թողնում է ամեն ինչից և վերջիվերջո մնում է իր տեղում կանգնած: Բայց գլխավորը չի կարող միշտ լինել ինչ-վոր կայուն, հարատև, չի կարող միշտ լինել ինչ-վոր միատեսակ խնդիր: Ամենևին վոչ: Այլազան հանգամանքներում և դրություններում գլխավորն էլ է տարբեր լինում: Նրան պետք է փնտրել, յելնելով խորհտնտեսության, կոլտնտեսության, գործարանի, շրջանի, մարզի, յերկրամասի դրությունից: Գլխավորի վորոնումը չպետք է պատահական, մեխանիկական բնույթ կրի:

## ՀԱՆՈՒՆ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԳՆՈՒԹՅԱՆ ՑԵՎ. ՍԿԶԲՈՒՆՔԱՅՆՈՒԹՅԱՆ

Գիծը պետք է լինի սկզբունքային.—այդ բոլորին հայտնի յե: Բայց այդ սկզբունքայնությունը պետք է կիրառվի ինչ-վոր կոնկրետ բանի վրա: Գիծը պետք է պատասխանի տվյալ տեղի, ժամանակի, ետապի պայմաններին, պետք է մեզ թույլ տա՝ ճշտորեն վորոշել, թե ինչ է արվում և ինչի համար: Միայն այդ դեպքում մենք կիմանանք, թե ինչպես պետք է աշխատել, իսկ մեզ մոտ այդպես չի լինում: Նիժնի-Նովգորոդի ավտոգործարանը վատ է աշխատում: Տեղական բոլշևիկներն ուզում են, վորպեսզի այդ բանը հարթ կերպով առաջ գնա, բայց գործարանի դրությունն էլի վատ է: Ասում են, վոր գլխավոր պատճառը նրանումն է, վոր վատ են տիրապետել տեխնիկային: Այդ դեպքում հարց է առաջանում.—յեթե դա գլխավոր պատճառն է, նա հանդիսանում է կազմակերպության աշխատանքի գծի հիմնական սկզբունքը: Թույլ տվեք ապա ձեզ հարցնել, թե ինչո՞ւ գիծն աշխատանքի մեջ ճիշտ են գտնում, իսկ տեխնիկային, ահա, նրանք չեն տիրապետում: Այդպիսի ֆոկուսներ մեզ մոտ շատ են լինում:



Կոլտնտեսության կոմյերիտբջիջի աշխատանքին հավանություն են տալիս, գիծը գտնում են ճիշտ, իսկ կազմակերպչական-տնտեսական տեսակետից կոլտնտեսությունը չի ամրացված, քայքայվում է: Ինչպես հասկանալ այս չիլափլավը, հակասությունների այս շփոթը: Չե՞ վոր գիծը չի կարող լինել ինչ-վոր անմարմին բան, նա պետք է ունենա իր ինչ-վոր ֆիզիկական արտահայտությունը. Նրա հետևում վորևէ բան պետք է գոյություն ունենա: Նիժնի-Նովգորոդի ավտոգործարանում՝ տեխնիկան, նրան ուսումնասիրելը, նրան տիրապետելը, իսկ կոլտնտեսությունում՝ ուժերի դասավորումը, դժվարությունների հաշվառումը, վերաբերմունքն ինվենտարի հանդեպ, բրիգադիրի ընտրությունը, պայքարը դիմազրկության դեմ, պայքարը մանր-բուրժուական հավասարար հարաբերությունների դեմ յեկամուտների բաշխման գործում: Ահա՛ գծի ֆիզիկական արտահայտությունը: Մեզ մոտ գիծը ճիշտ են գտնում, իսկ հսկայական թերացումներ ունեն: Փաստ է: Ահա հենց այդ էլ յերկու փոխադարձաբար իրար վանող դրույթներն ի մի միացնելու փորձ է հանդիսանում: Սկզբունքային և ճիշտ գիծը յերբեմն փոխարինվում է անսկզբունքային չիլափլավով: Գիծը գտնում են ճիշտ, իսկ աշխատանքը ճիշտ չէ: Փոխանակ մեկ ամբողջական սկզբունքային գծի, ստացվում է վինիգրետ, յերբ «մեկ կողմից՝ չի կարելի չխոստովանել, մյուս կողմից՝ չի կարելի չդիտակցել»: Ստացվում է անսկզբունքայնություն, դեզորիենտացիա, մեկից մյուսին վազելու պրակտիկա, յերերում, տատանում, մոլորվածություն, խուճապ, և հաճախ այս բոլորը միասին վերցված քողարկվում է ահեղ, փքուն, անպտուղ «ձախ» ֆրազներով: Այս հարցի վրա մեծ ուշադրություն պետք է դարձնել: Սա կարևոր հարց է, վորը մի ամբողջ շարք պրոբլեմներ է դնում մեր նոր ձևի աշխատանքում: Ահա այս պայմաններում, ինչքան էլ խոսելու լինեն ինքնաքննադատության մասին, թվում է, թե նա կա, բայց իրականության մեջ քիչ է: Վերցնենք, օրինակի համար Մոսկվան: Մոսկվացիներն ինքնաքննադատության կարգով

ասում են՝ պետք է խոստովանվենք, վոր տապալվեց միութենական որը։ Նրանք ասում են՝ սա խայտառակություն է, սա բանի պետք չէ, սրա համար պետք է պատասխանատվության կանչել, պետք է մարդկանց հանել, պատժել, մասսաների դատարանի առաջ կանգնեցնել։ Ընդհանուր առմամբ այս ինքնաքննադատությունը ասես թե ամենաիդեալականն է. և՛ հոնքերն են կիտում, և՛ ահեղ ու աղմուկ խոսքեր են ասում, բայց եյականը դարձյալ չկա։ Ասացեք, ո՞վ վիժեցրեց միութենական որը, ի՞նչ պատճառներով այդպես չեղավ։ Պարզաբանեցեք։

Մենք չենք ամաչում վորոշում հանել և այն հրապարակել համոզվածությամբ, բոլշևիկյան ամուր վճռով։ Հիմարի մեկը կասի.—«Ահա, նրանց մոտ ամեն ինչ, թե՛ Մոսկվայում, թե՛ Լենինգրադում, թե՛ Ուկրայնայում—վատ է»։ Իսկ մենք այդ բանին սառնասրտորեն պատասխանում ենք.—«Մենք—յերիտասարդական, դաստիարակչական կազմակերպություն ենք։ Կարող է պատահել, այսոր մեզ մոտ վատ է, բայց մենք հավատացած ենք, վոր վաղը լավ կլինի»։

Ուստի և համարձակորեն քննադատեցե՛ք, համարձակորեն հանդես յեկեք։ Մեզ մոտ բավականին կամք, տղամարդություն, ընդունակություններ ու ստեղծագործություն կա, վորպեսզի հաղթահարենք վատը և վորպեսզի վաղը լավ լինի։

Յես կուզեյի բերել դարձյալ մի բնորոշ որինակ Հյուսիսային յերկրային կոմիտեյի պրակտիկայից։ — Կոմյերիտմիության կենտրոնական Կոմիտեյի հրահանգիչ ընկ. Ցեյտլինը Զաւսինսկի շրջանի քարտուղարից, ավելի ճիշտ՝ նախկին քարտուղարից ստացել է հետևյալ բովանդակության մի նամակ.—

«... Ելի ուզում եմ հաղորդել բավականին զբաղեցնող մի դեպք։ Շրջկոնֆերանսում վոգևորությամբ և միաձայն կերպով յես ընտրվեցի շրջկոմի քարտուղար (մինչ ինձ ընտրելը հանել եյին չորս քարտուղարների,—ամեն մի կոնֆերանսում հանում եյին), ինչպես նաև ընտրվեցի յերկրային կոնֆերանսի պատգամավոր։



Հետևյալ որն այսպիսի բովանդակությամբ հեռագիր եմ ստանում.—«Շրջկոնֆերանսի բոլշևիկյան ինքնաքննադատությանը հավանություն ենք տալիս։ Քարտուղարին հանելու մասին վորոշումը հաստատեցինք։ Վորպես քարտուղարի յերաշխավորում ենք Կոլդանովին,—կուսակցության անդամ է, աշխատում է վորպես Ոպարինի շրջկոմի քարտուղար։ Դրանիցին»։

Հետևյալ որը պլենում յեղավ, վորում պարզվեց, վոր Մալիշևը (կուս. շրջկոմ) կեղծ հեռագիր է տվել ԼԿՅԵՄ յերկրկոմին այն մասին, վոր ինձ հանել են։ Պլենումի անդամներին նա այդ հաղորդեց, վորպես յերկրկոմի վորոշում. իսկ հետո յերբ տղաներն սկսեցին խժդժություն բարձրացնել, ասաց, վոր յերկրկոմի վորոշումը չի կարելի փոխել և այլն։ Պլենումը վորոշեց (ճիշտ է, չքվեարկեցին) հավանություն տալ յերկրկոմի վորոշմանը։

Ինձ թվում է, վոր պլենումը չի կարող փոխել կոնֆերանսի վորոշումը (քեզ հասկանալի յե)։

Վորպես քարտուղար հաստատեցին Կոլդանովին, իսկ ինձ բոլոր տեղերից, նույնիսկ պլենումից հանեցին։

Այժմս յես գրեցի յերկրկոմ։ Հուզվում եմ, չեմ իմանում ինչ և ինչպես անել։

Գրիր, կարո՞ղ է արդյոք յերկրկոմը հաստատել այդպիսի վորոշումներ։

Կոմունիստական վողջույնով՝ Միխալեվ»։

Այսպիսով ուրեմն, նրան մասսաները ծափահարություններով ընտրեցին, վստահություն արտահայտեցին—և հանկարծ այդպիսի բովանդակության հեռագիր է ստացվում։

Յես, ստանալով այդ նամակը Ցեյտլինից, հետաքրքրվեցի այդ գործով։ Հեռագիր եմ տալիս.—«Խնդրում եմ հաղորդել Միխալեվին հանելու պատճառները»։ Հեռագիր տվեցի, վորպեսզի ինձ հաղորդեյին անմիջապես հանելու պատճառների մասին։ Բայց վոչ մի պատասխան։ Հետո արդեն, յեղած մատերիալների մեջ գտնում եմ նրանց շրջկոմի արձանագրությունից մի քաղվածք, ուր ասվում է, վոր լսեցին այսինչ բանի մասին և վորոշեցին այս—այս։

Ապա տեսեք, թե ինչ ստացվեց : Մարդուն նեղացրին : Նեղացրին վոչ մի պատճառով, առանց փոքրե առիթի : Կարող է պատահել՝ նեղացրին լավագույն բոլշևիկին, վորն արժանի չէր այդ բանին, նրա հետ բյուրոկրատորեն վարվեցին : Տըվյալ դեպքում շրջկոմը չի ղեկավարել, այլ շտամպներ խփելով է գրավել, — այդ գործին տանք իր անունը :

Ինքնաքննադատությունը վողջունում են, իսկ այնտեղ ինքնաքննադատությունն ընթացել է ուրիշ գծով : Պարտադիր չէ, վոր ինքնաքննադատությունը սպանի : Այ ձեզ ինքնաքըննադատության գործարար արտահայտություն : Ընտրեցին, վստահեցին, ծափահարություններով նստեցրին և ասացին— աշխատի՛ր, իսկ յերկրկոմն ըստ յերևույթին այլ ինքնաքննադատություն է վողջագուրում : Ըստ յերևույթին սովորել են անպայման մարդկանց հանել : Այդ փաստը վկայում է մասսաներից կտրված լինելու մասին :

## ՃԻՇՏ ԶՈՒԳՈՐԴԵԼ ՀԱՄՈԶՄԱՆ ՄԵԹՈԴԸ ՅԵՎ ՀԱՐԿԱԴՐՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Յես անցնում եմ հետևյալ հարցին—համոզման մեթոդի և հարկադրման մեթոդի մասին յեղած հարցերին : Մենք դեմ չենք հարկադրման և վարչարարական կարգով հուպ տալու մեթոդին : Մեր կազմակերպության անդամը պետք է կատարի այն, ինչ պահանջում է նրանից կազմակերպությունը, այլ վոչ թե այն, ինչ վոր ուզում է նրա ձախ վոտքը : Իսկ յեթե նա չի կատարում, մենք քննության ենք առնում, թե ինչու նա այդ չկատարեց : Վոմանց ամաչեցնում ենք, վոմանց հայհոյում, վոմանց դուրս ենք անում : Բայց մեզ մոտ դեռևս ճշտորեն չեն միավորվում համոզման մեթոդն ու հարկադրման մեթոդը : Մեզ մոտ, վորպես կանոն, ակտիվը սեղմում է կազմակերպության անդամների մասսային, փոխանակ բացատրական աշխատանք տանելու : Ճնշում են մի մարդու, վորը կռված է, վորին ճնշումով չես վախեցնի, և այնպիսի մարդու, վորը նոր է միայն յեկել ակտիվ աշխատանքի, վորն այնքան էլ փորձված չէ, վորի կաշին դեռ այնքան էլ չի մարզվել : Դա նշանակում է բոլորին մեխանիկորեն միևնույն մոտեցումը ցույց տալ : Ահա այդպիսի մեխանիկական մոտեցումը չափազանց վնասակար է : Յեթե դուք, յերիտասարդ, ակտիվ աշխատողին կոպտորեն հուպ եք տալիս, ապա դուք ձեր կոպտությամբ, ձեր վոչ-ըղձոն վերաբերմունքով կարող եք տրորել նրա շահագրգռությունը :

Սեղմել, հուպ տալ կարելի յե, բայց այդ արեք իրավացիորեն, զգոնությամբ, մեխանիկորեն մի մոտենաք բոլորին հավասարապես : Յեվ այդ սեղմումը,—վորպես գլխավոր պարտականություն,—միշտ պետք է համընթաց լինի այն բացատրության հետ, թե ինչու պետք է անել այսպես և վոչ ուրիշ կերպ : Բացատրել, թե ուր կհասնի այդ գործը, յեթե ուրիշ կերպ արվի : Դա պատասխան կլինի այն հարցին, թե ինչը դեպի ուր է տանում և ինչն է ինչից ծնունդ առնում :

Պետք է բացատրել խելացի, ուշադիր, խնամքով : Իսկ մեզ մոտ, կրկնում եմ, այդ ևս անբավարար է :

Ավելորդ վարչարարությանը պետք է վերջ տալ : Մենք դաստիարակչական կազմակերպություն ենք, և այդ դաստիարակչական կազմակերպության տեսակետից մենք պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնենք այն բանին, վորպեսզի սովորեցնենք մարդկանց աշխատել, գլուխ հանել հարցերից, յուրացնել ու ըմբռնել այդ հարցերը, սովորել աշխատել : Մենք պետք է սովորեցնենք նրանց աշխատանք կազմակերպել, սովորեցնենք պայքար տանել ամեն մի առանձին մարդու համար, այլ վոչ թե բղավենք, վոչ թե հրամաններ արձակենք և նրանց նկատմամբ վարչարարություն գործադրենք :

Արիստոկրատիզմը կոմյերիտմիության մեջ բնորոշվում է առջևորդ լինելու այն ցավով, վորը կա շարքային անդամակցական մասսայի նկատմամբ : Նա արտահայտվում է մասսաներին իրենց կախման մեջ պահելու, այլ վոչ թե իրեն մասսաներին իրենից կախման մեջ պահելու, այլ վոչ թե իրեն ձգում է իրեն մասսաներից բարձր պահելու, մասսաներից սովորել չկարողանալու և չցանկանալու խնդրում :

Այդպիսի մարդիկ կուսակցության հեղինակությունը վերագրում են իրենց հատկություններին:

Պահանջվում է կարողություն՝ սկզբունքայնորեն ղեկավարելու, սկզբունքայնորեն մոտենալու հարցին, մարդկանց փորձին.—չվազել առաջ, չկտրվել մասսաներից և դրանով իսկ չմնալ նաև հետևում, քարշ չգալ շարժման պոչից: Չպետք է լինել հանված վորոշման գերին: Իդեալիզացիայի չենթարկել աշխատանքի գոյություն ունեցող բյուրոկրատական ձևերն, ընդունված վորոշումները, այլ կարողանալ փոխել նրանց, հրաժարվել նրանցից, յեթե նրանք հաշվի չեն առնում յեղած փորձը, յերկար կանգ չառնել նրանց վրա, յեթե փոփոխվող պրակտիկան վերաճում է տվյալ վորոշումը, պահանջում է նրան զարգացնել, նոր վորոշման անցնել:

Մեր կոմյերիտական ղեկավար ապարատների բյուրոկրատիզմի ելեմենտներից մեկն էլ հանդիսանում է այն հանգամանքը, վոր նրանք իրենց աշխատանքը կազմակերպում են վորոշում պատրաստելու, հանելու և ընդհանուր գրվածքներ տալու ուղղությամբ, բայց միևնույն ժամանակ չեն դառնում նրա պրակտիկ կատարողները: Այստեղից էլ ստացվում է, վոր մարդկանց մի խումբ պատրաստում է վորոշումը (վորոշում հանելը դարձել է նրանց պրոֆեսիան), դրում է այն, ձևակերպվում է, պատրաստվում է հետևյալ վորոշման, իսկ ինքը կտրվում է այդ վորոշումը կյանքի մեջ կիրառելու պրակտիկայից և խուսափում է այդ վորոշմանը պատասխան տալուց:

«Մենք ամեն մի հարցի առթիվ արտահայտել ենք մեր վերաբերմունքը»: Գլխավորը—դա վերաբերմունք արտահայտելն է: Զարմանալի հավատ դեպի թուղթը:

Բյուրոկրատիզմը մեզ մոտ թաքստի մեջ է պահում մարդկային ռեզերվները: Նա մասսաների եներգիան, նախաձեռնությունն ու ինքնագործունեությունը կապում է և շղարշի տակ է պահում այն ռեզերվները, վորոնք այնքան շատ են մեր միության ընդերքներում: Հետևապես նա հնա-



րավորություն չի տալիս մարտի դուրս բերելու մեր բոլոր ունեցած կանխիկ ուժերը: Բյուրոկրատիզմը կապված է մանր բուրժուական ելեմենտների հետ՝ մեր կազմակերպության մեջ, դեպի գործն յեղած անկազմակերպ, տարերային մոտեցման հետ, ղեկավար կադրերի վոչ բավարար գրագիտության հետ:

Գործի հաջողությունը վորոշող գլխավոր խնդիրը,—դա ազատագրումն ու հայտնաբերումն է՝ բյուրոկրատիզմի կողմից թաքցված մարդկային ռեզերվների, մասսաների ստեղծագործության, նրանց ինքնագործունեության, եներգիայի, ու այդ ուժերի մարտի դուրս բերումը՝ սոցիալիստական շինարարության զանազան բնագավառների ամբողջ ընթացքի հետ․

Պահանջվում է փոխադարձ հսկողության սահմանում.— հսկողության յենթարկել մեր ղեկավար հիմնարկների աշխատանքի տեղերի պրակտիկան և ընդհակառակը—ղեկավար հիմնարկները պետք է ստուգեն տեղերի աշխատանքի պրակտիկան:

Ի՞նչ է նշանակում ազատագրել ռեզերվները: Դա նշանակում է համապետական ղեկավարման գործում առաջ քաշել նոր կազմակերպչական տաղանդներ, ոգնել նրանց՝ հասունանալու, դա նշանակում է վեր հանել դեպի պետության ղեկավարման գիրքերն աշխատավորության լրացուցիչ շերտեր, աշխատավորության նորանոր լայն խավեր:

Հեգնանքով է հնչում այն համոզումը, թե մեզ մոտ մարդիկ չկան: Մեզ մոտ մարդիկ քողի տակ են պահվում բյուրոկրատիզմի կողմից: Պահանջվում է կարողություն նրանց հայտաբերելու համար:

Պետք է կարողանալ համոզել հետ մնացածներին, կարողանալ աշխատել նրանց մեջ և վոչ թե նրանցից անջատվել մտացածին, ոդայամիտ «ձախ» լոզունգներով:

Հարկավոր է վոչնչացնել բարձր կանգնած կոմիտեների անդամների համար յեղած պատասխանատվությունը մեղ-

մացնելու պրակտիկան, վոչնչացնել պոլեմիկայի վոչ ընկերական մեթոդները: Ինքնաքննադատությունն ընկած է դաստիարակչական հենց եյության մեջ: Ամեն մի մասսայական նախաձեռնության հիմքը հանդիսանում է տարակերպությունն ու բազմակողմանիությունը: Հետևապես սխալ կլիներ նրա ղեկավարման մեջ յելակետ ունենալ այն դրույթը, թե ամեն ինչ պետք է բերել կայուն վիճակի, միևնույն բանը տարածել բոլորի վրա և ամեն ինչի վրա: Դա նշանակում է փորձ անել՝ շաբլոն կիրառելու բոլորի նկատմամբ, փորձ անել վերից ճնշելու, սառեցնելու մասսաների ստեղծագործական նախաձեռնությունը:

Մեզ պետք է միասնություն հիմնական, եյական հարցում: Այդ բանին մենք հասնում ենք գործի բազմակողմանի մոտեցում ցույց տալու, նրա իրագործման, հսկողության և կոնկրետ ղեկավարության միջոցների մեջ: Այդ բանը մեզ, վերջին հաշվով, ավելի մեծ եներգիա, աշխատանքի ավելի մեծ թափ կտա ներքևից:

Աշխատանքի և ղեկավարության մեթոդների տարակերպությունը, մասսաների նախաձեռնությունը հաջողության գրավականն է հանդիսանում ընդհանուր, միասնական նպատակին հասնելու գործում:

## ԱԿՏԻՎԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԵՄՔԻ ՄԱՍԻՆ

Ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել ակտիվի բարոյական դեմքի հարցի վրա:

Մեզ մոտ շատ հաճախ կոլեկտիվ հաջողությունները վերագրում են պերսոնալ կերպով իրենց: Մարդիկ արդեն առանձնացնում են ղեկավար միջուկն իրենցից, իրենց դնում են կոլեկտիվից վեր: Այստեղից և գալիս է մեծամտությունը, սնապարծությունը, գոռոզությունը, ամբարտավանությունը: Այդ տեսակետից ավելորդ չէ այստեղ հիշեցնել ձեզ Վլադիմիր Իլյիչի բարոյական դեմքի առանձին գծերի մասին, վորոնց մասին ասում է ընկ. Ստալինը, ընդգծելով, վոր առաջին հերթին, Լենինից, մենք ձեզ հետ միասին, շատ բան պետք է սովորենք, վորովհետև Լենինը բարձրագույն տիպի ղեկավար եր, վորը չգիտեր սարսափը պայքարի մեջ և համարձակորեն կուսակցությանն առաջ եր տանում ռուսական հեղափոխական շարժման անհարթ և նոր ճանապարհով, Լենինն անվախ քննադատ եր:

Ամենագլխավորը քննադատության մեջ— դա օբյեկտիվ լինելն է մարդկանց հանդեպ և իր վերաբերմամբ, իր սեփական թերությունների հետ ցածր կարգի համաձայնություններ չկնքելը, իր թերություններն իմանալու ձգտումը: Ահա այդ բանն է, վոր մեզ մոտ չկա: Ինչպես առածն է ասում—. «ուրիշի աչքի շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի գերանը՝ վոչ»: Չե՞ վոր այդ փաստ է: Անվախ քննադատ, վորը կարողանար պարզ, վորոշակի, համարձակորեն գրել ամենախճճված հարցերի մասին, վորն ունենար պարզություն և համեստություն, չնկատվելու ձգտում, աչքի չխփելու, իրեն դիրքը ցույց չտալու ձգտում և չգործածեր գլխապտույտ ժեստեր և եֆեկտային ֆրազներ,— ահա մի ամբողջական ծրագիր կոմյերիտական ակտիվիստի համար՝ մեր աշխատանքում, ընդ վորում շատ պարզ, դժվարին և լուրջ ծրագիր: Պետք է իրեն մեջ ընդունակություն մշակել լինելու հասարակ, աննկատ, աչքի չխփել, չընդգծել իր բարձր վիճակը, լինել անվախ քննադատ. համարձակորեն նայել դժվարությանը, համարձակորեն դեմ գնալ դեպի նրան, լինել համեստ:

## ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Յեզրափակման մեջ, ընկերներ, յես պետք է ասեմ. վոր անցած ամբողջ աշխատանքի և ներկա պայքարի հետևանքով ստեղծվել են բոլոր նախադրյալներն այն բանի, վորպեսզի մենք վճռենք անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցելու մասին յեղած հարցը: Մենք արդեն մոտ ենք այդ նպատակին: Այն, ինչ վոր յերբեմն շատ ու շատ սերունդների համար բավականին հեռավոր բան եր թվում, մեզ համար դարձել է այսօրվա պրակտիկա:

Բայց հարկավոր է պարզորեն տեսնել, վոր այն ճանապարհը, վորը տանում է մեզ մեր վերջնական նպատակին, ընկած է դժվարությունների կայուն կերպով հաղթահարելու միջով, դասակարգային պայքարի միջով, բանվոր դասակարգի դիկտատուրան ուժեղացնելու միջով: 2-րդ հնգամյակում մեր առաջ դրված հիմնական տնտեսական խնդիրն է.— ժողովրդական վողջ տնտեսության սոցիալիստական վերակառուցման ավարտումը, անդասակարգ հասարակության նյութական-տեխնիկական հիմունքի զարգացումը:

Այդ խնդրի համաշխարհային պատմական նշանակությունը վիթխարի յէ: Այդ խնդրի կատարման փորձը համաշխարհային պրոլետարիատի համար դպրոց է հանդիսանում, ամբողջ աշխարհի ճնշվածների և շահագործվածների համար ձգող փարոս է հանդիսանում: Այդ մասին ամենից վառ խոսում են հենց 2-րդ հնգամյակի ցուցանիշները:

Մեքենաշինարարությունը կաճի 3 և կես անգամ, ավտոմոբիլների արտադրությունը— 6 անգամ: Յուրացվելու յե նոր արտադրությունների մի ամբողջ շարք—կառուցվելու յեն նոր ինդուստրիալ գիգանտներ, ավելի խոշորները, քան տրակտորային գործարանները, քան Ուրալի մեքենաշինարարական գործարանը:

Ելեկտրոեներգիայի արտադրությունը կմեծանա ավելի քան հինգ անգամ, ածուխը— 2 և կես անգամ, նավթինը— 2 և կես անգամ, մետալուրգիայինը— 2 և կես անգամ:

2-րդ հնգամյակում վիթխարի զարգացում կստանան քիմիան, ավիացիան: Խորհրդային Միության ամենահետամնաց ծայրերում և անկյուններում սկսում են կառուցվել տասնյակ հազարավոր նոր յերկաթուղային մագիստրալներ:

Գյուղատնտեսության մեջ ավարտվելու յե տեխնիկական վերակառուցումը,— սոցիալիստական գյուղատնտեսության համար բացվում են նոր, մինչև այժմս չտեսնված հնարավորություններ՝ բարձրացնելու համար բերքատվությունը,



մսի, կաթի ստացումը և այլն: Մի հոգու սպառողական նորման կմեծանա 2—3 անգամ:

Այդպիսիք են թվանշանները ու փաստերը, վորոնք մեր յերկիրը ձգող փարոս են դարձնում համաշխարհային պրոլետարիատի համար:

2-րդ հնգամյակը խոշոր չափով կատարելու յեն նոր դպրոցի մարդիկ, նոր կուլտուրայի մարդիկ,—Հոկտեմբերյան հեղափոխության սերունդը:

Մեր առաջ խնդիր է դրված— առավել մեծ չափով ուժեղացնել մեր աշխատանքի տեմպերը, բարելավել նրա վորակը: Մենք հսկայական փորձ ենք կուտակել, մենք շատ բան ենք սովորել սոցիալիզմի համար տարվող պայքարում: Այժմս մենք պետք է պայքար տանենք աշխատանքի բարձր վորակի համար, այժմս դա մեզ հատուկ է վոչ միայն մեր տեխնիկական պատրաստականության տեսակետից, այլև շնորհիվ նրա, վոր 2-րդ հնգամյակն ավելի մեծ չափով է լայնացնում նյութական բազան՝ միավորելու համար ամեն մի աշխատողի անձնական շահերն ու հեռանկարները պրոլետարական պետության շահերի հետ:

Ընկերներ, մենք չենք խոսում վերացականորեն նոր մարդի մասին: Վորպեսզի ստեղծել հետագա մարդու այդ տիպը, մենք, մարքսիստ-մատերիալիստներս, հենց մեզ և ուրիշներին անմիջականորեն մասնակից ենք անում հեղափոխական վերափոխող գործունեության մեջ, և միայն այդ վերափոխող գործունեության մեջ մենք կձևավորենք այդ նոր մարդուն: Չի կարելի մտածել,— ինչպես այդ ընդունված է կոմյերիտմիության առանձին ողակներում,—վոր մենք, քանի վոր Հոկտեմբերի սերունդն ենք, ապա այդ վերափոխումը մեզ մոտ կկատարվի ինքնահոսի կարգով, վոր կարիք չկա մեզ հաղթահարելու կապիտալիզմի մնացորդները՝ մեր գիտակցության մեջ: Վո՛չ, ընկերներ: Անհրաժեշտ է յերիտասարդության միջավայրում յեղած բուրժուական հասարակության

մնացորդները հաղթահարել կազմակերպված ձևով, գիտակցորեն, ներազդելու յեղանակով։ — Հարկավոր է կոչում, սիստեմատիկ դաստիարակչական աշխատանք, ընդ որում չի կարելի ասել, վոր այդ մնացորդները հատուկ են միայն գյուղից դուրս յեկածներին։ Ճիշտ չեն նրանք, ովքեր աջ ու ձախ և ամենուր ասում են.— «Հարկավոր է բացատրել, բացատրել, բացատրել»։ Դա հարցի միակողմանի դրվածքն է։ Պետք է և բացատրել, և կազմակերպել մեր աճող սերնդին, կատարելու համար իր առաջ դրված խնդիրները, կապակցելով մեր վողջ աշխատանքը պրոպագանդի և բացատրական աշխատանքի հետ։ Վորքան շատ մենք հեռանանք հին կապիտալիստական անցյալից, այնքան շատ մենք կնվաճենք բոլոր այն արժեքավոր բաները, ինչ վոր կա նկարչության մեջ, յերաժշտության մեջ, արվեստի մեջ, գիտությունների մեջ, այնքան մեծ չափով մենք մեր առաջ կդնենք աճող սերնդի ինդուստրիալ-տեխնիկական դաստիարակության խնդիրը։ Վորպես մինիմում, մենք պետք է իմանանք ելեկտրականությունը, մեքենաների հիմնական սկզբունքները, կարողանանք ղեկավարել ավտոն։

Թույլ տվեք համոզմունք հայտնել այն մասին, վոր մենք ձեզ հետ հաջողությամբ կվերջացնենք հնգամյակի վերջին, 4-րդ, ավարտական տարին, մեր կուսակցությանը ցույց կտանք ե՛լ ավելի մեծ ոգնություն՝ 1932 թվի ստուգիչ թվերի կատարման գործում, ինչպես այդ արել ենք մինչև այժմս։

Թույլ տվեք հույս հայտնելու, վոր լենինյան կոմյերիտմիությունը, անխզելիորեն ամրացնելով իր կապերը բոլշևիկյան կուսակցության հետ, իր առջև ունենալով Լենինի ուսմունքը, գլխավորությամբ Լենինի լավագույն աշակերտի,— Ստալինի, հաջողությամբ կպայքարի 2-րդ հնգամյակի պատմական խնդիրները կատարելու համար։ (Բուռն ովացիա, «ուռա» աղաղակներ։

---



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերկու հնգամյակների սահմանագծում . . . . . . 4
Փոխվել է յերկրի դեմքը . . . . . . . . . . . 9
Աճում է բանվորների և աշխատավորական մասսաների բարեկեցությունը . . . . . . . . . . 24
Յերկու սիստեմների պայքարը . . . . . . . . . 30
Ինչի՞ համար պայքարեցինք։ Մեր դժվարությունները, նրանց բնույթը . . . . . . . . . . 38

## ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԵԶ ՄՈՏ ՅԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Աճող սերնդի դաստիարակման պայմանները ԽՍՀՄ-ում 48
Սոցմրցումն ու մեր խնդիրները . . . . . . . 65
Առանց աշխատանքի բարձր արտադրողականության չկա սոցիալիզմ . . . . . . . . . . . . . 67
Ճանաչել մեր աշխատանքի հերոսներին . . . . . 68
Հարվածայինին ամենալավագույն, ամենապատվավոր տեղը կյանքում . . . . . . . . . . . . 70
Խորհրդային դեմոկրատիայի նոր, ավելի բարձր աստիճանները . . . . . . . . . . . . . 71
Չդիմազրկել սոցմրցությունը . . . . . . . . 72
Մեծարել հարվածային բրիգադի բրիգադավարին . . 76
Ավելի քիչ ստանդարտ պայմանագրեր, ավելի շատ կենդանի ղեկավարություն . . . . . . . . . 79
«Բոլոր հարվածայիններին միատեսակ ժամացույցներ»— մոտեցման դեմ . . . . . . . . . . . . 82
Հանուն հարվածային բրիգադների աշխատանքի վորակի 86
Ճիշտ կազմակերպել արտադրությունը . . . . . 90
Մարտի հանել մասսաների ստեղծարար ուժերը . 95

## ԿԵՆՑԱՂԻ ՅԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Չբողոքել կեղտոտ բարաքի մասին, այլ մաքրել . . 98
Մասսաներին չհագեցնել կոնկրետ գործով . . . 100

2409

Բանվորին լավ կերակրելը պատվի գործ է . . . . 102
Զարհամարհել բանվորական կենցաղի «մանրուքները» 103
Զբաղվել բաղնիքներով և բնակարաններով . . . . 105
Տվեք բանվոր յերիտասարդությանը լավ յերաժշտություն . . . . . . . . . . . . . . 106

## ԿԱԴՐԵՐԻ ՊՐՈԲԼԵՄԸ

Դառնալ պրոլետարական ինտելիգենցիայի շկոլա . . 167
Սովորելու գնալ պրոլետուսանողության մոտ . . 112
Խնամքով և ուշադրությամբ շրջապատել մասնագետներին . . . . . . . . . . . . 115
Չտարվել առերևույթ կուլտուրայով . . . . . . 116
Ընդհանրությունը և ֆորմալիզմը գլխավոր չարիքն են 118

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՍԻՆ

Ավելի մեծ ուշադրություն յուրաքանչյուր կոմյերիտականին . . . . . . . . . . . . . . 122
Չմտնել վերացական բնագավառները, այլ հիմնվել շարժման փորձի վրա . . . . . . . . . . . 125
Կարողանալ գտնել գլխավորը և նրան յենթարկել ամբողջ աշխատանքը . . . . . . . . . . . 127
Հանուն ինքնաքննադատության հանդգնության և սկզբունքայնության . . . . . . . . . . . 128
Ճիշտ զուգորդել համոզման մեթոդը և հարկադրման մեթոդը . . . . . . . . . . . . . . . 132
Ակտիվի բարոյական դեմքի մասին . . . . . . . 136
Եզրափակում . . . . . . . . . . . . . 137

Հայ. ՍՍՀ Պետ. Հանր. Գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ – ССРА
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

Սրբագրեց Ա. Տերմկրտչյան

Հանձնված է տպագրության 82 օգոստոսի 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 23 սեպտ. 1932 թ.
Ստ. ձև № A.

Պետհրատի տպարան Գլավլիտ 7654 (բ) Պատվեր 2795 Տիրաժ 6600

ՀՀ Ազգային գրադարան
NL0191446

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

**Косарев**
4-ый завершающий год 5-ки.
и задачи комсомола
Издательство Ц К К П(б) А
Партиздат Эривань 1932 г.

3КСМ5
4-75